

Pineapple

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՒԵՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ե. ՏԱՐԻ 1969 ՅՈՒՆԻՍԿՈՒՄ ԹԻՒՆ

© digitized by A. K. K. ©

پاكين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد ارتين كارنيك قزائجيان

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

բ ա գ ի ն
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՆՈՒԹՅԱՆ
 ԵՒ ԱՔԱՆՅՈՒՄԻ

ՎԱՐՁԷ ՆՍՐԱԳԻՐ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 ՆՍՐԱԳԻՐ
 Պ. ՍՆԱԳԵԱՆ

ՆՍՐԱԳՐՈՒԹՅԱՆ
 ԱՆԴԱՄՆԵՐ
 Յ. ԳԵՂԱՐԳ
 Տ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
 Ն. ՊԼՐԹԵՆԵԱՆ
 Ժ. ԱԹՔԱՐԵԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆՊԱՄՆԵՐԵՆ
 † ԻԳ. ՊՅՑԱԶԵԱՆ

Խմբագրութեամբ հասցէ
G. SASSOUNI
 Rue Sélim Boustani,
 Beyrouth-Liban

Հեռագրային թիւ 296896

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԵՆ

- ՍՕՍԵԱՑ ՏՂԱՆ
- Ա. ԵՐԿՍԹ
- Բ. ԿՈՒՆԵԱՆ
- Ն. ԶԱՐԵՈՒՏԵԱՆ
- Յ. ՇԻՐԱԶ
- Պ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ
- Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
- Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
- Հ. ԽԱԼԱԹԵԱՆ
- Պ. Գ.
- Վ. ՆԱԿԱՍԱՐԳԵԱՆ
- Պ. Ս.
-
- ՆՇՄԱՐՆԵՐ
- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Քաղաք

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Ը. ՅԱՐԻ, ԹԻՒ Յ

Ե Ո Ւ Ն Ի Ս 1969

ԳՆՈՐՈՒՄ

ՍՈՍԵՍ ՏՐԱՆ

“ՏՈՒՆԻ ՀԱՅ”

- Տիկին Սիրանին քով՝ ձեր տանը մէջ եղածի պէս պիտի ըլլաք, միևնույն Քեաթիպեան՝, - ըսաւ Օհան՝ իր ակնարկը Քեաթիպեանէն տանտիրուհիին ու տանտիրուհիէն Քեաթիպեանին ուղղելով:

- Շա՛տ լաւ, - յարեց Քեաթիպեան՝ դիտելէ ետք սենեակը, բայց իր հայնացքը տեւապէս ուղղած տանտիրուհիին, որուն սլացիկ մարմինը՝ սեղմուած մոխրագոյն շրջազետին մէջ, ինչպէս եւ նշածն ու սեւ աչքերը առաջին իսկ բոպէին գրաւեց էին իր ուշադրութիւնը:

- Ձեռքիս տակ սենեակ շատ կայ, բայց դիտեմ, չէ՞, ուսում առած, օր տեսած մարդ էք... Ձեզի անա՛նկ տուն մը, որ թէ՛ մաքուր է եւ թէ՛ պատուաւոր, - վրայ բերաւ Օհան՝ վերջին բառը շեշտելով եւ կրկին նայելով տանտիրուհիին:

- Հայու տուն է վերջապէս... Հարկա՛ւ... Եթէ պէտք ըլլայ, ուրիշ կարասի ալ կու տանք, - քրտուց տանտէրը, որ կանգնիւ էր սենեակին մէջուեզը՝ թեւերը կախ եւ միամիտ ժպիտ մը չրթնորուն:

- Միևնույն Քեաթիպեանը ոտտոթոցի է, - տեւցուց Օհան՝ ձեռքը բանալով օդին մէջ եւ վարձակալը ներկայացնելու ցանկութեամբ:

- Հա՞, - հետաքրքրուեցաւ տանտիրուհիին, - Փիլիպէի մէջ ուստոթոցիներ շատ կան: Տէօվէթեանները կը ճանչնաք թերեւս:

- Անշուշտ, - պատասխանեց Քեաթիպեան:
- Մինանեաննե՞րը:
- Միեւնոյն թաղէն ենք:
- Միւսիւ Լեւոնը, - ընդմիջեց Օհան, - դողթին առաջին տարին Սթարա Զակորա է գացեր Հանգուցեալ մօրը՝ տիկին... - եւ նայեցաւ Քեաթիպեանին, որպէսզի լրացնէ Հանգուցեալին անունը:
- Հայկանո՛յշ, - աւելցուց Քեաթիպեան:
- Այո՛, Հանգուցեալ մօրը տիկին Հայկանոյշին հետ: Բայց վերջերս մահացեր է... Հանգուցեալ մայրը...:
- Յաւակցութեաննե՛րս, կ'երեւի հիւանդացաւ, - ընդմիջեց տանտիրուհին:
- Այո՛:
- Ուսումնական մարդու համար Սթարա Զակորա ապրիլը դժուար է անշուշտ, - շարունակեց Օհան, - երեք օր է միւսիւ Քեաթիպեանը փոխադրուած է այստեղ: Յիշիպէի մէջ ո՛ւր դառնաս հայու կը հանդիպիս... Մտաւորականներ շատ կան:
- Անշուշտ, մեր Յիշիպէն Սոփիայէն ալ լաւ է: Փառաւոր եկեղեցի ունինք, քառասուն պատարագ, միութիւններ, հանդէս ու երեկոյթ ամէն շաբթու, - ձայնակցեցաւ տանտիրուհին:
- Միւսիւ Քեաթիպեանը դաշնակազար է, - աւելցուց Օհան:
- Իրա՛ւ:
- Այո՛. եւ լա՛ւ դաշնակազար: Յարմար պործ մըն ալ կը ճարենք: Չեղա՛ւ, միւսիւ Քեաթիպեանը Չուրի պէս Փրանսիոն կը խօսի ... 8-10 աշակերտ՝ ամսականը ծոնիին վրայ է:
- Ես մտադրութիւն չունիմ մասնաւոր դասեր տալու: Դաշնակը զիս լիուլի կը զոհացնէ, - ճշդեց Քեաթիպեան:
- Ուրեմն ամէն բան կարգին է, տիկին Սիրան, - ըսաւ Օհան, - սենեակի զինի մասին խօսած եմ միւսիւ Լեւոնին:
- Այո՛, - հաստատեց Լեւոն, - երթամ՝ բերեմ իրերս: Բայց նախ կանխավճար մը ընեմ:
- Պէտք չկա՛յ, - ձայնեց Օհան կտրուկ շեշտով մը, - Օհանին խօսքը դրամ է: Կ'երթանք միասին: Ժամը արդէն 12-ն է: կը ճաշենք եւ յետոյ կը բերենք իրերը:
- Եւ դուրս գալով սենեակէն, երբ կ'իջնէին սանդուխէն, Օհան երկու քայլ ետ մնալով՝
- Կը բռնէ՛, - շնչեց՝ ծոնելով դէպի Սիրանը եւ ակնարկելով Քեաթիպեանին:
- Եւ, աստիճան մը եւս իջնելէ ետք՝
- Երկու հարիւր կ'ուզեմ, - աւելցուց:
- Շա՛տ է, - առարկեց Սիրան՝ նոյնպէս շնչուն:
- Դո՛ւն դիտես, եթէ շտապ՝ կ'աւերեմ գործը:
- Երբ Քեաթիպեան ու Օհան դուրս ելան տունէն եւ դարձան փողոցին անկիւնէն.
- Սենեակը լաւ, տանտիրուհին աւելի՛ լաւ, տնանկ չէ՞, միւսիւ Քեաթիպեան, - յարեց Օհան ժպտելով, - վրան կը դնէ՞ք, քառասունը

հինգնոց է, բայց տասը աղջիկ կ'արժէ... պատուաւոր կին է, բայց մտա-
ւորականներէ կ'ախորժի:

Ետոյ, երկու քայլ հասանելով.

- Ես ձեզ լաւ տուն տարի: Աղջիկ մըն ալ ունի՝ ճէյրա՛ն՝ մօրը պէս.
բայց անկէ խեղ չկայ, բարեկամ ունի ... Թէեւ, Տիրանը մօրը մանածը
ծախած տղայ է ... զուգ մօրը նայեցէք...

- Ամուսինը ի՞նչ գործ կ'ընէ, - Լեւոն փորձեց քաջցնել իր հետա-
քրքրութիւնը:

- Գո՛րծս ո՛րն է ... ի՛նչ ամուսին, միւսիւ ֆեաթիպեան, Գիրգորը
թէլը հատած մազոգ է, - զարձաւ Լեւոնին, եւ, թեւովը հպելով անոր
թեւին, - ձմեռը տաք տեղ պիտի պտուկիք ... ես մարդու արարած եմ,
միւսիւ ֆեաթիպեան ... հը՛ր ... Ամէնքն ալ ակոյսիս զարկած եմ ... Դուք
իմ ըսածին նայեցէք ... միայն թէ ձեռքերնիդ քէլ մը բաց բռնեցէք եւ
աչքերնիդ՝ փլէ՛ք ... Յարմար վայրկեանը եկա՞ւ, պիտի չվարանիք... Ա-
տանկ էրիկ-մարդէ կ'ախորժին կիները ... Ըն-մըք կ'ընեն, բայց...: Իմ
հոգիս չ'ուզե՛ր ... Ամէն տեսնելու ներսս կ'այրի...: Հոս Օհանին ո՛վ
կարեւորութիւն կու տայ ... Դուք դիս Պոլիս տեսնելու էիք ... Օհանը
հոն Օհան էր ... Եթէ ես ձեզի պէս մտաւորական ըլլայի ... ը՛հը՛...: Ես
ձեզի ի՛նչ կ'ըսեմ ... Օհան ձիտէ ո՛րի ի՛նչ պէտք է ... Զգէ որ ոտոտ-
թոցիները էփուն կ'ըլլան...

Ետոյ կանգ առաւ յանկարծ եւ, նայելով Լեւոնին.

- Հարկաւ դուք ալ պէտք եղածին պէս պիտի վարձատրէք դիս, -
ըսաւ՝ երկու ձեռքերը քսելով իրարու:



Ոտազ ու միապաղա՛ղ զիւեր էր: Ու երկինքը՝ աստղածորած: Կար-
ծէք բոլոր փոսուտաները թռե՛ր, բարձրացեր էին վեր եւ փակչեր՝ երկըն-
գին:

Լեւոն բացաւ լայն պատուհանը եւ պահ մը մնաց մտածկոտ: Ակ-
նարկը կը գրկէր քաղաքին մինչեւ հեռակայ ծայրերը:

Նրեք օրէ ի վեր փոխադրուած էր այդ սենեակը, որ բնակութեան
համար անհրաժեշտ բոլոր պայմանները կ'ընծայէր իրեն: Տունը ազմուկ
չունէր:

Առտուն, շատ կանուխ, խեղդուկ ու զոպուած հազը կը լսուէր Վեր-
գոր աղային, - ինչպէս կոչած էր զայն Օհան՝ անոր ներկայութեան, -
այդ «խալիկ մարդը», որ կամաւոր լուութիւն մը կը պտըտցնէր իր հետ:
Փոքրիկ հասակ մը ունէր: Եւ աժդոյն ու նիւար դէմք մը, որուն վրայ
տափակ ու կոր քիթ մըն էր ցցուած՝ խորն ինկած աչքերուն միջեւ:

Աւելի ետք, սանդուխին աստիճաններուն վրայ լսելի կ'ըլլար երկրորդ
էջք մը՝ քիչ մը աւելի ճոնչուն եւ աւելի՛ աշխոյժ: Սիրա՛նն էր: Ամէնէն
ետք՝ թեթեւ, հազիւ լսելի էջք մը: Իսկ կէս ժամ ետք՝ փողոցի դրան
երկրորդ ճոնչոցը: Գիրգորէն ետք մեկնած կ'ըլլար նաեւ տան աղջիկը՝ Ա-
րաքո՛ի:

Լեւոն գիտէր, թէ ինք ու տանտիրուհին այլեւս միմեկ են: Տան մէջ

տիրող անտոմոր լուսթիւնը, Գիրգորին անճար ու համակերպեալ՝ նոյնիսկ կամովին հրաժարեալ գոյութիւնը, դեռ առաջին օրէն Արաքսիին իրեն հանդէպ ցոյց տուած անտարբերութիւնը, ինչպէս եւ, այդ երկուքին հակադիր, Սիրանի սիրալիր վերաբերումը, բայց մանաւանդ անոր ձիւնաթոյր մարմինը, կարապի վիզն ու պերճ դուլեր Լեւոնի մէջ ստեղծեր էին տարտամ, այլեւ անհանդարտ հոգեվիճակ մը:

Ան պահ մը զզջաց այդտեղ փոխազրուած ըլլալուն, Իրեն անհրաժեշտ էր մեկուսի ու խաղաղ անկիւն մը, ուր ոչինչ գար խանգարելու իր մենութիւնը: Բայց մանաւանդ՝ ո՛չ մէկ նայուածք կամ շքերան չխողէր իր հոգին: Ապրէր ինքն իր հետ եւ ինքն իրեն համար: Իր անընտել, երկչոտ, նոյնիսկ քիչ մը վայրի խառնուածքը զինք կը մղէր դէպի մենաւոր անկիւններ: Ծորհեցաւ առաւօտ մը հաւաքել իրերն ու հեռանալ: Ո՛ւր՝ ի՛նք ալ չէր պիտի: Բայց կը զգար, թէ այդ ցանկութիւնը հզօր էր իր մէջ: Յանկութիւնը՝ հեռանալու շրջապատէն, մօտիկ թէ հեռաւոր անձերէն, յիշատակներէն, տօբեայէն: Կ'ուզէր մեկնիլ՝ թողո՞ղ ու լքելով ամէն ինչ, որ կեանքին էր կապած զինք: Դժգոհ՝ ինքն իրմէ, որ իր անձին հանդէպ անխառնութիւնն կը ընէր սպառնալար, կը ցանկար ու կը կարծէր կարծեալ ըլլալ ո՛ւրիշ մը, որ ոչինչով նմանէր իրեն...: Բայց այս կամ ուրիշ տուն մը՝ ի՛նչ է տարբերութիւնը, մտածեց: Կը զգար, միանգամայն, թէ իրեն հասնելի բան մը ունէր այս երգիքը:

Ակնարկը միշտ սեւեռած հեռուն՝ խաւարին, ուր լոյսեր կը պլլալային, մտաբերեց Սիրանին սլացիկ հասակը: Որքա՛ն խոռովիչ էին մանաւանդ անոր սեւ ու նշածեւ աչքերը: Օրուան ընթացքին իր ու անոր առանձնութիւնը տան մէջ: Յուսադրուեցաւ: Բայց եւ տարակուսեցաւ: Այդ չքե՛ղ կիներ՝ անմատչելի աշտարակի մը նման...: Եւ իր ցանկութեան ու վարանոսին միջեւ տարբերք, ինք իր դէմ ընդվզեցաւ: Փակեց պատուհանը եւ մտաւ անկողին:

Առտուն, երբ արթնեցաւ, արեւը արդէն բարձրացած եւ ողողած էր տախտակամածը ծածկող կապերտը: Լեւոն կը մնար անկողնին մէջ՝ կրօնակի վրայ պոսկած եւ թեւերը խաշածեալ զանկին ու բարձին միջեւ: Մտաբերեց իր անցեալը, որ շարժապատկերի մը նման սահեցաւ իր երեւակայութեանը առջեւէն: Իրեն հարազատ, արիւնով իրեն մերձ ոչ ոք ունէր այժմ: Անդամներէն մեծ մասը իրենց ընտանիքին, որ Ռոտտոսթոյի ամէնէն ունեւորներէն էր եղած, զոհուած էին Ապրիլեան Եղեռնին: Վերադարձեր էին մայրը, ինք, կրտսեր քոյրը եւ մօրաքոյրը, որ խնթեցեք էր՝ հազիւ ռոք դրած տունէն ներս: Գոյրը մեռած էր տարի մը ետք՝ անպաաներէն իրեն հետ բերած մղձաւանջէ մը հարուածուած: Իսկ երկու տարի ետք մայրն ու ինք ստիպուէր էին կրկին խոյս տալ եւ ապաստանել Պուլկարիս:

Մտաբերեց նախապատերազմեան շրջանն իր կեանքին: Պատանեկութիւնը՝ անհոգ ու անփոյթ: Փաղաքչահմերուն ներքեւ իր հօրը՝ Տիրան Քեաթիպեանին, որ, օժտուած ըլլալով ձիւրքերով եւ ընդո՞ին առաւելութիւններով, առանց համալսարանի ու առանց վկայականի, ինքնաշխատութեամբ օժտուած էր իրաւարանական լայն պաշարով մը: Պերճախօս էր: Զարտար: Աննկուն: Եւ՝ ինքնազստահ՝ իր ձեռնարկներուն ու քայլերուն մէջ: «Քեաթիպեան էՖէնտի», - այս երկու բառերը տեւապէս քօզուած էին իրարու: «Աղա՛ն նուազ էր իր անունին քով: Իսկ «սպարտն»ը կամ

նորինսկ զտխարը անհամապատասխան կը թուէին անոր փնես-նէին, որ սուկէ նորը շղթայով մը կցուած էր իր բաճկոնակին, ուղղաձիգ քալուածքին, միշտ կաղապարեալ, Փէսին, զաւազանին՝ որուն արծաթեայ ու կեռ կոթը անցուցած կ'ըլլար թեւին, բայց մանաւանդ իր զթլմէննաչնե-րուն, որոնցմով կը փոխարինէր, տունէն մինչեւ գրասենեակ, աջէն մը ձախէն, ժպտուն, երկչոտ կամ յարգալիւր կերպով իրեն ժառուցուած բարեւոյցը: Քեաթիպեան էֆէնտի մտաւորականի իր հանգամանքին հետ չէր հաշտեցնէր մոլեռանդ ու երկիւղած կրօնասիրութիւնը: Թէեւ բնաւ չէր արտայայտուեր այդ մասին: Իսկ Հայ եկեղեցին իրեն համար «հայ ժողովուրդի զարաւոր գոյութեան ամէնէն ամուր բերդն էր: Ազգային գոյութեան միակ կուսանը»: Ամէն կիրակի եկեղեցիէն ներս իր տեղը ունէր: Ըլլալով հիացող մը գրտարբին՝ կ'երթար կը կանգնէր՝ «իրբեւ անտանն հայ եւ իրբեւ համեստ զրիստոնեայ մտնելով մեր Առաքելական եկեղեցիէն ներս»: Եւ այդ՝ «մեր»ը կ'արտասանէր խորո՛ւնի սիրով մը: Արտակարգ տկարութիւն մը ունէր հայ գիրքի հանդէպ: Իր ծովահայեաց եւ շոր յարկանի տանը մէջ, - զոր ինք կառուցանել տուած էր Ռոտտսթոյի լաւագոյն թաղին մէջ, եւ որուն պարտեղը յարկ առ յարկ կ'իջնէր մինչեւ ծովափ, - առանձին սենեակ մըն էր յատկացուցած դիրքերու, անշատ-անշատ սպա-կեղարաններու մէջ շարելով պատմական, բանասիրական, գրական երկե-րը: Հայ մատենագրութիւնը իր մասնաւոր տեղը ունէր: Իր պատուելի տեղը:

Քեաթիպեան էֆէնտի գիրքը, վայելած համբաւն ու յարգանքը, ինչպէս նաեւ հարստութիւնը իր մէջ շնչուած էին ցանկութիւնը ունենալու մանչ գաւազ մը, որ արժանաւոր յաջորդն ըլլար իր, օժտուած ըլլար ընդունակութիւններով եւ արժանի, իր կարգին, կրնչու անուն մը եւ մակա-նուն մը, որ կու գար իր հօրմէն, - պաշ-ենաթիւլ Լեւոն էֆէնտիէն:

Բայց Քեաթիպեան էֆէնտի բախտաւոր եղած չէր այդ տեսակէտէն: Լեւոն տեսող մանկութիւն մըն էր ունեցած, ինչպէս եւ՝ ազազուն պատա-նեկութիւն մը: Թոյլ էր, անկամ, անընդունակ ու քմահաճ: Հայրը գինք Պոլիս ուղարկեւ էր «Պէրպլեբեան էֆէնտիին շունչին տակ դաստիարակ-ւելու համար»: Թէեւ կը զգար, թէ Լեւոն չէ՛ր այն, զոր ինք կը ցանկար ու կ'անկեկալէր: Այսուհանդերձ իր շնչուած ցանկութիւնը իրեն կ'ընծա-յէր բարեմիտ յոյս մը: Եւ Աւետիս աղային, որ հարուստ, կիսազրազէտ բայց ուշիմ մարդ մըն էր եւ իր ամէնէն մօտիկ գործակիցը առաջնորդա-բանէն ներս:

- Կը բացուի, կը կազմաւորուի, արժէքներն ու ընդունակութիւննե-րը երբեմն ուշ կը յայտնուին, - կ'ըսէր՝ աւելի շատ ինք իրեն տալով այդ յոյսը, քան իր բարեկամին:

Ընկերներ ունեցած չէր Լեւոն: Ո՛չ ցանկացած էր եւ ոչ ալ փնտռած: Տան շնիկէ մը նման, որ բազմոցներու կամ դերկերու վրայ կը մեծնայ, եւ, հասակ նետելէ ետք, փողոցը, փողքիկ աղմուկէ մը սարսափած, յան-կարծ խոյս կու աայ դէպի տուն, Լեւոն կը խուսափէր փողոցէն, տղոցմէ, աղմուկէ ու մարդոցմէ: «Մարդ որ տեսնես՝ պատերը կ'ըլլես», կ'ըսէր մայ-րը յանդիմանական շնչով մը: Երբեմն միայն Լեւոն բացատրիկ յանդգնու-թիւնը կ'ունենար իջնելու պարտէզ՝ մինչեւ վարի բաժանումը, բանալու դուռը եւ անցնելու ծովափ: Այդպէս կ'ընէր առաւօտեան եւ երեկոյեան ժամերուն, երբ ծովը կ'ըլլար անդորր՝ սպիտակ սաւանի մը նման, եւ

տղաք, յոյն թէ Հայ, բուպիկ ու կիսամերկ, տափակ խիճեր կ'ընտրէին եւ
 «մտիկ կը շինէին»՝ ձեռքի վարժ շարժումով մը շարտելով քարերը ծոփու
 մակերեսին վրայ: Այդ ընդհանուր ոպեւորութենէն մզուած՝ Լեւոն եւս կը
 փորձէր իր վարպետութիւնը: Տղաքը լաւ կը ճանչնային զինք: Մեծերուն
 համար «էֆէնտիին մանչն» էր: Իսկ տղոց համար՝ «աղջիկ Լեւոնը»: Մակ-
 գիր մը, որ Պոլսէն վերագարձին վերածուեցաւ «օրհորդ Լեւոն»ի:

Օր մը, սահայն, Լեւոնի ուր յանդգնութիւնն ու հաճոյքը եւս վերջ
 դառաւ, երբ աղաքը, ո՛վ գիտէ ո՛ր անպիտանին թաքուն թելադրանքէն մըզ-
 ւած, յանկարծ շրջապատեցին զինք եւ, կանչերու ու ծիծաղներու ժխորի
 մը մէջ, հրեցին ու քշեցին ջուրին մէջ՝ ծունկերէն ու մէջքէն ալ վեր,
 սարտափի ու զոգի մատնելով զայն: Ա՛լ ատկէ ետք Լեւոն երբեք չգործեց
 իջնել ափ:

Պէրպէրեան վարժարանի մէջ եւս Լեւոն միշտ ատանձին էր: Եւ միշտ
 երկշտ: Իր մեկուսի վիճակը, արժուոյն ու մտայլ զէմքը, վարանումը՝ ամէն
 տեղ ու ամէն առթիւ, եւ, վերջապէս, իր անընտել ու վայրի խտանումը
 զինք դարձուցեր էին հեղանջի առարկայ: Տղաքը գիտէին Լեւոնի պակաս
 կողմը: Եւ կատակելու բոլոր կերպերը կը կիրարկէին, — բարձր կ'ողո-
 զէին բոլորով եւ կամ վրան կը զնէին «քուն փախցնող» քարտեր...:

Արձակուրդէ արձակուրդ՝ երթեւեկ Պոլսէն Ռոտտոթօ: Հոգածու-
 թիւն, շոյանք ու գառանք: Եւ տարիները անցեր էին՝ մինչեւ որ, օր մըն
 ալ, վերջապէ՛ս, Լեւոն, վկայականը դրպանը, վերադարձեր էր Ռոտտոթօ՝
 յոգնատանջ վերելքէ մը սպասած ուղեւորի մը նման: Բաղաքը գիտէր, թէ
 «էֆէնտիին մանչը Յըլիս է»: Բայց Բեաթիպեան էֆէնտի կը յամատէր, կը
 ցանկա՛ր գայն տեսնել «իբ ու իր հօրը արժանաւոր յաջորդը»:

— Ծառաւի՛ղը... Բեաթիպեան ղերգաստանին շառաւի՛ղը, — կ'ըսէր
 Աւետիս աղային, — հայրս օսմանեան պետութեան ծառայեց: Ատրկա իբ
 ժամանակին պարտադրութիւնն էր: Այժմ ես կը ծառայեմ մեր եկեղեցիին,
 որովհետեւ եկեղեցին մեր գոյութեան միակ կոտանն է: Իմ զուակա պէտք
 է ծառայէ ազգի՛ն: Երէկուան եւ այսօրուան պայմաններուն միջեւ տար-
 բերութիւնը մեծ է: Գերութենէն ազատութեան հասանք: Բարենորոգում-
 ներէն անկարելի չէ հասնիլ հայկական ինքնօրոյն պետութեան մը:

Եւ, խանդավառուած իր շառաւիղին վերադարձ կոչումէն, կը պատ-
 րաստուէր գայն ճամբել Փարիզ՝ իրաւարանական համալսարանին հետեւե-
 լու համար: Բայց, 1915-ի փոթորիկը շրջէր էր ամէն ինչ: Քշեր ու ցրուէր
 էր նաեւ զիրենք՝ շարտելով մինչեւ անապատ, ուր մեռեր էր Բեաթիպեան
 էֆէնտի: Լեւոն, վերագարձին, «լքեալ գոյքերու» հաշտոյն կ'ըր գումար
 մը ստացեր էր: Եւ, չորս տարի շարունակ, իր հօրը կայունները իրեն
 ու իր մօրը ապահովէր էին յուելեալ դումար մը, զոր ամէն ամիս «կար-
 մըրուկ ոսկիներու» վերածեր էր՝ պահ զնելով մօրը ծոցը:

Այս վերջելումներէն տարուած՝ Լեւոն պառկած կը մնար դեռ, ախ-
 նարկը առատադին: Յիշեց Սթարա Զակորան: Լա՛ւ էր այնտեղ: Եւ իբ
 տեսողութեանը առջեւ պատկերացաւ իր նախկին սանտրուհին, այրի՛
 այլեւ թարմ, ժպտուն ու տաքարիւն վերան: Անոր աշխատութիւնը, բայց
 մանաւանդ համարձակութիւնը հմայեր էին զինք: Բացառիկ գեղեցկութիւն
 մը շունէր վերա: Բայց ունէր քաղցր ու նաեւ ցանկալարոյց բան մը:

Վերա նախ կատակի ձեւով եւ յետոյ չար ու ջերմ հպանքներ ընծա-

յեր էր Լեւոնին: Իսկ երեկոյ մը, պտոյտէն վերադարձին, մութին մէջ, մտեր էր անոր թեւը եւ իր նուրբ շրջագոյնտէն թափանցող ջերմութեամբը անօրինակ խոփք մը պատճառներ էր անոր: Լեւոն գիշերն ամբողջ մնացիր էր անքուն՝ դեռ յամեցող իրականութեան մը եւ մինչեւ այդ իրեն անծանօթ խոփքի մը միջեւ: Ուրիշ առիթով մը, փողոցի դրան ետեւ իրմէ իւրըւած արագ ու տաք համբոյր մը բոլորովին փոթորկեր էր զինք: Եւ, այլեւս անհանդարտ, մտածեր էր յանդուգն ըլլալու մասին: Իսկ այդ «յանդուգնութիւնը» ֆեաթիպեան գերդաստանին յուսադրելի «շառաւիղը» մղեր էր, ամէն գիշեր, ոտքին մասներուն վրայ եւ մութին մէջ խարխափելով, սողակերու վերայի սենեակէն ներս...:

Եւ հիմա Օհան զինք բերած էր այս տունը: Բախտին ընծայած երկրորդ շնորհն էր: Հրճուեցաւ: Բայց միանգամայն վախցաւ: Ուրեմն կըրկին նոյն խոփքներն ու անձկութիւնները: Նոյն հեշտանքներն ու սպասումները: Բայց եւ նոյն վախերը... Այսուհանդերձ, մտածեց, հոս ամուսին մը կայ եւ արջիկ մը: Եւ զգաց թէ բա՛ն մը անցաւ արտէն: Անդրադարձաւ, սակայն, թէ Արաքսի բոլորովին անտարբեր եղած էր իրեն հանդէպ: Եւ, նետելով վերմակը վրայէն, ելաւ եւ իջաւ վար՝ լուացուելու համար:

Սալոնին մէջ – այդպէս կը կոչէին այն փոքրիկ ու քառակուսի տարածութիւնը, որ կը գտնուէր ճաշասենեակին, լուացարանին ու խոհանոցին միջեւ, – պահ մը կանգ առաւ՝ շոռիկ մը կամ շարժումի մը որոնումով: Յառաջացաւ: Եւ մտաւ լուացարան: Կը սրբուէր, երբ լսեց փողոցի դրան ճոխնը: Տեսակ մը վարանում ունեցաւ: Արագ սրբեց դէմքը եւ անցաւ սալոն:

- Տանտիրուհին կու գար շուկայէն:
- Բարի լոյս, միւսիւ ֆեաթիպեան, – ըսաւ Սիրան սիրալիբ շեշտով մը, – շա՛տ կանուխ ելեր էք... Հանգստանայի՛ք, գործերնիդ ի՞նչ է:
- Ես միշտ կանուխ կ'արթննամ, երբ Գրիգոր աղան վար կ'իջնէ, ես ուղքերս բացած կ'ըլլամ:
- Իրա՞ւ... Հրամեցէ՛ք, սուրճ մը առէ՛ք, երէկ խարկեցի, – աւելցուց ու ժպտուն:
- Ծնորհակալ եմ, դեռ հազուած չեմ:
- Հոգ չէ՛, – վրայ բերաւ Սիրան, – մենք եկող-դացող շունիք, միւսիւ ֆեաթիպեան, մեր տունը վանքի պէս է... Ես շատ չեմ սիրեր ասոր անոր հետ կապ ունենալ: Ես չեմ երթար, որպէսզի չզան...:
- Այո՛, շատ երթալ-գալը լաւ չէ: Մա՛յրս ալ այդպէս կ'ըսէր: Տուն մը, վերջնապէս...:
- Հարկա՛ւ. ամէն տան ներսինը իրեն: Վտահելի մարդիկ զիչ կան, միւսիւ ֆեաթիպեան... Բարեկամի պէս կը մտնեն տունէդ ներս, թշնամիի պէս կը խօսին հտեւէդ...:
- Ջուրը արդէն կ'ետար քառսուն կրակարանին վրայ:
- Բոստոթօ ամէն տուն կար այս կրակարանէն, – ըսաւ Լեւոն՝ նըստելով եւ գո՛հ՝ Սիրանի մտերիմ շեշտէն, ինչպէս նաեւ տյոլ տան զմանականք ընոթէն, – մայրս ամէն գիշեր կը թաղէր կրակը՝ առտուն կանուխ սուրճը եփելու համար:

- Գրիգոր աղան ալ կը սիրէ այս կրակարանը, - վրայ բերաւ Սի-
րան՝ զաղած-ին տալով ամուսնի մը վայել շեշտ մը:

Յետոյ, սուրճը լեցուց երկու սկահակներու մէջ, եւ, մի՛շտ ժըպ-
տուն՝ տուաւ մէկը Լեւոնին:

- Կ'երեւի Գրիգոր աղան ոտքի վրայ գործեր կ'ընէ, - յարեց Լեւոն:

- Ամուսի՞նս... այո՛, խանութ ունէր պէտքստէն զբանք քով-
եազմանի էր: Էտիրնեցիները, պիտէք... բայց քրիպը վրայ եկաւ, առնե-
լիքները չկրցաւ գանձել եւ փակեց խանութը:

- Իսկ օրինորդը, - վարանումով հարցուց Լեւոն՝ գոհ ու զգուհ իր
այդ հարցումէն:

- Արաքսիս վաճառատուն մը կ'աշխատի, միւսիւ Մելքոնեանին
քով... Երկրագործական դրամատան նիւղ դէմն է: Ես ալ պառտէ կ'ընեմ-
որպէսզի գրադում մը ըլլայ ինձի... Տանը մէջ միտակ... Մանաւանդ որ,
ինչպէս ըսի, եկող-զացողներ չունինք:

- Տէօվէթեանները շե՞ն դար ձեզի:

- Ո՛չ. անոնց հետ մօտիկ յարաբերութիւն չունինք... Թերեւս ձեզի
համար այցելեն:

- Մենք ալ ընտանեկան յարաբերութիւն չենք ունեցած անոնց հետ:
Յետոյ, ի՞նչ հարկ կայ իրենց իմացելու, թէ ձեր տունը կը բնակիմ:

- Անշո՛ւշտ, մեր տունինը մեր միջեւ...

Եւ, յիշելով յանկարծ.

- Վաղը Աստուածածին է, - աւելցուց, - ձեր Ս. Թագաւորին տօնն
է: Ամբողջ հայութիւնը եկեղեցին կ'ըլլայ: Ձեր սուրբը զօրաւոր է, կ'ը-
սեն, միւսի Գեաթիպեան, պուշկարներ ու թուրքեր անդամ կու գան մա-
սունքը համարելու... Անանկ որ, վաղը մեզի ճաշի պիտի մնաք:

- Ինչո՞ւ այդ ձանձրոյթը, տիկին Սիրան:

- Ամուսինս ալ կը փափաքի: Տօն է: Գուք հիւր չէք: Մենք ձեզի
վարձակալի աչքով չենք նայիր:

- Ենորհակա՛լ եմ, - յարեց Լեւոն եւ բարձրացաւ սենեակ: Պահ մը
մնաց ոտքի: Ուզեց մտաբերել իրենց խօսակցութիւնը, դէմքի արտայայ-
տութիւնները Սիրանին: Զաշի հրաւէր, ժպիտներ, զմեր տունինը մեր
մէջ-ի կրկնումը, բայց մանաւանդ տանը առանձնութեան մէջ Սիրանին
անփոյթ նիստը իրեն հետ՝ յիշեցուցին Օհանին խօսքերը: Տարակուսեցաւ
սակայն: Սիրանին հասու շեշտը, զամուսինս-ի եւ «Գրիգոր աղա»-ի ար-
տասանումին ատեն ձայնին մէջ դրած գորովը իրեն այն տպաւորութիւնը
թողուցին, թէ ինքնավստահ, իր բոյնին հոգածու եւ անմատչելի կին մըն
է: Բայց, «ի՞նչ գեղեցիկ կին», մտածեց՝ անձեռոցը դեռ ձեռքը նստելով
աթոսին վրայ: Եւ, անզրագոյնալով իր անդործ վիճակին, զգո՛րծ մը,
զո՛րծ մը», յարեց: Եւ, փողկապը ձեռքը կանգնելով հայելիին առջեւ,
«նախ զո՛րծ մը», կրկնեց՝ այդ «նախ»ին մէջ իր երկզիմութեան եւ, միան-
գամայն, ինքն իրմէ պարտաւրի անզօրութիւնն ու նախատրամադրութիւնը
դնելով...:



Եկեղեցւոյ բակը նեղ կու դար խոնուող հասարակութեան: Գաւիթին
մէջ եւս ասեղ ձգելու տեղ չկար: Եւ ուշացողները խոնուեր էին եկեղեցւոյ
մուտքի դռան առջեւ՝ զիրար հրելով ու հրմշտկելով: Ետքը կ'երկարէր

ու կը լայննար բանկալէն մինչեւ բախին ելքի երկու դռուները, նոյնիսկ մինչեւ խորհրդարանին նախադուռը:

- Տիկիպէի հայերը մեծով պղտիկով թափեր են հոս, - ըսաւ չէնկէլ-լէրցի Պարոյրը, մեծղի, ծաղկոտ երեսով ու դեղին պիւրթով հացթուխը, որ քանի մը ուրիշ չէնկիւրցիներու հետ խորհրդարանին առջեւ կանգնած էր:

- Դեռ կա՞յ, դեռ քանի մը ասանկ բակ ու եկեղեցի կը լեցնէ... քր-մատը ջն՝ըն է մեր ժողովուրդին... Կարէ՛, Ջարդէ՛, Էնծի է՛ շքեր... Հայը կը բուսնի՛, հա՛, կը բուսնի, - ձայնեց Միքիճան՝ Չէնկիւրցի սրտոտ աղոյցմէն մէկը, որ, վերջին գաղթէն առաջ, դիւղին ճամբուն վրայ ասան-ձինն նակատած էր հինգ թուրքերու դէմ, զանոնք փախուստի մատնած եւ, հասնելով մէկին ետեւէն, «ծունկին տակը առած ու սլխարի պէս մորթած» էր:

- Մասունքը դուրս կը բերեն կոր... Բացուեցէ՛ք, - պոռաց երէ-տասարդ մը՝ ոտքին մասններուն վրայ բարձրանալով եւ ձեռքը դնելով իր առջեւ եղողին ուսին:

Յետոյ, աւելի բարձրացնելով ձայնը.

- Պարո՛ն, մէկ կո՛ղմ, - խօսքը ուղղեց Լեւոնին, որ եկեր ինկեր էր այդ տատանող եւ ալեկոծուող բազմութեան մէջ, եւ հրմշտուքէն յայտնա-պէս նեղուած էր:

Եւ որովհետեւ Լեւոն, կանակ դարձուցած ըլլալով, լլսեց իրեն ուղ-ղուած յանձնարարութիւնը.

- Միտի՛ւ, քեզի՛ եմ... Սանկ ջեշ մը մէկ կողմ, - աւելի ուժգին ձայնեց նոյն երիտասարդը՝ ծռելով եւ ձեռքովը հպելով Լեւոնի ուսին:

Թափօրը դուրս ելած էր եկեղեցիէն եւ բազմութիւնը կիսուեր էր մինչեւ խորհրդարանին դուռը:

- Միւսին ուստսթոցի է, անոնց տօնն է, - լսուեցաւ ուրիշ ձայն մը, որ ծանօթ թուեցաւ Լեւոնին:

Դարձաւ: Օհանն էր՝ դուլար բաց, շտապուած եւ քրտինքներու մէջ:

- Բնրե՛ւ, միտիւ Քեաթիպեան, - ըսաւ ժպտելով եւ մտնելով Լեւոնին, - ձեր եկեղեցիին տօնն է: Ձեր սուրբն ալ զօրաւոր սուրբ է, հա՛:

- Մեր Ս. Թազաւորը սուրբերուն թազաւորն էր, - լրացուց ուրիշ մը քովէն:

- Օ՛ր, Կարապետ աղա, - դուչեց Օհան, դառնալով ետեւ, - Հայրե-նակի՛ց մը քեզի, միտիւ Քեաթիպեանը:

- Քեաթիպեան՝ ըսիր, - հետաքրքրուեցաւ Կարապետ եւ, շեշտակի նայելով Լեւոնին, - Տիրան է՞Քէնտիին մանչը չըլլա՞ս, - հարցուց:

- Այո՛, - հաստատեց Լեւոն:

- Միւսին հայրը կը ճանչնամ, - Կարապետ դարձաւ Օհանին, - փաստաբան էր, բայց փաստաբան կ'ըսեմ քեզի... Տանկիւր, հոռո՞ժը, հրեան մաս կը խածնէին...: Հայրը՝ մ'ըջէ՛: - կրկին խօսքը ուղղեց Լեւ-ոնի:

- Ո՛չ, մեռաւ արտորին: Դուք որոնցմէ՞ք էք, - ուղեց ստուգել Լեւ-ոն:

- Ս. Թագաւոր թաղէն եմ: Մեզի Խօջիւզէօլտիւրէնները կ'ըսեն: Մեծ հայրս բռունցքովը կողմը օտակեցուցեր է...

- Վա՞յ, - գոչեց Օհան՝ աչքերը խոշոր բացած եւ նայելով Կարապետի ձեռքին...

- Դուք նո՞ր էք եկած Ֆիլիպէ, - հարցուց Լեւոն:

- Ո՛չ, «Հուրրիլէթ»-ին երկրորդ տարին եկայ. մտրգ զարկի ու փախաւ:

- Այո՞, - զարմացաւ Լեւոն:

- Իրա՞ն... չէի գիտեր... Հա՞յ սպաննեցիր, - մէջ ինկաւ Օհան:

- Հա՞յ... Ես Հայու վրայ ձեռք կը վերցնե՞մ... Ժանտարմա քո մանտանին զարկի, պինպաչի Հիւսնի պէյը... կարելի է՝ լսած ես... փոս աղբիւրին առջեւը... Հայ կնկայ մը ետեւէն ինկած էր...:

- Օ՞ր ցերեկով, - կրկին հարցուց Օհան, - յետո՞յ:

- Փախայ եւ Պուլկարիա անցայ:

- Զրոնեցի՞ն:

- Հը՛, ո՞վ պիտի բռնէ: Հոպիէն վազ անցնողը թող փորձէր...

- Շը՛ւթ... - գիտեւ տուաւ մէկը՝ ցոյց տալով յառաջացող թափօրը:

- Նայեցէ՛ք, միտիւ Լեւոն, տիկին Սիրանը, - շնչեց Օհան՝ Լեւոնի ակամօջին եւ արժուկովը հպելով անոր, - ճիշդ ձեր զիմացը, փետուրով գլխարկին ետեւ:

Լեւոն ակնարկը ուղղեց այն կողմ: Սիրան կանգնած էր՝ մութ-կապոյտ շրջազգեստ մը հագած՝ կուրծքին վրայ նեղ ու եռանկիւն բացուած-քով մը: Մազերը կիսած էր ճիշդ մէջտեղէն եւ դիւխը մասամբ ծածկած՝ նուրբ շղարով մը: Ո՛չ մէկ շար ունէր: Իր սպիտակ ու քնքոյշ մորթը, իր նրբաձեւ զիթը, սեւ աչքերը եւ ողորկ ու կաթնաթոյր վիզը արտակարգ զրուշուրիւն մը կ'ընծայէին իրեն: Կանգնած էր հանդարտ, նայուածքը ուղղած աւազերէցին, անշարժ ու լուռ՝ իր արտաքին շնորհալիութեան համապատասխան լրջութեամբ մը:

- Հատ մըն ալ կա՞յ անոր պէս... Աստուածամա՞յր է, Աստուածամա՞յր, - կրկին շնչեց Օհան:

Եւ, յանկարծ մտաբերելով.

- Հա՛, քիչ մնաց մոռնայի, - աւելցուց, - ես ձեզի լաւ գործ մը գտայ:

Թափօրը անցեր էր արդէն: Եւ բազմութիւնը սկսեց էր ցրուել:

- «Վիթօշ» զարեջրատան մէջ պիտի նուազէք, - շարունակեց Օհան՝ քայլելով Լեւոնին հետ:

- Առանձի՞ն:

- Ո՛չ, օրֆէսքրին հետ:

Հասեր էին սանդուխին առջեւ: Իջան: Անցան «Անդրանիկ» փողոցէն՝ ուղղուելով դէպի կեդրոնը քաղաքին:

- Այսօր կ'երակի է, վաղը կ'երթանք զարեջրատուն, - ըսաւ Օհան, երբ հասան գլխաւոր պողոտան: Եւ բաժնուեցաւ:

«Միլբա» ծաղարանին անկիւնը՝ բոպէ մը կանգնած մնաց Լեւոն:

Յետոյ յառաջացաւ զէպի հանրային պարտէզ: Մտաւ: Եւ մօտեցաւ աւազանին: Յայտող ջուրերը զովութիւն մը կու տային: Նստեցաւ նստարանի մը վրայ: Մթին ու տարտամ բան մը կար իր մէջ: Անորոշ ու ճնշիչ բան մը, որ երբեմն կը տապալակէր զինք: Առանձին էր ո՛չ միայն արիւնով, այլեւ իր մտածումներով, յոյզերով, անհամարձակ ու անընտել մարդու իր երկչտուութեամբ: Նոր շրջապատը աւելի զգալի կ'ընէր իր տաանձնութիւնը: Մեծ քաղաքներու եւ բազմութիւններու վարժութիւնը չունէր: Ո՛չ ալ՝ ցանկութիւնը՝ «Այսուհանդերձ սենեակա լաւ է», մտածէց: Ու կրկին յիշեց տանտիրուհին: Թպիտները անոր: Յուսազրուեցաւ: Բայց յանկարծ գլխաւոր բաներ կը մտածեմ», բաւ իւրովի, այդպիսի՝ կին մը: Բայց կարելի բան է որ... այն ալ գիշեր հատած մազոգին» հետ...: Օհան ապատուար կին է», ըսած էր: «Պատուար ըլլալ չի նշանակեր, անշուշտ, սիրտ ու մարմին չունենար», խորհեցաւ: «Այդ կապած աւելը», յարեց յանկարծ ակնարկելով Գիրգորին եւ, իր իսկ ձայնէն զգուշանալով, նայեցաւ շուրջը: Ոչ ոք կար: Արագացուց քայլերը: Եւ, անցնելով անուններու արանքէն, յառաջացաւ զէպի կեդրոնը պարտէզին:



Աշունը տարօրէն դանդաղութեամբ մը կը մերձենայ Թիւրքի: Մօտակայ լեռներուն վրայ կը պարտկի: Կը պարէ: Կը սկսի իր դեղինը քստել աջ ու ձախ: Զգո՛յ՛ն՝ կը թօթուէ լանջերուն ծառերը: Երբեմն յանկարծ կը սուրայ վար: Կը փորձէ աւել: Կ'ասողնտէ թաց ու զով: Կրկին խոյս կու տայ: Դարձարձիկ, երբեմն ժպտուն, բայց միշտ քմայքոտ, կը յամենայ՝ քաղաքին շուրջ՝ պաշարող բանակի մը նման, որ վստահ է իր սեփական, բայց կը դանդաղի: Յետոյ, յամր ու վարանոտ, կը բարձրանայ բլուրներն ի վեր: Կը ծկլա՛յ կատարներէն ու ձեռքերէն: Եւ, արուօտեան մէջին, նրբի՛ն չղարչին ետեւ թաքնուած, կը սահի՛, կը սպրդի քաղաքէն ներս: Եւ տաքը կը սկսի նուազիլ: Օդը, որ սեպտեմբերեան օրերուն դեռ հեղձուցիչ ծանրութիւն մըն է, հետզհետէ կը նօսբանա՛յ: Կը պայծառանա՛յ երբեմն: Առաւօտեան քօղը կը պատուի՝ արշալոյսին ճառագայթներէն: Շրջակայ դաշտերը կը լեցուին դեռ յամեցող կաշիքու, նոր հերկերու եւ աշնանային ցանքերու երգերով: Արօրը կը պատուէ հողերուն ծոցը: Կը տարտոզնէ: Կը շրջէ: Եւ արտերու մակերեսը կը վերածէ սեւ ու այնտառան ծովու: Այգեկութքի կառքերը կը ճռնչեն խճուղիներու երկայնքին, զանազակ ու յօրանջող եզներու քայլերուն հետ, երթալ կանգնելու համար լայն դուռներու առջեւ, երբ փողոցի բոպիկ աղաքը արգէն իսկ շուլլուած կ'ըլլան անոնց վրայ՝ հակառակ կառապաններու պոռչտութիւններուն, ողկոյզներ ափռակելով եւ թխելով իրենց բերաններէն ներս: Հեղուկ հիւթը թել կը կապէ անոնց շրթներէն ու կրկններէն վար՝ մինչեւ կիսաբաց շապիկները: Երեկոյեան զօղանջը, յաւիտենական ու յուսահատ աղօթքի մը նման, կը կերկերի՛, կը ցունցնուի, կը բախի բլուրներուն լանջերուն եւ կը բեկբեկի: Այնտառու կիներ ու աղջիկներ, յաջնարեկ ու բոպիկ, կը վերադառնան արտերէն՝ շաղկրատելով, աղմկելով եւ կրբեմն հաւաքաբար քրքջալով: Նախիրը խճուղիին վրայ կը յամենայ ու կ'օրօրուի: Կովերը սուրացող

ինքնաշարժէն կը խրտչին ու կը տարողնին: Կրկին կը հաւաքուին: Կը բա-
 սաշն շողիճները իրենց բերաններէն կախ եւ իրենց դունչերը երկնքին՝
 կարծէք վրդովուած, թէ կանաչը խած է իրենցմէ: Իրենց սամուկ ու թաց
 աչքերուն մէջ թախծոտ ու մեղկ անփութութիւն մը կը հեզնէ՝ արագ ու
 տենդոտ թափը կեանքին: Առունները, սրտում ու մեղմիկ, անծանօթ ճամ-
 բաներու վրայ դանդաղող ուղեւորներու նման, տնտնալով, գորուելով ու
 գրգռելով, կու լան անվերադարձ ուղիներու կորուսեալ երջանկութիւնը,
 եւ իրենց հարկադրական սահանքին մէջ՝ տիեզերական անչեղ ու անյեղի
 օրէնքին դառնութիւնն ու կեանքին ունայնութիւնը: Հեռո՛ւն, հորիզոնին
 վրայ, մայրամուտը կը բռնկի: Կը բզկտուի՝ պատուտուող ու ժեժ նուռի
 մը նման: Կը հրէւհուի եւ ինքն իրմէ կը լափիլողուի: Կը ցանցնուի բոց առ
 բոց: Սպիտակ ամպերու ծուկներուն վրայ կարմիր շափրակներ եւ բոցո-
 րադոյն երիզներ կը նետէ: Կ'ամփոփուի կրկին՝ հրեշտակներէն քաշուած
 վարդենիի մը նման եւ հովերէն թրթռացող իր թերթերով: Եկեղեցիներու
 դմբէթներուն վրայ այլեւս մարմրուն ցուրեր կը դողդղան: Կը բեկբեկին:
 Վերջին համբոյրները կու տան: Կը ջանան դեռ յամենալ՝ մարդկային միա-
 մտութեան յափ անդիտակ՝ կեանքի ունայնութիւն: Եւ յետոյ, յանկարծ,
 կը խրտչին՝ իրենց թաւայոց, սուզուող, ընկղմող ամբողջէն, որ լեռներու
 վրայ դեռ կը սահեցնէ տտունն իր այլեւս դունատ պատմուճանին: Լանջե-
 րը, քիչ մը սարսուտն ու քիչ մը արնում, տարազ ու հէնք կը փոխեն:
 Ի զո՛ւր կը փորձեն իրենց ձերպերուն կամ խոտոջներուն մէջ թաքցնել
 ցուք մը, թելի՛կ մը զոնէ: Եւ, անօ՛ր ու յուսահատ, կը յամառին շղար-
 ջըւի գոլորիէէ մը, որ կը կապուտնայ, կը մանիշականայ, կը պարուրէ,
 կը մթաղնի ու կը սքողէ՝ տեսողութիւններուն հետզհետէ անտես դարձը-
 նելով լանջերը:

Ուղողը շատոնց օրհնուած եւ բանկայէն ողկոյզ առ ողկոյզ բաշխե-
 ւած է: Ս. Ուաշը՝ տոնուած: Հի՛ն, հնամենի սովորութեան համաձայն՝
 պարէնն ու քաղցրեղէնները՝ ամբարուած:

Տերեւաթափը վերջացած է արդէն: Եւ երբեմն ծառերու վրայ, ո-
 րոնք կը նմանին իրենց մաստ թռեւերը տարածած կմախքներու, յապաղած՝
 մէկ-երկու տերեւներ կը ճղնին դեռ օրօրուի՝ դեղնորակ այլ անձիւր
 սկանջներու պէս: Եւ աշնան անձրեւը ծայր տուած կ'ըլլայ: Անվերջ ու
 անդադար: Ի՞ր անհամար մասներով կը նուազէ, միօրինա՛կ, երկնքէն իջ-
 նող եղանակ մը՝ պարտեալ, յուսահատ ու յոգնատանջ բանակի մը հառա-
 շանքին նման:...



Գիրդոր աղային տունը, - եթէ կարելի է ի՛րը նկատել զայն կամ
 դինք՝ ան՛րը, - հայկական շրջագիծէն դուրս կ'իյնայ տեւապէս՝ ոչ մի-
 այն՝ հետու: Ըլլալուն համար, այլեւ իր կենցաղով: Գիրդոր տուն կու գար
 որո՞շ ժամերու: Կէսօրին՝ ճիշդ 12-ին: Իսկ երեկոյեան՝ 19-ին: Կը մտնէր
 ներս՝ անշուղի, յաճախ անխօս: Գաւաղանը կը զնէր դրան հտեւ: Կօշիկ-
 ները ծրկա՛ր կը քսքսէր թաղիքի կտորին: Եւ կ'երթար նստելու ճաշասեն-

եակի ձախ անկիւնը, փայտէ լայն աթոռի մը վրայ, զոր ինք էր շինած առանին, եւ զոր անգիշելի կերպով կը վերապահէր իր անձին՝ իրրեւ միակ տարրը, որուն նկատմամբ որոշ իրաւասութիւն էր շնորհուած իրեն։ Ոչ ոք կը ցանկար իրմէ խլել այդ իրաւասութիւնը։ Աթոռը եւս իրմով ոչ միայն արժեզրկուած, այլեւ իրեն հետ նոյնացած, ամբողջացած ըլլալով։ Ու Գիրգոր, տէրն էր միայն այդ աթոռին՝ տէրը ըլլալով հանդերձ իր անձին։ Խախտնէն Ֆիլիպէ էր եկած եւ հոն ծառայութեան էր մտած Սիրանի հօրը քով, որ, իրրեւ վաճառական նազմայի, բաւական լաւ դիրք մըն էր ապահոված։ Փոխադարձ համակրանք մը դէպի պուշկար երիտասարդ մը՝ Սիրանը քլած տարած էր մինչեւ ինքնամոռացում։ Եւ Սիրանի հայրը, ճմուխը մէջը խեղդելու համար զայն փակցուցած էր՝ Գիրգորին, ինչպէս ըսեր էին այն ատեն։ Չար լեզու մը, տարիներ ետք, տեղեկացուցած էր Սիրանի աղջկան՝ Արաքսիին։ Արաքսի ոչինչ զպատուցած էր մօրը։ Բայց մայր ու աղջիկ հասկցեր էին զիրար։ Եւ Սիրան միշտ կը վարանէր նկատութիւններ ընելէ Արաքսիին՝ երեկոյեան յապաղումներուն կամ հանդիպումներուն համար։ Անգամ մը միայն, Արաքսիի ու Տիրանի մտայն լընող զրոյցները հասած ըլլալով իր ականջին՝

– Արաքսի՛, աղջիկս, զգոյշ եղիր, – թելադրեր էր զգուշութեամբ՝ այդ երկու բառերուն մէջ ամփոփելով իր մտահոգութիւնը, իր դառն փորձառութիւնը, իր մայրական պարտականութիւնն ու նաեւ իր զիջը...:

Արաքսի պատասխանած չէր։ Երկու տարի առաջ մտերմութիւն մը ունեցած էր ուրիշ երիտասարդի մը՝ Հրանդին հետ։ Եւ հիմա տեւիք ուստի սիրահարած էր Տիրանին։

Տիրան թուի, սլացիկ հասակով, յանդուզն, քանի-քանի աղջիկներու հետ «ինկած-եկած», չափազանց խտապահանջ եւ որքան բուռն՝ նոյնքան նախանձոտ էր։ Արաքսի անոր կապուած էր իր ամբողջ էութեամբ։ Հրանդին խաբուած ըլլալու դառնութիւնը թերեւս դեռ մը ունէր իր բոլոր ցանուէր անձնատուութեանը մէջ։ Ինչպէս նաեւ՝ յուսախաբ ու վրդովուած՝ կեանքը ապրելու հոգ տենչը։ Թէեւ թերահաւատ էր նաեւ Տիրանի նկատմամբ։ Ան դիտէր, թէ Տիրանի համար ինք զի միջի ալոցը էր։ Իսկ իրեն համար Տիրանը նախընտրելի էր բոլոր տղոցմէն։ Հակառակ իր շեշտուած ինքնասիրութեան՝ կենթարկուէր անոր։ Գիտէր թէ իր անցեալ յուսախաբութիւններուն տակ քողարկուած իր սայթաքումները իրեն չէին տար Տիրանին նկատմամբ խոտապահանջ ըլլալու իրաւունքը։ Ինք կը սիրէր։ Եւ ատիկա բաւական էր, որ նուիրուի ու նուիրէ՝ առանց ակնկալութիւններու կամ պայմաններու՝ այնքան ատեն որ պիտի կարողանար Տիրանը պահել իր քով։

Տան նիւթական հոգը ծանրաբեռնուած էր Սիրանին վրայ։ Բայց ինչ որ կ'ապահովէր ան իր աշխատանքով, հազիւ կը բաւէր ծայրը ծայրին բերելու։ Հիմա Լեւոնին ներկայութիւնը պիտի մեղմէր անոնց տաղանապը։ Օհան ո՛չ սխալած, եւ ո՛չ ալ կեղծած էր, երբ, առաջին օրը, Լեւոնին ըսեր էր, – «Ես գիտեմ որք ի՛նչ պէտք է»։ Այդ արիւնն եւ «ինչը» երկիմաստ էին Օհանի շրթներուն վրայ։

– Որոշ կանխամտադրութեամբ չէր որ Սիրան իր տանը մէջ ընդունած էր Լեւոնը։ Այսուհանդերձ, դեռ առաջին գիշերն իսկ, – երբ Գիրգոր իր քով աւելի շատ տածանք մըն էր, քան ցերեկը, – հանդիպակաց դենեակին

մէջ այր մարդու մը ներկայութիւնը փոքրիկ հաճոյք մը պատճառեց իրեն: Եւ նաեւ՝ փոքրիկ անհանգստութիւն մը: Միանգամայն, սակայն, իր մէջի մայրը աւելի ուժեղ խօսեցաւ իրեն, քան՝ իր մէջի կիները:

Եւ, իր կարգին, որոշեց Լեւոնը պահել տանը մէջ՝ որքան աստի որ կարենար, ի հարկին փոքրիկ զիջումներով...:



Աշնան մեղմ գիշեր էր: Անհամար մարդարիտներ ցանուեր էին երկրներն վրայ: Կարծէք աշխարհ յուլունքէ խոյր էր դերը դիտուն: Փողոցները ամայի էին, երբ Լեւոն տուն դարձաւ: Ծառաթ մըն էր, որ կը նուազէր գարեջրատան մէջ: Իր ստացածը բուսական գոհացուցիչ էր, - «400-ը տունին: 600-ն ալ՝ սնունդի: Խմող-ծխող չեմ, հանգիստ կ'ապրեմ եւ ոսկիներն ալ կը մնան», մտածեր էր:

Գուռը բացաւ զգուշութեամբ: Եւ, ինք եւս, իր կարգին, ոտքին մասներուն վրայ կոխելով ելաւ սենեակ: Վառեց լոյսը: Սեղանին վրայ, ծաղկամանի մը մէջ, ծաղկեփունջ մը կար: Զարմացաւ: Ո՞վ կրնար դրած ըլլալ: «Տանտիրուհիի ուշադրութիւն», խորհեցաւ: Մտեցաւ: Առաւ փունջը: Հոտոտեց: Եւ ծաղկամանը ձեռքը, խկ ակնարկը ուղղած պատուհանէն դուրս՝ հեռուոր լոյսի մը, վարդերու փունջին մէջէն մտեցն փունջի մը հեռուոր լոյսէն ողեւորուեցաւ... Սիրտը տրոփեց: Կանացի ձեռք մըն էր երկարած իր սենեակէն ներս: Իր կեանքին մէջ առաջին անգամն էր որ արժանի կ'ըլլար նման ուշադրութեան մը: Յանկաց բռնել այդ քնքոյ ձեռքը: Եւ հոտոտել մասներն ու մատներէն վեր: Գլուեկի այտերով ու թարթիչներով: Բայց ընկրկում մը սենեցաւ յանկարծ: Անկարելի՛ թուեցաւ իրեն: Եւ հրահեալ դամի մը պէս մտքին մէջ կրկին մխուեցաւ միեւնոյն մտածումը, - «այդպիսի կիներ մը... Մէկը ունի անշուշտ», Լանաց մտապտկերէլ այդ ենթադրեալ «մէկը»: «Իրեն նման դեղեցիկ պէտք է ըլլայ», մտածեց: Անդրադարձումէ մը թխադրուած, նայեցաւ հայելիին... Եւ, ինքն իրմէ յուսահատ, զես ի՞նչ եմ», մտածեց: Փակեց պատուհանը: Հանուեցաւ: Մարեց լոյսը եւ մտաւ անկողին: Բայց չկրցաւ քնանալ: Քունը չեկաւ: Ռոովհեսեւ կրկին եկաւ նոյն ձեռքը՝ իր նրբին մասներով, կիսով հոլանի ու գիրդ թեւէ մը երկարած, բուրբիւռ, անհանգստացնելու, խոտովերու, յուսադրելու եւ միշտ ու անպայման յուսահատեցնելու պինք: Եւ որովհետեւ իր մէջ ցանկութիւնը նո՛յնքան զօրաւոր էր՝ որքան թերահաստութիւնը՝ որոշեց յանդուգն ըլլալ: «Վայրկեանը եկա՞ւ...», յիշեց Օհանին խօսքը:

Առաւօտուն արթնցաւ շատ ուշ՝ խառնակ երագներու մթին ու խոտվիչ հետքերը յիշողութեանը մէջ: Վարէն կու դային դոյլէ, լեցուող ու թափուող ջուրի ձայներ: Արեւը ծեփուած հինայի նման թափուեր ու ծածկեր էր սենեակը: Ելաւ եւ իջաւ վար՝ լուացուելու համար:

Լուացարանէն կը խուժէր թանձր շոգի մը: Եւ խոնաւ գոլորշի մը տարածուեր էր ամէն կողմ: Մտեցաւ: Սիրան, տաշտին վրայ հակած, լուսքը կ'ընէր:

- Այսօր, ուղեցի գիշ մը լուսքը ընել, - ըսաւ Սիրան՝ մէկքը ուղ-

դելով եւ ասին կոնսկովը ետ նետելով իր սեւ ու արատ մազերուն խուրճը: Դէմքին վարդի երանգ մըն էր եկած եւ քրտինքը մաքաւարտացած էր ճակատին վրայ: Հագած էր մուֆ-գոյն շրջազգեստ մը, զոր տընէն կոճկած էր՝ մասամբ բաց թողւով ծալքերը, զորս իրար բերաւ:

- Ասանկ վրայ-գլուխով ալ... կը ներէք, - փորձեց արդարանայ Սիրան:

- Այդպէս ալ հաճելի էք, - յարեց Լեւոն:

Սիրան դեռ կը մնար կանգնած, ասիքը դըժգոյն երկու կողերուն՝ մէջքը աւելի ուղղելու նիւթով մը: Ան չփորձեց կրկին ծածկել իր շրջազգեստին ծալքերը: Լեւոն, այդ կամաւոր թէ անփոյթ շնորհէն խրախուսուած, քայլ մը եւս մտեցաւ, եւ՝

- Ենթահակալութիւն ծաղկեփունջին համար, - բաւ քիչ մը վարանքով, - թոյլ տուէք որ ես ալ փոխարէն նուէր մը ընեմ ձեզի:

- Ո՛չ, միւսիւ Քեաթիպեան, հարկ չկայ... Եղածը ի՞նչ է որ...

Եւ, նկատելով Լեւոնին սեւեռուն ակնարկը.

- Ամուսինս ի՞նչ կ'ըսէ եթէ իմանայ, - աւելցուց, - եւ յետոյ Աբաբախ...

- Կ'ըսէք թէ դո՛ւք գնած էք գայն... այո՛, ես կ'ուզեմ աղուոր շրջազգեստ մը առնել ձեզի... ձեր դեղեցկութեան յարմար...:

Եւ լռեց՝ վախցած վերջին բառին սկիւմայ արտաբերումէն:

Ջերմութիւն մը պատեր էր մարմինը՝ հասնելով մինչեւ ականջները: Բայց նկատելով Սիրանին դէմքին վրայ զծաղրուած ժպիտը, վախվիտելով ջուրը մտնող տղեկի մը նման՝ որ, անդամ մը ոտքը դնելէ ու սարսուռէ ետք, երկրորդ ոտքը կը փորձէ.

- Մուֆ վարդագոյն էրկի տը շիւ՛մ մը... Գիտէ՞ք ինչ լաւ պիտի վաճառէք ձեր սպիտակ դէմքին, - աւելցուց:

- Տեսէ՛ք, տեսէ՛ք, ինչո՞ր ալ կը մտածէք... Մերտի՛... Բայց եթէ հայ վաճառատունէ առնէք... Ափ մը քաղաք է Տիլիպէն: Գիտե՛ն, չէ՞, որ մեր տունը կը բնակէք... ո՛չ, - յարեց յանկարծ, - խօսք կը բերենք վրանիս, միւսիւ Քեաթիպեան... Մարդիկ ի՞նչ գիտեն, թէ դուք մաքուր սըրտով էք... պէտք չկայ... Մենք վարժուած չենք ատանկ բաներու...:

Եւ, ելլելով դուրս, մտաւ ճաշասենեակ:

Ս. Տ.

(Շար. 1)

ՅԻՍՆԱՄԵԱԿ

Երեկ չէ՞ր որ երկու հոգի, երկու ստուեր
Հանդիպեցան: Իսկ երբեք չեն բաժնուեր:

Մէկը, առանց միտին շունչին, չէր գգար թէ
Սիրատույր սիրա մ'իբ կարծէին տակ կը սրփփէ:

Կեանքի ստան էր ուկեհուր. երբ սաստիկներ
Էին հիւզակն ապարանքի պէս շէնցուցել:

Ո՛չ մէկ երազ ունէր մէկը միտէն գաղտնի,
Եւ երկուքին ալ հանգրուանն էր արփեհի:

Երբ ծխանէն կը բարձրանար ծուխը ծաւի,
Անոնց վերել կը ճանաչէր սիրուն արեւի:

Կը շարժէին օրօրոցներ երկնագրանակ,
Մէկը միտէն ետք առին բնի երեք հրեշտակ:

Բայց ո՞ր հասան յիսուն տարի ետք, չեն գիտեր,
Ե՞րբ կը վակուի կեանքի մատենադոստակներ:

Ե՞րբ կը վախճի դէպի անհունը գոյգ մեղուն
Անոնց անշէջ յանրժարայր շրթունքներուն:

Ա՛հ, երեկ էր, երկու հոգի, երկու ստուեր
Հանդիպեցան, Իսկ երբեք չեն բաժնուեր:

ԱՆՈՒՆԴ

Անունդ ենչեց հեռուոր օր մը կեանքիս մէջ.
Եւ դեռ այսօր արեւներուս հարն է անշէջ:

Անունդ եղաւ ազօրքիս մէջ բառ խորհուրդի.
Եւ դեռ հիմա խնկածաղիկ մըն է ոսկի:

Երդունքի պէս անժխտելի, յանրժարայր:
Անունդ մըմունջ շրթունքիս վրայ. գաղտնի համբայր.

Անունդ երբեք չկրկնուած, երբ դուն ընդդէմ
Կը խոստանաս ինձ աչքերուդ լիքը կապայտ:

Անունդ երբեք մոռացութեամբ չմթագնած,
Իմ սնարիս պլպլուն ճրագը ոսկեմած:

Անունդ ենչան արձագանգով խորն իմ արտիս,
Երագներուս գիշերէն երբ կը յայտնուիս:

Անունդ ահա՛ արտիս երուէր, Իսկ սիրագիմ
Լսուած ձայներ՝ որոնք հոգիս օրօրեցին:

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

ԲԻԻԶԱՆԴ ԿՈՍՆԵԱՆ

ԽՈՍՏՈՎԱՆԱՆԷ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՍՏՈՎԱՆԱՆԷ

Ես յանախ կը հարցնեմ ինձգիմքիս.- Ի՞նչն է, որ կեանքը այսօր
սիրելի կը դարձնէ մեզի: Մահուան վա՞խը- սայրելու Շափեհատուրը
կա՞մքը- սայրելու հաճոյքնե՞րը: Արդեօք եթէ մահկանացու չըլլայինք,
պիտի մայն կիրքով փարէի՞նք կեանքին: Եթէ կարենայինք բանի պահը եւ
չբողուլ, որ անցնի: Ներկան ըլլար, տուր, չանցնէր: Զգայիր, որ ամէն
ինչ պիտի հոլովուէր յաւիտեան, կորուստ պիտի չըլլար: Վարդը չմեռնէր,
երգը չլռէր, մարմինը չտգեղնար, կիրքը չմարէր:

Պիտի սիրելի՞նք կեանքը մայն մոլեգմութեամբ:

Արդեօք:

Նուանել, գրկել ու կորսնցնել: Կրկին նուանելու պայտարը: Յուշը,
կարօտը, բզձմեքը կրկին հասնելուն: Ու կ'ըսեմ. ինչքան իմաստութիւն
կայ կեանքին մէջ: Ինչքա՞ն քանաւորեալութիւն:

Իմ ծննդավայր գաւառական քաղաքն էր իմ աշխարհը: Թերեւս ա՞-
ւելի փոքր.- քաղա, մայրնի տունս, քանիքն ու առատադին գերանները:
Ազա մեծցաւ աշխարհս: Ափրիկէ, Երասպա, Ատլանտեանն ու Ամերիկա,
եւ հազարականը: Վաղը, քերեսու Լուսինը: Հրատը: Սկսիլ կեդրոնէ մը,
ընդլայնելի, ծառայիլ, հալո՛վուելի, այսպ' կծկուիլ, կծկուիլ, քանի մը քիզ
հոգի տակ:

Անս հոս է, որ զգացապաշտ կը դառնամ: Զեմ կրնար վախճանի
մտսին առաքկայական ըլլալ, պաղ տրամաբանի, հաշտարար ազիտ մեք-
անհալ: Իմ մահս, վերջս, անդա՛րդը.- չեմ կրնար անյոյզ մնալ: Այսօր
մեծութիւն, տարածք ու բռնիչ, արկածախնդրութիւն եւ խիզախում, նուա-
նուան աշխարհներու եւ անմարմին հարստութիւններու.- այսօր խեղճ,
անխառնուակ, փոքր, փոքր վախճանին յանգնելի:

Երբ այսպէս կը մտածեմ, յուսահատ տենդ մը կը վարակէ գիտ:
Կ'ուզեմ փարիլ, նուանել, քանդել, այրիլ ու հրկիզուիլ...

Այն ինչ որ կ'ուզեմ ըսել, պիտի աւելի հեշտութեամբ գրեմ: Գրելը
մտերիմ է եւ անկեղծ: Մարդ աւելի համարձակ է՝ երբ կը գրէ: Եւ այս-
տեղ հակասական բան մը կայ. յօսելը կը թախ եւ հետք չի ձգեր, միայն
գիրը կը մնայ եւ անջնջելի է:

Ինչ որ պատահեցաւ մեր միջեւ, անվայելու՛նչ էր արդեօք: Մեր ըն-
կերային ընթանումներով, գիտեմ, արգիլուած էր ու մեղաւոր: Եւ սա-
կայն, գեղեցիկը յանախ արգիլուած է ու մեղաւոր: Իսկանը.- անկե՞ղծ
էինք մեր զգացումին մէջ: Պէտք չէ մտնալ, որ գեղեցկութեան զգացումը
ծնաւ ինձի հետ: Ինչ որ ծնած է ինձի հետ, երբեք պիտի չամչցնէ գիտ:
Զգացումը ամենատղիւն է էութեան: Առանց անուխի անհետար է կրակ վա-
ռել: Առանց խիզախելու, վտանգի ու խեղճութեան, անկարելի է կեանքը
նուանել:

Ի հարկ է, պէ՛տք է դարձնենք: Ամէն ինչ վերջ մը պիտի ունենայ:

Եւ, ի վերջոյ, կարելի չէ ընկերութեան յաղթել: Լորտ Պայրըն, Ռեմպրանտ, Պատկեր եւ ուրիշներ: Եթէ մեր գաղտնիքը երեւան ելլէ, աղտ կը սպասէ մեզի եւ կործանում: Ամօք, գայթակղութիւն, անարգանքի սխնդ: Ընկերութիւնը ի վերջոյ կ'առնէ իր վրէժը: Եւ գեղեցկութիւնը գոնեակութեան կը փոխուի (մեծագոյնը ռոբերտութիւններուն): Վերացումը՝ սուլալու: Վայրկեանի մը հանդիման համար, կեանք մը ամբողջ հատուցանել: Յիմարութեան պահու մը, մարգարիտներս խորունկ ջուրերուն ձգեցի: Իրաւունք չունէի, գողցած երանութիւն մըն էր: Մածուկ էր եւ ծածուկ սէրերը մեղաւոր են: Լոյսէն կը խորշին: Երբ կու գայի լոյսին յանդիման, աչքերս կը կծկուէին, գլուխս հպարտօրէն չէի կրնար բռնել: Մարգոց աչքերուն չէի կրնար մայիլ:

Արեանս մէջ կը յամենար հեշտանքին երանութիւնը: Արեւ մը, որ ուրիշ տարածութիւններ կ'ողջէր: Եւ ախորժակը, ծարաւը չյագեցող: Մեղքին դէմ անդիմադրելի յափշտակութիւնը: Եւ մեղքին խոհանարութիւնը, աւօրի գգացումը: Ու պատահածին հրեւումքը, յաղթանակին գինովութիւնը: Նարե'ն, նորե'ն: Ի գին վտանգին, նուաստութեան, ամօքին: Որովհետեւ չմեռնող քան մը կայ հոս: Ապրելու կայր կամքը, գինովութիւնը, տենդը, սլացքը, խիզախումը, մտեւան կոյտիւր: Վերջանալու, մեռնելու վախը:

Մեռնելի վախցող եզրագոյնը, գոհուած մարմինները, հոգիին վերադարձը Նեղոսի վրայէն: Այս վայտն է գրգիռը արուստին: Եթէ մենք յախտեան ապրելիք, պիտի չ'առնուէինք գեղեցկութիւնը սեւեռելու մասին:

Պատմաբ, մղիչ ուժը, պատասխանատու՝ անցնող պահն է: Հասարակ վայտը: Ջգալ, որ դեռ կենդանի ես, կա'ս: Պիտի ըլլաւ դեռ անժամանակ տարածութիւններ: Պիտի գգաս, արձակուիս վեր եւ գահավիժիս: Կեանքը Քաղցր պիտի ըլլայ, աչքերդ պիտի ըմպեն, ձեռքերդ գգան քերտութիւնը, եւ խենթութիւն պիտի ըլլայ:

Բայց, կ'անսպարե'մ արդեօք: Կանգալաւ եմ եւ արբեցած: Միշտ գինով եմ կեանքով: Կեանքիս պատմութիւնը՝ պայքար գգայապաշտ արբեցութեան եւ բարոյական մարդուն միջեւ: Այս երկուութիւնը: Տարեբեմն պողպատը եւ ընկերային կաշկանդումները: Գանալէժ երեշտակ եւ Աստուած: Մեղքը եւ մարմնեղէնին ոգեգինացումը:

Ինչո՞ւ հակադրել, սակայն: Մէկը առանց միւսին անգոյ է: Հակասութիւնը պատրանք է: Ինձի համար մարմինն ու ոգին միշտ միասին են եղած եւ անբաժանելի: Ես սիրած եմ փրկասփանները եւ առած միաժամանակ: Սիրած եմ անոնց քափանցումները, յանդուգն վերլուծումները. բայց կը հակադրեն, մասը կը մեկուսացնեն ամբողջէն, ամուլ են, իրենց միտերը պաղ են: Կեանքը կը հոսի ու կը տրոփէ, գրասենեակներու մէջ կը նուազի: Կեանքը միայն կարելի է գգալ իր հոսանուտին, ոչ աշխատանքին մէջ:

Այնպէս որ, ո՞վ մեղաւոր, արգիլուած սէր, ներէ յանդգնութեանս, խենթութեանս, մարդկայնութեանս: Մեղքի մասին չեմ խօսիր. դուն անմասն չես: Դուն գուրկ չես տկարութենէ, մարդ ըլլալու գինովութենէ: Նոյն ատաղձէն եմք կազապարուած: Մի դատասպարտեր գիւ մեղքերուն համար, որոնք ասանց քեզի անհնար էին: Որոնք սկիզբէն էին եւ պիտի ըլլան դեռ երկար...

Բ. Կ.

Լոս Անճելոս

ՆՈՒՊԱՐ ԶԱՐՈՒՏԵԱՆ

ՄԱՀՈՒԱՆ ԿԱՄՈՒՐՁԸ

(Վ Է Պ)

Գ Ի Ր Ք Ա Ռ Ա Ջ Ի Ն

ԱՂԱՂԱԿՆԵՐ ԱՆԳՈՒՆԴԻՆ

ԳԼՈՒԽ Ծ.

Վաճան կ'երթնեկէր սենեակին մէջ, անհամբերութեան բոցը սրտին: Ակնարկ մը կը նետէր դէպի խոհանոց, ուր մայրը իր յաւիտենական ամանները կը լրտար, յետոյ կ'երթար մինչեւ պատուհանը, կը դիտէր բակին դուռը: Հայրը կ'ուշանար եւ սնտուկները հոն կը մնային՝ լքուած զաւակներու պէս: Առաջին ուրիշակը, առաջին դրացին, որ պատըշգամ էլլէր պիտի նշարէր զանոնք, պիտի հետաքրքրուէր:

Յանկարծ խենթ փափաք մը բոցափառեց ուղեղը: Կ'ուզէր տեսնել, ձեռնել այդ դէնքերը, որ քանի մը օրէն պիտի զինէին քաջ Ֆետայիներու վրիժառու բազուկները: Անոնցմէ արձակուած իւրաքանչիւր զնդակ պիտի փրկէր հրեշտականման մանուկի մը կեանքը, եւ լլուկըւած կնոջ մը պատիւը: Այդ մետաղէ ապարկաները ուժի, քաջութեան եւ ապաւովութեան գործիքներ էին: Որքան կը փափաքէր ունենալ այդ հրացաններէն մէկը, փախչիլ այս պատուհասուած քաղաքէն, բարձրանալ լեռներուն անմատչելի զաղաթները, հոն՝ ուր մահուան սիրահարները, քաջ անձնուրացները արծիւներու պէս կը խոյանային փրփրացող թրեմբներու վոհմակներուն վրայ, եւ

աչքի դէմ աչք, ահռայի դէմ ահռայ գոռալով կը սարսափեցնէին նոյնիսկ Սթանպուլի պալատներուն մէջ պատաստրուած Կահնապետները:

Ա՛խ, եթէ այս անիծեալ սնտուկները կղպուած ըլլային՝: Վաճան քալեց մինչեւ ջրհորին եզերքը եւ այդ տեղէն դէտեց սնտուկները: Անոնց գոյնը ժամանակին մութ կապոյտ եղած ըլլալու էր՝ բայց աղտը եւ փոշին անձանայելի կը դարձնէին անոնց խկութիւնը: Քանի մը քայլ մ'օտեցաւ: Հայրը շեկած պէտք էր դէնք մը եւ հարիւրի շփ փամփուշտ վերցնէր եւ պահէր տան մէկ անկիւնը, եւ եթէ նոյնիսկ հետագային չկարենար Փետայիներուն միտնալ, գոնէ, ի պահանջել հարկին կը պաշտպանէր Շուշանիկը, երբ վտանգ մը սպառնար անոր:

Պափաքիչներէն մէկուն վրայ նշարեց զիրէր, որ բառ մը կը կաղժէին եւ ըտի՛վ՝ թուանշան մը՝ 18 706: Ուղեց թըննել կղպանքը, տեսնելու համար, թէ կարելի՞ էր զայն դիւրութեամբ բռնաբարել... Յանկարծ սարսուռ, զարմանքը ցնցեց իր սմբողլ էութիւնը: Կղպանք չկար սնտուկներուն վրայ: Ինչպէ՞ս կըրնար ըլլալ այդ, երբ աչքով տեսած էր բանալիները հօրը ափին մէջ:

Առաջին սնտուկը բացաւ: Հոն ո՛չ հրացան կար, ո՛չ ստրճանակ եւ ո՛չ ալ

արդիական ձևն առուար: Միայն հրացանի քանի մը ժանդոտած կոթեր, ատրըճանակի անճանաչելի կտորներ եւ երկաթէ խողովակներ: Բացաւ երկրորդ անտուկը. հոն ալ գտաւ զբեթէ նոյն րաները:

Ի՞նչ կը նշանակէր այս բոլորը: Ո՞վ էր պատրաստողը այս շարաշուք կատակերգութիւնը: Այդ աւազակները հայրը խաբեր էին մանուկի մը պէս: Անմիջապէս որ ան տուն վերադառնար, պիտի իմացնէր եղելութիւնը, պիտի հասկցնէր, թէ այդ բարեկամ եւ վստահելի կարծրած մաղսաննդերը, շարաշար եւ շնակունորէն գործածած էին իր միամտութիւնը...

Ինք հայրը լա՛ւ կը ճանչնար. դիւրին խարուղներէն չէր, բայց այդ խընդրին մէջ անմիտ երեխայի մը պէս վարձըւած մաղսաննդները, շարաշար եւ թիւն իսկ չէր քննած ստանալու պահուստ. կարծես առաջուրնէ զիտէր: Կըզպանքներն ալ՝ ուրիշ պատմութիւն: Ուրեմն այդ առարկաները, որ ձիւտորը դրած էր հօրը ափին մէջ, անտուկներուն բանալիները չէին կրնար բլլալ: Բայց ի՞նչ էին արդեօք...

- Յուզայի երեսուն արծաթները, անպայման, - մտածեց վահան, վերազանդաւումով իր առաջին կասկածներուն:

Եթէ այս խնդրին մէջ խարուղ մը կար, ո՛չ ձիւտարներն էին եւ ո՛չ ալ հայրը: Ո՞վ սակայն: Առաջինը ինքն էր, բայց կար ուրիշ մէկը, որուն համար կը լարուէր այս սաղայելական թակարդը... Մութ ամպ մը ծածկեց իր քիչ առաջուան խանդավառութիւնը, եւ այս յայտնութեան որոտումին տակ, վշուր-վշուր եղաւ այն համակրանքը, որ սկսած էր ծնիլ սրտին մէջ իր հօրը հանդէպ: Ո՛չ, հայրը չէր ուզեր օգնել իր հայրենակիցներուն: Ան խաբարձ մըն էր, վատ դաւանանք մը, որ կը ծախէր, շատ չնչին քնով՝ մը, այրիներուն արցունքը, կոյսերուն պատիւը, որբերուն հողին եւ երիտասարդներուն արիւնը. դիակներն իսկ կը վաճառէր, կանխիկ դանձելով անոնց գինը:

Եւ այս վատ էակը, որ իր հայրն էր, հիմա կ'ուզէր պղծել իր մաքուր հողին, կը ջանար գինք ալ նետել տիղմին մէջ, իր ձեռքերն ալ ներկել անմղներու անտեսանելի բայց տնջնելի արիւնով: Մեծ եղբայրը՝ Արշակ, արդէն մինչեւ վիզը մխրճուած էր աղտեղութեան մէջ: Աստուած իմ, երկու դաւանան նոյն երդութիւն տակ: Իր մայրը տեղեակ էր այս րաներուն, բայց չէր համարձակեր ձայնը բարձրացնել եւ դատապարտել այս երկու սողուններուն սրիկայութիւնները: .. Բայց ո՛չ, մայրը յաճախ կը վիճէր անոնց հետ, կը վիճէր իր բացակայութեան: Եւ հասկցաւ, թէ ինչո՛ւ խեղճ կնոջ այգերը միշտ կարմիր էին եւ գլուխը՝ կախ: Կը տառապէր, կը զօպէր ինքզինքը, չպղտորելու համար իր մաքուր հողին:

Յարդ գինքը ձգած էին աղտոտ խըճոյքէն դուրս: Հայրը հասկցած էր, որ իր կրտսեր տղան դաւանանի խմորով չէ շինուած եւ զինք հեռու պահած էր իր դաւադրութիւններէն: Հիմա կը հասկընար, թէ ինչո՛ւ նոյնիսկ պատերազմէն առաջ, ամէն հայ մարդ երես կը դարձնէր իրենցմէ: Նոյնիսկ ազնիւ ու բարի Եռշակն էր, սրտին մէջ դատած ու դատապարտած բլլալու էր գինք. ա՛յդ կը տեսնէր անոր աչքին մէջ, անոր տխուր ժպտին մէջ:

Երկու դաւանան մէկ երդիքի տակ, կազիրեաններու երդիքին տակ: Քրիստոս նոյնիսկ չնեղեց դաւանանին: Ինք, որ պարզ մահկանացու մըն էր, կարող չէր ընելու այն՝ ինչ որ չէր ըրած Աստուածորդին: Պէտք էր արիւնով մաքրէր այս երկու արասները: Դաւանանին հոտող արիւնը միայն կրնայ մաքրել անոր գործած սճիւրներուն հետքերը:

Հիմա կը գուշակէր, թէ ինչո՛ւ երկաթեղէններով լիցուն այս երկու սրնտուկները բերած էին հոս եւ թէ որո՞նք էին այդ ձիւտարները:

- Բայց որո՞նք զէմ սարքուած էր այս նենգ դաւադրութիւնը: Ի՞նչ պէտք էր այս քան զգուշութիւններ առնելու որդէն դատապարտուած զոհ մը թակարդը ձղելու համար: Արդեօք զոյուլիւն

ուենէ՞ր ձայն մը աշխարհիս երևո՞ւր՝ ծառանայրու համար այդ բոլոր վայրագութիւններուն դէմ, որ կը դործէր թուրք կառավարութիւնը: Յանցապարտ ու անձկազին մուրթակին վրայ կը տիրէր քար լուսթիւն մը. եւ եթէ չըլլային մեռնողներուն աղաղակները, պիտի կարծուէր, թէ խաղաղութիւն կը տիրէ այս կողմն աշխարհի:

Արդևոք հօրը ներած էութեան մէկ անկէնը տակաւին առկայծ կը մնա՞ր պատուոյ նշոյլ մը, խղճի նուաղկոտ աւաշ մը, որ արգելք ըլլար անոր սանձարձակ դործունէութեան: Միմոն կազիրեան կը քաշուէր բացէ ի բաց դահիճներուն մատնանշելու իր ընտրած դոհը:

Հիմա դժուրային մեքենան յարուած էր ճարտար ու անզուժ մեռքերէ: Ո՛չ մէկ մարդկային ուժ կրնայ կիցնել անոր անիւներուն թաւալումը: Վահան պահ մի մտածեց անհետացնել սնտուկներուն պարունակութիւնը. շրհորը քաւական խորունկ էր: Բայց պիտի կարենա՞ր բան մը փրկել: Այսպիսի հազարաւոր սնտուկներ կը դստուէին զինուորական մթերատոցներու մէջ եւ հօրը պէս մարդիկ չէին պակսեր իր ազգին մէջ այսպիսի մութ արտաքներ կատարելու պատրաստ:

Հայրը շուտով պիտի վերադառնար: Ի՞նչպէս պիտի նայէր անոր Յուզայի աչքերուն մէջ. ի՞նչպէս պիտի կարենար մտիկ ընել այդ կեղծ ձայնը, որուն արտասանած իւրաքանչիւր բառը մեղր էր երեւութապէս, բայց թոյն ու աղտեղութիւն կը ծածկէր: Եթէ վայրկեան մը տուէր մնար այս երգիքին տակ, չնչէր այս ներած մթնոլորտը, ինքզինքը մեղրակից պիտի զգար այդ բոլոր վատութիւններուն, որոնք հոս կը պատրաստուէին: Պատե՛րն իսկ կը բուրբէին կեղծաւարտութիւն օս դաւաճանութիւն:

Գուրքը, այս անիծեալ գրան սեմէն անդին, մահը ասոյդ էր, ինչպէս խաւարի վերաբերուն, որ կը տարածուի քաղաքին վրայ, երբ լուսաւարուած սենեակէ մը ելլելով՝ ոտք կը դնես փողոց: Բայց կար ազատութեան նշոյլը, ճշմարիտ ու պատուաւոր հայ մը մնալու յոյսը: Գուր-

քը՝ համակերպող ու վատ խամաճիկ մը պիտի չըլլար այլեւ, այլ անկախ մարդ մը, որ կրնայ մաքառիլ իր եղունգներով իսկ փրկելու համար սիրուած էակի մը թանկագին կեանքը կոտ մեռնիլ՝ դահիճ մը սպաննել փորձելով: Երբեմն թաւաճայն մը կը բարձրանար ներսէն, սպաննէ՛ դաւաճանը, սպաննէ՛ վատը: Բայց ինք չէր ուզեր հայրասպան մը ըլլալ, ազոտուել իր մաքուր ձեռքը այդ հարսաւատ ու սեւ արիւնով, չէր ուզեր մտնուանդ ծակել իր տառապած մօրը սիրտը:

Վահան նայուածք մը նետեց դէպի խոհանոցը եւ լուռ հրաժեշտ առաւ խեղճ մօրմէն, որ կ'աշխատէր լալով, եւ իր հանապազօրեայ արցունքները կը խառնէր լուսաքի ջուրերուն: Մթնաղը կը ծածկէր փողոցը: Քալեց դէպի դաշտերը, հեռու մարդոցմէ: Շուտով գիշերը պիտի հասնէր եւ իր աստղազարդ ու ազատարար վերարկուն պիտի սփռէր քաղաքին, սնդաստաններուն եւ լեռներուն վրայ, այդ բարձր ու խրոխտ լեռներուն վրայ, ուր բուռ մը քաշորդներ պատրաստ էին մեռնելու զէն ի ձեռին: Վահան զէնք չունէր, բայց պատրաստ էր մեռնելու իր ազգին համար: Քալեց՝ խաւարը օրհնելով, քալեց դէպի արծիւներու բոյնը, ինքն ալ արծիւ մը դառնալու համար:



Քահանային խորունկ ու պազատող ձայնը միայն կը համարձակէր մաքառել կեղեղեղիին մէջ սաւառնող կապարային լուսթեան դէմ: Տասնեակ մը կիներ միայն յանդգնութիւնը ունեցած էին զալու եւ ծնրադրելու խորանին առջեւ, մասնակցելու համար արեւածաղի արարողութեան եւ ազատութիւն հայցելու իրենց ազգին ու սիրելիներուն համար: Լուսթիւնը երթալով աւելի կը թանձրանար եւ կը խեղդէր քահանային տկարացող ձայնը:

Շուշանիկ կը դարձանար ու չէր հասկընար, թէ ինչո՞ւ դժբէթը արձագանդ չէր տար իր հօրը ձայնին, երբ ան ՏԵՐ

Ոգորմնա կ'աղաղակէր: Պատերն իսկ կը
զգային մօտալուստ վտանգը եւ կը թրթը-
ռային, յիշելով մոնկոլական պղինձէ
խոյրերու հարուածները եւ լափիլիզոզ բո-
ցերը, որոնց մէջ կը ճենճերէին ծծկեր ե
յօշոտուած մանուկներ...

Աստիճանաբար քաւանայի մրմուն-
ջին եկան խառնուիլ հեռաւոր ժխորի մը
ալիքները, որոնք երթալով կը զօրանա-
յին: Եկեղեցի տանող փողոցները կը
վխտային ոռնացող ու անասնացած խու-
ժանով մը: Քիչ ետք, ըսկին սալայա-
տակները ճշացին անպուժ ներքաններու
տակ: Այս գաղաններուն վայրապութե-
նէն կը ճչային ծառերը, քարերը, լեռնե-
րը, մոլորակները եւ աստղերը, բայց ի-
րենք չէին լսեր տիեզերքի անդունդնե-
րէն բարձրացող այդ խորհրդաւոր ու ո-
րոտոցող աղաղակները, որոնք օր մը
կտրելով անջրպետներ, պիտի դային ու
աւելին երկրի երեսէն այս վիթածները...

Քսանի չափ զափթիւններ շրջապա-
տեցին եկեղեցին, ուր ծեր քաւանայ մը
եւ տասնեակ կիներ կ'աղօթէին: Խու-
ժանը կը սպասէր փողոցներուն մէջ,
քաղցած բորենիներու վոհմակի մը պէս,
որ զինուորներու առաջին նշանին՝ կաղ-
կանձելով պիտի յարձակի սլխարներու
հօտին վրայ: Բազմաթիւն մը ժայթքած
կոյուղիներու բերնէն, թափառալիկ-
ներ, ազդուացներ, բանտերէ փախած-
ներ, կախաղաններէ ճողոպրածներ, ո-
րոնց կառավարութիւնը պաշտօն տուած
էր թալանելու եւ ջարդելու այրիները եւ
որբերը, որոնց ամուսինները, զաւակները
եւ հայրերը զինուոր տարուած էին սահ-
մանները պաշտպանելու:

Սպան կից մը տուաւ եկեղեցիի կի-
սարաց դրան եւ ներս մտաւ: Տէր Գէորգ
զատրեցուց ժամերգութիւնը եւ դարձաւ
ետ, զինուորականը դիմաւորելու հա-
մար:

- Քեզի՛շ, - ըսաւ հարիւրապետը, -
լիմացանք, թէ դուն կառավարութեան
դէմ դաւադրութիւն մը սարքած ես եւ
դէնքեր կը բաժնես հայ չեթէներու, ըմ-
բոստաններու եւ դասալիքներու: Հրաման
ունիմ եկեղեցիդ խուղարկելու եւ եթէ

պատահի որ հոս կասկածելի առարկա-
ներ դանկ, այն աստիճան վա՛յ քեզի եւ վա՛յ
չատերուն...

- Այստեղ Աստուծոյ տունն է, էֆէն-
տի՛: Հոս խաղաղութեան եւ ազօրքի
սուրբ վայր մըն է. եւ մեր Տէրը մեզի
արդիւած է զէնքեր դործածել... Մեր ա-
ղօթքները կը բաւեն...

- Վստահ եմ որ գիշեր ու ցերեկ
մեր դէմը կ'աղօթես:

- Ո՛չ ոքի դէմ կ'աղօթեմ. մեր Տէրը
ըսած է: «Աղօթեցէ՛ք ձեր թշնամիներուն
համար ե օրհնեցէ՛ք այն ձեռքերը, որ կը
չարշարեն ձեր մարմինը»: Կ'աղօթեմ, որ-
պէսզի Աստուած քիչ մը դուր զնէ ձեր
սրտերուն մէջ եւ քիչ մը խիղճ՝ ձեր
կուրծքին տակ. կ'աղօթեմ բոլոր անոնց
համար եւ օրհնեցէ՛ք այն ձեռքերը որ կը
մեռնին անարդարօրէն...

- Այս պահուս պէտք չունինք զու-
ղօթքներուդ. մեր թշնամիները ճգմելու
համար մեր անյաղթելի բանակները կը
բաւեն...

Սպան հրաման մը արձակեց ու տաս-
նեակ մը ժանտարմաներ վազեցին ներս,
ցրուեցան աջ ու ձախ ու սկսան խուզար-
կել: Սուրբ պատկերները վար նետուե-
ցան, խորանը տակնուվրայ եղաւ, դու-
րբերը եւ բազմոցները անճանաչելի կոյտի
մը վերածուեցան, իբր աւար ծառայելու
համար դուրսը սպասող տնկուշտ հրէշ-
ներուն:

Տէր Գէորգ առիթ մը օգտուելով
զետնէն վերցուց արծաթէ սրբատուփը,
ուր միշտ կը պահէր օրհնուած նշխար մը
եւ դայն պահէց դօտիին մէջ:

- Բացէ՛ք սա դուռը, - հրամայեց
հարիւրապետը:

Եւ զափթիւնները կիցերով կտրեցին
աւանդատան դուռը եւ մէկիկ մէկիկ վար
նետեցին դարակներու վրայ շարուած
դպիրներուն շապիկները: Երեւան ելան
այն երկու սնտուկները, որ նախորդ գի-
շեր, Սիմոն եւ Արշակ կազիրեան բերած
էին պահելու եկեղեցիին մէջ:

- Հա՛, հա՛, - բացադանչեց սպան,
ի՞նչ պահուած է ասոնց մէջ:

- Ասոնց մէջ պահուած են եկեղեցա-

կան շատ հին աղօթագրքեր եւ արժէքաւոր ձեռագրերնք:

Ժանտարմաները բացին կապարիչները: Հարիւրապետին դէմքը դեղնեցաւ: - Դաւաճա՛ն, ստախճա՛ս քեզիչ, դուք պողպտե՞՞ կը շինէք ձեր դրճերը: Այս գործիքներո՞՞վ է որ կը կատարէք ձեր եկեղեցական արարողութիւնները: Քահանան տեսնելով սնտուկներուն պարունակութիւնը, հասկցաւ որ ծուղակի մէջ ինկած էր. բայց որովհետեւ անմեղ էր, չկորսնցուց իր պաղարիւնութիւնը:

- Հարիւրապետ Էֆէնտի, - ըսաւ, - կ'երգնում Աստուծոյ եւ Աւետարանին վրայ, որ այս սնտուկներուն պարունակութիւնէն լուր չունէի. ասոնց գոյութիւնը իմացայ միայն երէկ գիշեր: Ան՝ որ ուղեց զանոնք պահել այս եկեղեցիին մէջ, նպատակ ունէր միայն ու միայն մնասելու ինձի եւ մեր ազգին: Զիս խաբեց ըսելով որ անոնք հին ձեռագրերնք եւ մատենանք կը պարունակեն եւ բերուած են մանքէ մը... Եւ յետոյ, Հարիւրապետ Էֆէնտի, դուք որ քաջ ու հմուտ գիտնորական մըն էք, կ'նշ արժէք կըրնան ներկայացնել այս սնտուկներուն այս քանի մը ժանդոտած խողովակներն ու հրացանի անճանաչելի կտորները: Ձէք կրնար այս քանի մը կտոր մետաղի համար անմեղ մը ամբաստանել իբր դաւաճան եւ ըմբոստ:

- Լու՛, - պտուց սպան, - քահանային երեսին ապտակ մը իջնեցնելով:

Շուշանիկ չզիմանալով այս տեսարանին, առաջ նետուեցաւ. հայրը պաշտպանելու համար: Կը յուսար որ իր շնորհն ու անմեղութիւնը ազդու պատուար մը պիտի հանդիսանային ստահակներու լրբութիւններուն դէմ:

- Շատ մի՛ աճապարհք, գեղեցկուհի՛ս, - ըսաւ սպան շար ծիծաղով մը, - թու կարգը ալ լուսով պիտի գայ, - եւ Շուշանիկը հրեց կիներու խումբին կողմը:

- Պալով սո ժորուբաւոր ստախոսին, գայն Սերայ տարէք անմիջապէս, որպէս զի հարցաքննութի եւ մեղի յայտնէ իր

մեղապիցներուն անունները: Գնացեալները կը պահէք հոս, եկեղեցիին մէջ եւ չէք ձգեր որ ո՛չ ոք մտնէ կամ ելլէ:

Ժանտարմաներէն մէկը առաջ վառ դեց, ամբոխը ճեղքելով: Ձորս հատ ուրիշներ լըջապատեցին քահանան եւ հրամայեցին որ յառաջանայ: Տէր Պէտրոս գլխաբաց քալեց խորանէն մինչեւ դուռը, անցաւ բակը եւ ինքզինքը գտաւ փողոցին մէջ, ուր ալեկոծ խուժանք իր շուրջը կը կաղմէր ոռնացող պատնէշ մը, անդունդ մը՝ ուր կ'եռար թոյնը եւ ասեղութիւնը:

- Ճամբո՛յ տուէք դաւաճանին, ճամբո՛յ տուէք խայիճ քեզիչին, - կը պոտար տոջեւէն քալող զափքիւն:

Եւ խայիճ բառը կը թոէր բերնէ բերան, կը բարձրանար օդին մէջ եւ պիծակներու ամպի մը պէս կը հրահրէր անկայծ կրակներ՝ թաքնուած այս բարբարոսներու արեան մէջ, որոնց առօրեայ դրաղումն էր սպաննել, կողոպտել, բռնաբարել, այդ մոնկոլ ձենկիջ Խաներու միտածներուն, որոնց երեւակայութեան առջեւ կը ծածանէին հայու արիւնով ներկուած դրօշակներ, որոնց վրայ լուսնի մահիկներ եւ երկինքի աստղեր կը տառապէին դարերէ ի վեր, իրենց զովը սեւ գիրերով զրուած ջաղդ, պղծութիւն, քալան բռտերէն:

Ո՛րք Ոսմանի որդիներ. քանի՛ տարիներէ ի վեր կ'ապրէին զրկուած արեան լուսնեքներէ, որ իրենց կեանքին միակ նպատակն էր: Այնպիսի պետութիւնները փորձած էին պիւրնեք զրկել այդ միակ հաճոյքէն: Աղաղակած էին իրենց յուսախաբութիւնը վիճաբողոքներու մէջ. սակարկութիւններ ըրած էին: Եւ իրենց անհամբերութիւնը տանելի դարձնելու համար, օրերով կրճած էին իրենց եղունգները, գլուխներն զարկած պատէ պատ, եւ իրենց երեւակայութեան թափը զօրացնելու համար՝ ծխած էին աֆիոն ու հաշիշ... Վերջապէ՛ս, վերջապէ՛ս, հասած էր երանութեան օրը. բացուած էր հեկայ քերմեսը: Պիտի կարենային հանդարտօրէն անդամատել, յօշոտել, բզկտել այդ երկու միլիոն կենդանի պուպրիկները, որոնք հայ կը կօչէին: 0-

բեր, շարժներ, ամիսներ, տարիներ պիտի ապրէին խելագարող հեշտութիւններու մէջ:

Տէր Գէորգ, շրջապատուած քանի մը ոստիկաններով, կը քայլէր հիմա էրդրումի փողոցներէն մէկուն մէջ, որ կը տանէր դէպի Սերայ, կամ դէպի Մահ:

Լայն փողոցին ճիշդ սկիզբը, քահանան ստացաւ առաջին հարուածը: Տասը շերտէս տարեկան մանչ մը՝ ամբոխէն դուրս նետուելով, ծերունի քահանայի կոնսակին իջեցուց դաւազանի հարուած մը ու անհետացաւ: Քանի մը քայլ անդին, յաղթանակ մարդ մը բռուցքի զօրւոր հարուած մը իջեցուց անոր երեսին եւ քահանան զանգաշելով՝ գետին ինկաւ: Զինուորները միջամտեցին. ամբոխը քեչ մը թուլցուց ճնշումը եւ զոհը ոտքի կանգնելով՝ շարունակեց իր ճամբան: Այս անգամ սկսան տեղացիներ կեղծներ, աղբեր ու քարեր: Բայց որովհետեւ ամէն կողմէ մարդիկ կը խուժէին դէպի թափօրը, կրկին ճնշումը զօրացաւ փոքրիկ խումբին վրայ: Բռուցքի, ոտքի եւ դաւազանի հարուածներ այլևս դադար չունեցան:

Նպարավաճառներու շուկայի մուտքին՝ կացութիւնը վատթարացաւ եւ վտանգաւոր դարձաւ նոյնիսկ ժանտարմաներուն համար: Իրենց ըսուած էր որ զոհը հասցնեն Սերայ, հարցաքննութեան համար: Ուրեմն պէտք էր պաշտպանել անոր կեանքը: Անոնցմէ մէկը զէնքը իջեցուց ուսին եւ սկսաւ օդին մէջ կրակել, միւսներն ալ հետեւեցան իր օրինակին: Որոժանը ետ-ետ քաշուեցաւ, հասկնալով որ տակաւին Արեան Մեծ Պայրամը չէր սկսած:

Փողոցը պարզուած էր գրեթէ եւ խուժանը չէր համարձակեր շատ մօտենալ, շնագայլերու վտանակի մը պէս, որ կը սարսափի իրմէ զօրուոր զազանէ մը: Բայց լակոտներ բարձրացած էին տանիքներու վրայ եւ հոնկէ քարեր կը տեղացնէին: Ոստիկանները կը քաշէին զգուշութեամբ, քահանային տասը քայլ հեռուէն, վախնալով վերէն արձակուած քարերէն:

Հասան դարձուածք մը եւ պիտի մտնէին դոց շուկային մէջ, երբ վարպետօրէն նետուած քար մը, դպաւ Տէր Գէորգի ճակտին: Քահանան պուլսը վեր վերցուց, տեսնելու համար իր դահիճը եւ տանիքի մը վրայ նշմարեց փոքրիկ հասանը, իրեն ծանօթ ու բարեկամ Զիւս Պէյի որդին:

Քանի մը շարժ առաջ, մայրը զայն հկեղծեց բերած էր, որովհետեւ կը տառապէր անծանօթ հիւանդութենէ մը: Իժիշկները ո՛չ մէկ դարման կրցած էին դնել: Եօթը օր, եօթը անգամ քահանան տղան ծուկի բերած էր խորանին առջեւ եւ դիտուն կարողացած էր Նարեկի հրաշագործ եօթը աղօթքները: Եօթներորդ օրը, փոքրիկ Հասան բուժուած էր գինջ տառապեցնող ցաւերէն:

Հասան գիտէր այս բոլորը եւ լաւ կը ճաննար Տէր Գէորգը, բայց թուրքի զաւակ ըլլալով, իր բնազդը գինջ մղած չը բարեբէն դէմ լարիք գործիւու: Այս առաջին հարուածը գինջ շատ գոհ չէր ձգած: Վարէն խուժանը գինջ կը քաջալործութիւնը: Հասան վերցուց ուրիշ քար նը, առաջինէն աւելի խոշոր եւ զայն նետեց մեծ ճարտարութեամբ, որպէսզի հասնի ճիշդ իր նպատակին: Քահանան ձեռքը վանկին տարաւ ու երկրորդ անգամ վերուեցաւ գետին:

Հասան այս անգամ գոհ մնաց իր արարքէն եւ խնդալով վազեց տուն:

- Մամա՛, մամա՛, - պոռաց, - մէկ հարուածով քեզիւը գետին փակցի:

- Ո՛ր մէկ քեզիւը, տղա՛ս, - հարցուց մայրը:

- Այն մէկը, որուն քով տարիք դիս, եւ դիտուն եօթը անգամ աղօթքներ կարողաց:

- Այդ քեզիւը սուրբ մարդ մըն է, եւ քեզի բրած է մեծագոյն բարեբը, քեզ մահէն փրկած է. ինչո՞ւ ըրիք այդ գէշ շուքիւնը:

.. Բայց մամա՛, քեզիւը կեանքու է, խայիլն է: Ընկերներս ըսին որ պէտք է զարնենք բոլոր կեանքներուն. պէտք է բոլորը սպաննենք: Այն մարդը, որ կեանք

քին մէջ կեանք մը չի սպաննեմ, լաւ թուրք չի կրնար ըլլալ եւ ճեննէթին դուռը իր առջեւ միշտ դոց կը մնայ:

— Շատ դէշ յանցանք մը գործած ես, սղախ: Արլայ որ մէյ մըն ալ կրկնես. եթէ քեզիք քեզ անիծէ, կրկին կը հրամանաւս եւ ոչ ոք չի կրնար քեզ բուժել:

Ճ

Ժանտարմաները վերցուցին քահանան եւ խուճը շարունակեց ճամբան, մինչ շուրջը կատարած ամբողջ կ'ոտնար:

Տէր Գէորդ յիշեց Տիրոջ խաչի ճամբան: Երբ կատարած ու ազէտ ամբոխն էր, նոյն մեղսակից զինուորները, նոյն բնամարտիկները: Բայց ինչի՞ պիտի ծառայէր իր մահը:

— Միայն Աստուած գիտէ, թէ ինչի կրնայ ծառայել մարդու մը մահը: Թե՛րեւս, այս վայրկեանիս բազմաթիւ կեանքեր կը խնայուին, որովհետեւ այս կատարած զազանները զբաղած են ինձմտոյ:

Գոց շուկայի խանութներէն շատերը փակ էին: Կը ճանչնար իւրաքանչիւր խանութպանը, հայ թէ թուրք: Միտուած էր բոլորէն, բարի հօր մը պէս: Սգնած էր անոնց, աղօթած էր բուրբին համար, առանց կրօնքի ու ցեղի խտրութեան: Երբ կ'անցնէր, բոլորը ոտքի կ'ելլէին եւ յարգանքով կը բարեւէին զինք: Շատ անգամ կը նստէր անոնց հետ, սուրճ մը կ'առնէր, կը զրուցէր:

Բայց այսօր ուրիշ էր կացութիւնը: Ո՛չ ոք ոտքի ելաւ զինքը բարեւելու: Բոլորն ալ երես կը դարձնէին իրմէ եւ շատերուն զուակները տանիքներուն վրայէն կը քարկոծէին այս կեանքուրը: Այս էր վարձատրութիւնը իր մարդասիրութեան: Իւրաքանչիւր աղօթքի, իւրաքանչիւր օրհնութեան փոխարէն կը ստանար քարի հարուած մը:

— Ինչո՞ւ, — կը մտածէր քահանան, — միշտ անմեղն է, որ կը դատաւարտուի ու կը զոհուի: Երկրի վրայ բարգաւաճելու համար, մարդ միշտ շարադո՞ւրծ

պետք է ըլլայ: Բայց ո՞վ է ամէնէն արդարապէս զահարողը: Դահլ՞ճը թէ զո՞հը: Վա՛յ ստոնց, որովհետեւ շատ լաւ գիտեն թէ ի՛նչ կ'ընեն:

Ու Տէր Գէորդ դիմաց այս մարդասպաններու ցեղին վրայ, որոնց թոռնիկները, սերունդէ սերունդ, իրենց ճակատի վրայ պիտի կրէին անջնջ խարանքը, կնքուած՝ մանուկներու եւ կոյս աղջիկներու երակներէն ժայթքած արիւնով:

Եւ այս ատելութեան ու՛կերանային մէջ, քահանան ինքզինքը երջանիկ զգաց: Որովհետեւ զոհը միշտ կը գերազանցէ դահլճը, որովհետեւ մտնուկի մը ճիւղը, զոր կը խողտողեն դահլճորէն ծիծաղելով, անոր անմեղ նայուածքը կրնայ ցընցել տիեզերքին հաւատարակութիւնը:

Տէր Գէորդ ոչինչ կը զգար այլեւս. ո՛չ լուտանքները, ո՛չ քարի հարուածները: Ահր տեսնեք այլեւս այդ ծուռ քերանները, անասնացած աշքերը, պրկուած բուռնցիները:

Հասաւ Սեբասի լայն հրապարակին վրայ, ոքիմը քրիկ-քրիկ, մարմինը արիւնջուայ, աղօթքը շրթներուն եւ հոգին վերացած: Բոլոր իր մարտիրոս եղբայրները, Սուրբ Ստեփանոսէն սկսեալ, հաւաքուած արքայութեան դրան առջեւ իրեն կը սպասէին:

Ստացաւ վերջին հարուածը, երբ կը փորձէր ստք դնել առաջին ատիճանին վրայ: Վերջին հարուածը, զաշոյնի հարուած մը կոնակէն: Ո՛չ ոք բողոքեց, ո՛չ ոք շարժում մը քրաւ, կեցնելու սերտագործին բազուկը, ո՛չ ժանտարմաները, որ հրահանգ ստացած էին զինքը պաշտպանելու, ո՛չ պաշտօնանները, որ պատուաններու տոջեւ շարուած կը դիտէին տեսարանը: Տէր Գէորդ ինկաւ կոնակին վրայ եւ դաշոյնին շեղքը, որ կը մնար վէրքին մէջ, քիչ մըն ալ մխրճուեցաւ սրտէն ներս:

Այն ատեն զարհուրելի աղաղակ մը բարձրացաւ խուճանէն եւ կրկնուեցաւ Վոսփորի ափերէն մինչեւ Պարսից ծոցը: Բանտերու դուռները բացուեցան եւ զուրս խուճեցին մարդակերպ զազանները: Բեքը այնքան առատ էր, որ զործուարեն-

բու պէտք կար: Եւ մինչ մէկ կողմէն կը տասպալէին ծառերը, զանոնք կախազանի վերածելու համար, տուններու մէջ մարդ, կին կամ երեխայ կը սրէին դանակներ եւ դաշոյններ: Բայց որովհետեւ զոհերու թիւը սահմանափակ էր, պէտք էր անպարեւ, միայն ճարպիկները եւ արագաշարժները պիտի կարենային ողջեր խող-խողել. միւսները պիտի զոհանային դիակները կրկին սպաննելով եւ պղծե-լով:

✽

Գ Լ Ո Ւ Ն Զ .

Նոյն օրը, բոլոր վայրերը եւ բանակի հրամանատարները, կը ստանային հետեւեալ խիստ զազոնի հեռագիրը, որ ստորագրութիւնը կը կրէր ներքին զոր-ծոց նախարարին:

«Թրքական կայսրութեան մէջ, ջրնըլամ է այլեւս հայերու ացրելու իրաւունքը: Կառավարութիւնը իր վրայ առնելով ամբողջ պատասխանատուութիւնը՝ խստիւ կը հրամայէ, որ շինուած յանգիստ օրօրոցի հայ մանուկները: Այս կայսրութեան մէջ այլեւս տեղ չկայ ոչ իսկ մէկ հայու համար: Անմեքի յանցանք մը պիտի ըլլար, եթէ չօգտուէինք այս առիթէն՝ ձերբազատուելու համար այս վնասակար տարրէն եւ սոսկաւ սով մտացութեան մէջ քաղել շայկական հարցը, առնուազն գալիք յիսուն տարիներու ընթացքին:

Ներքին Գործոց Նախարար՝

Թ Ա Ա Ա Թ

Թահսին Պէյ, էրզրումի վայրէն, կրկին ու կրկին կարգաց հեռագրին պարունակութիւնը: Աչքերուն չէր հաւատար: Ուզեց ստուգել անոր ճշգրտութիւնը եւ փոսահելի պաշտօնեայ մը զրկեց բանակի հրամանատարին մօտ, որ ստացած ըլլալու էր նոյն հեռագիրը:

— Ամօ՞թ, ամօ՞թ, — կը պրտար զրասեղանին մէջ երթեւեկելով, — այսքան ինկածութիւն, այսքան վատութիւն: Օրօրոցի մանուկներն իսկ պէտք չէ՞ ինչայոսին եղեր... Գազաններն իսկ երբեմն կը զլան զուրթի նմանող բան մը: Միայն թուրք ժողովուրդին ռիսիքիմ թշնամին կրնայ այսպիսի հրահանգ մը տալ: Թուրք ժողովուրդը երբեք չէ ունեցած վեհ զեկամարներ, որ իրեն ներչնէն բարձր պապափարներ, այլ միայն ու միայն արկածախնդիրներ, որոնք հրահրած են անոյ տգիտութիւնը եւ կիրքերը, զործադրել տալու համար իրենց մութ ծրագիրները... աւա՛ղ:

Թահսին պէյ մինչեւ օրս կարելին ըրած էր խնայելու համար հայերուն: Դէմ կեցած էր, իր նահանգի սահմաններուն մէջ չեթէներու սանձարձակ զործունէութեան:

Երբ պաշտօնեան վերադարձաւ, Թահսին Պէյին երկարեց գոց պահարան մը: Բանակի հրամանատարին պատասխանն էր: Ան ալ ստացած էր նոյն հեռագիրը: Անմիջապէս ժողովի կանչել տուաւ ստաիկանսպետը, ժանտարմաներու հրամանատարը, Իթիֆհատի քարտուղարը եւ պատասխանատու պաշտօնեաներ:

Ժողովը տեւեց ժամեր, ամբողջ գիշեր մը: Վերջի վերջոյ, Իթիֆհատի քարտուղարին տեսակէտը յաղթանակեց եւ որոշուեց առնուեցաւ ներքին Գործոց նախարարին հրահանգները զործադրել կէտ առ կէտ:

Ամբողջ բնակչութիւնը կը սպասէր ժողովի որոշումներուն: Թուրքերը անհամբերութեամբ, իսկ հայերը՝ վախով ու անձկութեամբ: Թուրքեր կը խօսակցէին ու կը վիճարանէին տուներու առջեւ, հրապարակներու վրայ, քառուղիներու անկիւնը: Հայերը՝ զոց զուռներու եւ պատուհաններու ետեւ, կը համբէին պիշերուան ժամերը:

Այդ իրիկուն Զիա Պէյ կանուխ գոցեց խանութը եւ տուն վերադարձաւ: Մանրամասնօրէն կնոյր ու զակիկն պատմեց Տէր Գէորգի գողզոթան: Ինչպէս ամբոխը քարկոծած էր քահանան եւ ինչ-

պէս ան մահացած էր Սերայի աստիճաններուն վրայ, գալոյն մը միտած կռահկին:

- Ե՛ս ալ զարկի, - ըսաւ Հասան Հպարտութեամբ, - եւ երկու անգամ դինք վերաւորեցի քարով, երբ կ'անցնէր մեր փողոցէն:

Զիտ Պէյ լուռ մնաց: Ատենէ մը ի վեր տրամադրութիւնը շատ գէշ էր: Գործերը աւելին ընթանար, որովհետեւ իր բոլոր յանձնարարները գրեթէ հայեր էին, իբր խաղաղութիւնը եւ հանդիսը սիրով մարդ, ան կը նախընտրէր որ այս բոլոր բաները պատահած չըլլային:

Ընթրիքէն ետք, փոքրիկ Հասան անկողին մտաւ ու անմիջապէս քնացաւ: Բայց սարսափելի երազ մը տեսաւ: Այն երկրորդ քարը, որ նկատ էր զահանային դիտուն, վրիպելով իր նպատակահետէն, կը հանդերձէր փողոցի սալաշատակին ու վեր ջատկելով կը դարնուէր իր վրեժուն, զանկէն ճիշդ այն տեղը, ուրկէ վերաւորած էր Տէր Գէորգը:

Հասան վախէն պոռաց քունին մէջ, արթնցաւ ու արթնցուց մայրն ու հայրը: Քրտինքը կը հոսէր մարմնին վրայէն աստակներու պէս, եւ ինք՝ երկու ձեռքերով՝ կը սեղմէր գլուխը: Մայրը ջանաց զինք հանդարտեցնել, առաւ գլուխը եւ զոգցր խօսքեր ըսաւ եւ խրատեց որ աչքերը գոցէ ու քնանայ: Բայց երբ տղան կոպիւրը իրարու միացնէր, աչքին կը պատկերանար զահանան՝ իր արիւնլուայ վանկով եւ ինք կրկին կ'արթնար ու կը պոռար:

Մայրը սկսաւ մտահոգուիլ. պէտք էր բան մը ընել: Զիտ պէյ ելաւ անկողինէն, հազուեցաւ ու փողոց իջաւ բոխիկ մը կանչելու համար: Եւ որովհետեւ կը ընակէր հայկական թաղին մօտերը, գնաց զարկաւ Տոքթոր Բարսեղին դուռը: Ոչ ոք պատասխանեց: Շարունակեց ճամբան մուտքին մէջ: Զարկաւ Տոքթոր Արթիւնին, յետոյ Տոքթոր Մուրատեանին դուռը:

- Ի՞նչ անմիտ եմ, - ըսաւ, - բոլոր հայ բոխիկները ձերբակալուեցան ամիս

մը առաջ եւ զրկուեցան յեմ գիտէր ո՛ր: Անցաւ թրջական թաղը եւ գնաց ափ առաւ իրեն ծանօթ բոխիկի մը դուռը: Բռունցքէ հարուածներ իջեցուց տախտակին վրայ՝ մօտ զուարթ մամ: Վերջապէս սպասուէր մը յայտնուեցաւ պատահանէ մը:

- Տղաս՝ Հասանը մեռնելիք է. ըսէ Տոքթոր Հիթէթին, որ անմիջապէս գայ. ես իրեն կը սպասեմ հոս:

Սպասուէին անհետացաւ եւ հինգ վայրկեան ետք կրկին երեւցաւ պատահանէն:

- Տոքթորը շատ յոգնած է. երէկ շատ ուշ եկաւ տուն, իրե՛ն գացած էր հիւանդ մը տեսնելու, հիմա չի կրնար անկողնէն ելլել:

Երկրորդ թուրք բոխիկը նոյն պատրուակը ըրաւ եւ Զիտ պէյ ձեռնունայն տուն վերադարձաւ: Զայրոյթը արեւմտիկ էր, որ ճամբու ընթացքին սկսաւ բարձրանալ մենախօսել:

- Այդո՛ւշ կառավարութիւն. թուրքէն բոխիկ կ'ելլէ. բոլորն ալ ծոյլ մարդիկ: Ա՛խ, եթէ հայ բոխիկներէն մէկը հոս ըլլար, անմիջապէս կը վազէր հիւանդի սնարին, առանց նոյն իսկ վարձատրութեան սպասելու: Մարդ՝ ա՛տոնց կ'ըսեն. ձինն ու ձմեռ չին բսբ, կը վազեն ու կը վազեն: Եւ այս մարդիկը կ'աջտորուին, կը հեռացուին, որովհետեւ հայ են, եւ կը մնան սա անպէտքերը, որովհետեւ թուրք են: Այս ի՞նչ կարճատեւութիւն, այս ի՞նչ անարդարութիւն...

Մայրը սկսած էր մտահոգուիլ: Կը յիշէր Տէր Գէորգին կարգացած ազօթքները եւ անոնց հրաշագործ ազդեցութիւնը: Ո՛ր էր կը հիմա խեղճ ու բարի զահանան: Ո՞ր տղրակոյտին մէջ նետած էին իր հրաշագործ մարմինը: Մասնեց հազարի եւ ամուսնոյն ձգելով Հասանը երթալ Բարձր թաղը, ուրիշ զահանայ մը կանչելու, որպէսզի նոյն ազօթքները կարգայ իր զուկին գլխուն: Բայց զահանայ պիտի կարենա՞ր գտնել: Բոլորն ալ ձերբակալուած, բանտարկուած կամ աքտորուած էին:

Հասանին նոպաները աւելի եւ աւելի

կը սաստկանային: Գանկը պայթելու աստիճան կը ցաւէր, աչքերը սեւեռած կը մնային առաստաղին, և ա՛յնքան զօրաւոր էր ճնշումը ճակտին վրայ, որ դունդուրը դուրս պիտի ժայթքէին ականպիններէն: Բերանը կը ծռէր. անծանօթ ձեռք մը ծնօտը կը քաշէր դէպի ձախ, ուրիշ ձեռք մը կը սեղմէր կողորդը: Տղան կը հեւար, օգնութեան կը կանչէր հայրն ու մայրը. կ'աղաչէր, կը պողատէր:

Շունը կամաց-կամաց վերածուեցաւ Հոնդիւնի. կռպկրը և շրթուքները չէին գոցուեր այլևս: Եւ խաւարը գրոհ կուտար այս պզտիկ ոճրագործին դէմ, որ պէտքի ալիւս չվայելէ երկար տարինսր կեանքի քաղցր արեւը: Այդը տակաւին չէր ճերմկեցուցած երկինքին սուգը, և կարծիք աքաղաղները չէին երգած իրենց երգը, երբ մահը եկաւ ու անշարժացուց պոկուած մարմինը:

✽

Վահան կը քաշէր խաւարին մէջ, նեղ ու ամայի ճամբու մը վրայ: Այլ կողմը Բալանթէօֆէն լեռը կը ճնշէր տեսարանին վրայ իր մութ զանդուածով: Բայց իր ասպատանելիք լեռները կը գտնուէին սուելի հեռու՝ դէպի արեւելք: Այն նեղ արանէտը պինք պիտի հանէր սուելի լայն ճամբայ մը՝ Բասենի ճամբան, Արաքսի հովիտը և Խուսիկան սահմանը:

Շուրջը լուռ էր ու ամայի: Յանկարծ նետուեցաւ պարտէզներուն մէջ: Խուսիք մը ձիւղերու կու գային իր քալաօ նամբէն և կ'ուղղուէին դէպի քաղաք: Այս առաջին ահազանգն էր՝ իր անորոշ ճանապարհին վրայ: Զիւռերները անցան սակայն քիչ ետք եկան ուրիշներ, ուրիշներ՝ և Լրաւիրուած էին մեծ Քերմեան և կ'անապարէին:

Վահան երկար թափառեցաւ պարտէզներուն մէջ, ուրիշ արահետ մը գլտնելու համար. սակայն, որքան կը քաշէր, ա՛յնքան ինքզինքը կորստած կը դարձ: Այս ձեռով անկարելի էր շարունակել: Առանց զէնքի և պաշարի չէր

կրնար հեռանալ քաղաքէն ու նետուել անծանօթ և վտանգաւոր արկածախնդրութեան մը մէջ:

Վերադարձաւ: Քալեց տակաւին ամայի փողոցներուն մէջ: Արդէն արեւը քարձրացած էր հորիզոնին վրայ, երբ հասաւ հայկական թաղին մտերբը: Շուտաբար վիճակ մը ունէր: Միակ ապահով տեղը տունն էր, բայց ինք վճռած էր այլևս ոտք չկոխել Կաղիրեաններու սեմին ներս: Կը նախընտրէր ձերբակալել, բանտ նետուել, աքսորուել, քան կրկին տեսնել հօրը չիլ նայուածքը:

Մտադրեց մտնել եկեղեցի, ամփոփել, աղօթել և ըստ այն գործել: Ենդեց ճամբան ու քալեց զգուշութեամբ: Ընտրեց ամայի ու նեղ փողոցները: Յանկարծ կոնդ առաւ: Թուլ ժիտը մը կը շուտէր եկեղեցիին կողմէն. մարդիկ կը վազէին նոյն ուղղութեամբ: Ինք ալ միացաւ անոնց: Բայց կանդ առաւ անկուն մը, երբ տեսաւ ռոնացող ամբիւր, որ կը շրջապատէր եկեղեցին: Շահեր պինք կը ճանչնային իբր հայ: Խոհեմութիւն չէր աչքի զարնուիլ:

Կէս ժամ թաքնուած մնաց անկուն մը: Ժիտը կը շարունակուէր միշտ և մարդիկ կը վազէին ամէն կողմէ՝ պոռուով ու հայոյիով: Վահան, պահուած տեղէն կը տեսնէր շրջափակին պատը, որուն քովէն քանի մը ժանտորմաներ կ'երթեւեկէին: Յանկարծ ժիտը սաստկացաւ, որոտաց ժայռերու վարերուդ ալիքներու ազմուկին պէս, յետոյ կամաց-կամաց հեռացաւ:

Վահան ելաւ թաքտոցէն և նեղ փողոցէ մը անցնելով հասաւ անկուն մը, ուրկէ կը տեսնուէր եկեղեցիին մուտքը ու պզտիկ հրապարակը: Տեսաւ ծէք Գլտրը, պինտորներով շրջապատուած, որ առաջ կը քշէին: Խուսանը հետեւեցաւ թափօրին: Ատեն մը ետք, դուրս ելան տասի չափ կիներ, միշտ պինտորներով շրջապատուած: Վահան կը ճանչնար աստեղծ շատեր: Ճանչցաւ մանուանդ և լէցկիներ, որ դանդաղելով կը քաշէր առջեւէն: Բայց ո՛ր էր արդեօք Շուշանիկը: Լուսթիւնը կամաց-կամաց տիրեց

Թաղին մէջ, եւ Վահան կը պատրաստուէր ղուրս ելլելու թաքստոցէն, երբ յանկարծ սպայ մը յայտնուեցաւ ղրան մէջ, ու բարձրաձայն անուն մը պոռայ: Զինուորներէն մէկը վազելով ետ եկաւ եւ քարեւի կեցաւ: Սպան Հրահանգ մը տուաւ եւ ետ մտաւ եկեղեցի:

Հետո՛ւն, հրապարակի կողմէն, հեռացող խուժանը կը շարունակէր իր պոռչտութիւնները ամէն անգամ, որ Տէր Գէորգ հարուած մը ստանար. հոս կամայ-կամայ կը տիրէր լուսթիւն մը, որ խաղաղութիւն չէր, այլ գերեզմանային մթնոլորտ մը:

Յանկարծ ներսէն բարձրացաւ երչ մը, անմարդկային, անդրահական, սրբասակեղեք: Վահան ատգունեցաւ յանկարծ, շրջելով պրկուեցան: Այդ ճիւղը դաշտնի մահացու հարուած մըն էր միտած իր սրտին: Իր սիրելիին ձայնն էր, քաղցր ու անմեղ Շուշանիկին ձայնը, թուշուկի մը պէս ինկած էր գազանի մը ճիրաններուն տակ, որ չգոհանալով հայրը մահուան դրէկէն եւ մայրը՝ բանտի ու աքաղի, հիմա կը բռնանար անպաշտպան աղջկան:

.Եւ ան ճակատագիրը զինք բերած էր հոս, որպէսզի ի՛նք ըլլայ արդարութեան գործիքը: Բայց Վահան ո՛չ ասորճանակ ունէր եւ ո՛չ ալ դաշտն: Բայց ունէր իր սէրը եւ իրը մարդ ապրելու արժանապատուութիւնը: Զէր կրնար ձգել, որ իր աչքերուն առջեւ կատարուի այս քստմեղի ոճիքը: Եթէ այս վայրկեանիս յմեռնէր Շուշանիկին համար, ի՛նչ կ'արժէր իր սէրը: Ի՛նչ կ'արժէր այն գեղեցիկ երազը, որ երբեք պիտի չիրականանար: Խորհելու ատենը չէր. պէտք էր մեռնէր Շուշանիկին համար:

- Թո՛ղ Աստուած օգնական ըլլայ, - ըսաւ Վահան ու խաչակնքեց: Ոտքի հուաւ, հանեց կօշիկները ու քանի մը քայլ ատաւ դէպի առաջ:

Զինուորը կռնակը իրեն դարձուցած՝ պլանիկ մը կ'ուրէր: Ինքզինքը ապահով կը զգար. ո՞ր կեովուրը պիտի համարձակէր մօտենալ այս վայրին, ուր թուրք զինուոր մը պահակ կը կենար: Իրենց

համար հայերը մուկեր էին՝ թաքնուած մատաններուն խորքերը:

Վահան քիչ մըն ալ յառաջացաւ եւ շուարած կանգ առաւ: Կարծածէն շատ աւելի մօտեցած էր: Նահանջել անկարելի էր հիմա: Զինուորին անշարժութիւնն ու անհագութիւնը զինք քաջալերեցին: Երկվայրկեան մը պրկեց մկանները եւ յովազի մը պէս նետուեցաւ մարդուն վրայ եւ անոր հաստ վիզը առնելով ձեռքերուն պողպատէ աքցանին մէջ, իր ամբողջ ուժով սեղմեց, որպէսզի ճիշդ մը շարձակէ:

Վահան սեղմեց կատաղութեամբ, յուսահատութեամբ: Պահակին թեւերը օկըսան օդին մէջ թափահարիլ, կողորդէն ելան իտու հռնգիւններ, քանի մը անգամ մարմինը ցնցուեցաւ: Կը փորձէր ինքզինք ձերբազատել, բայց Վահան կը շարունակէր սեղմել, մասները կը խրէր անոք իրշափողին կարծրութեան մէջ եւ երկվայրկեանները ժամերու պէս կը վանդաղէին, կը յաւիտենականային: Ներսէն Շուշանիկ կը շարունակէր ազադակել, ճշալ, օպնութիւն հայցել:

Յանկարծ պահակին մարմինը թուլցաւ, ծանրացաւ ու թեւերը կախուեցան ու փլաւ գետին: Վահան հանեց անոր սուիկը եւ նետուեցաւ քակէն ներս: Եկեղեցիին դուռը բաց էր: Շուշանիկին ազադակները հաղիւ կը լսուէին. զիմադրութիւնը տկարացած ըլլալու էր: Վահան գիտէր, որ եթէ աղջիկը իր պատիւը կորսնցնէր, ամօթէն ազատուելու համար անձնասպան կ'ըլլար եւ ինք կրկին կը մնար առանձին՝ իր երազին փլատակներուն տակ:

Երբ եկեղեցիին դուռը անցաւ, սպան բոտոցքի հարուածով մը գետին նետած էր խեղճ աղջիկը եւ կը պատրաստուէր իր անտոնային կիբըը յազեցնելու, թորանին առջեւ, սրբապօծելով ե՛ւ կրօնքը ե՛ւ պատիւը հայ աղջիկն:

Վահան քամիի մը պէս խոյացաւ անոր վրայ: Սպան՝ որ տեսած էր անոր շուրջը, ոտքի կանգնեցաւ. զիմադրելու համար, եւ ատրճանակը հանելով կրակեց: Խուճապ կար անոր արիւննոտած աչ-

քերուան մէջ: Կրակեց երկրորդ անգամ, Վահան տաքութիւն մը զգաց ուսին վրայ, սակայն կանդ չուտաւ: Մտորկային մեքենայ մը դարձած էր, որ կ'անդդաւանայ մտքը: Երկու մարմինները իրարու զարնուեցան եւ սպան փռուեցաւ դետին, խորանին առջեւ: Վահան սուինը բարձրացուց ու զարկաւ իր ամբողջ ուժովը. Պողպատէ շնորք ծակեց կուրծքին վանդակը, սիրտը ու թշնամին ճլած սալախոտակի քարին վրայ: Կրկին քաշեց սուինը ու կրկին զարկաւ: Եւ թուրքին արիւնը սկսաւ հոսիլ, տարածուեցաւ դետին, մաքրադարձելու համար սրբապղծըւած սալախոտակը:

Վահան պիտապոտոյտ ունեցաւ եւ կեցցու ծունկերուն վրայ: Կտտարած այս գերազոյն ճիգը տկարացուցած էր մկաններուն ամբուսթիւնը: Բայց ամբողջ էութիւնը կը ծփար զոհուանկութեան ալիքներուն վրայ: Ինքզինքը թեթեւ կը զգար, որովհետեւ փրկած էր Շուշանին կեանքն ու պատիւը, եւ իր ճակտէն սրբած էր դաւաճանի մը սրբը, եւ արդարութեան նժարին մէջ պղտիկ բուն մը աւելցուցած էր՝ այս երկու թուրքերը սպաննելով:

Բարեբախտաբար, ուսին թեթեւ վէճքը, որ կաթիլ-կաթիլ կ'արիւնէր, չձգեց որ ամբողջովին յանձնուի ինքնամոռացութեան: Տակաւին շատ ընելիք կար, Թշնամին ամէն տեղ էր, իւրաքանչիւր քարին ետեւը, իւրաքանչիւր փողոցին ծայրը, գիւղերու մէջ, լեռներու լանջին, թերեւս եկեղեցիին շուրջը, եկեղեցիէն ներս:

Պէտք էր վայրկեան մը առաջ հեռանար այս վայրէն, այս երկու դիակներէն: Կրկին ուժերը հաւաքեց ու կանդնեցաւ: Սպային ծանր գոտին կապեց իր մէջքին, ատրճանակը դրաւ պատեանին մէջ ու դուրս ելաւ: Զինուորին փամփուշտակար ճանեց ու անցուց ուսին, ինչպէս նաեւ հրացանը եւ սուինը ու կըրկին մտաւ եկեղեցի: Շուշան անշարժ փռուած էր սալախոտակին վրայ, փորձեց ուշքի բերել զայն անուշ խոտերով. անկարելի եղաւ: Արդեօք մեռե՞ր էր խեղճ աղջիկը սարսափէն եւ յուզումէն: Զեռքը

տարաւ կուրծքին. սիրտը կը տրոփէր տակաւին:

Հետուէն լսուեցան ձիերու սմբակներ, Կրնային հոս դալ եւ փնտուել իրենց սպան: Վահան Շուշանիկին մարմինը առաւ թեւերուն մէջ ու զէպի դուրս քալեց, մինչ վերքին արիւնը կաթիլ-կաթիլ կը հոսէր գետին: Անցաւ դպրոցին քովէն: Անդին կար վտանգաւոր բացութիւն մը և քիչ մը անդին՝ քանի մը փլատակ տուններ, ուր աշխուկ խաղցած էր ժամանակին իր գասրնկերներուն հետ: Միակ փրկութիւնը հոն էր, Աճապարեց: Այնքան ծանրաբեռնուած էր, որ ամէնէն պղտիկ քարը գինք կը սայթաքեցնէր: Վերջապէս մտաւ աւերակներուն մէջ: Բարձրացաւ կոտորուած աստիճանէ մը, որուն տախտակները յուսահատ ճիչեր կ'արձակէին այս անակնկալ ծանրութեան չզիմանալով եւ իր թանկագին բեռը դրաւ դետին: Տանիքը կիտուեր էր, պատերուն աղիւսները հողի վերածուած էին, եւ պատուհանները կը նմանէին քայայտներու մուտքին:

Վահան ընեց զինքերը, համրեց փամփուշտները ու զոհ մտաց: Եթէ քան զինուոր վրան յարձակէին, ինք կըճար տնոնց դիմադրել իր այս դիրքը օգտագործելով: Բայց այստեղ կարելի չէր մնալ յախտեան, ո՛ր ջուր կար եւ ո՛չ ալ ուտելիք: Առժամեայ թաքստոց մըն էր, որ կընար շուտով վերածուիլ թակարդի: Գիչերը՝ պէտք էր հեռանար...

Տկար հառաչ մը լսեց: Շուշան բացած էր աչքերը եւ շուարած կը գիտէր շուրջը: Վահան դարձաւ իր կողմը:

— Ո՛ւր կը գտնուիմ, ի՞նչ պատահեցաւ...

Վահան ձեռքը դրաւ անոր ճակտին ու բառ մը չկրցաւ արտասանել:

Եւ յանկարծ աղջիկը յիշեց, առտուան եղելութիւնները եւ վախով շուրջը նայեցաւ: Ի՞նչ զարհուրելի օր. հայրը, մայրը, ինք եւ ուրիշներ: Բայց ինչպէս ինկած էր այս վայրը: Ո՛ւրկէ եկած էր Վահանը: Ո՛ւր էին զինուորիները. պղտելի՛ սպան... Շուշան աչքերը գոյց. ամօթ բառը կը բոցավառէր ճակատը:

տը: Դէժըը դարձուց պատին ու սկսաւ
հեկեկալ, կորսուած մանուկէ մը պէս,
անձանօթ զարաքի մը փողոցներուն ժշկ:

Վահան խօսեցաւ, խօսեցաւ, ուզեց
մեղմացնել անոր վիշտը: Պատմեց տու-
նէն փոխուտը, թափառումները քաղա-
քէն հեռանալու համար, իր վերադար-
ձը:

- Մինակ դո՛ւն կայիր, որ զիս կը
կապէր այս քաղաքին: Նախագացում մը
զիս առաջնորդեց ա՛յն ճամբէն, որ եկե-
ղեցի կը տանի: Աստուած ուղղեց զայ-
լերս, որովհետեւ խոսված մեղմացնելու
համար ուզեցի ծունկ մը աղօթք ընել այդ
սեւ օրը յսկսած: Եւ ի՞նչ տեսնեմ...
Հա՛յրս է այս օրուան ոճիւրներուն պա-
ճառը... Հա՛յրս...

- Ի՞նչ պատահեցաւ միւսներուն,
Հօ՛րս, մօ՛րս...

- Անոնց վրէժը լուծեցի, զո՛ւ վրէժը
ալ լուծեցի: Հիմա երկու դիակներ կան,
պահակ զինուորը բակին առջեւ և սպան՝
եկեղեցիին մէջ:

Շուշան կամաց-կամաց ինքզինը կը
զտնէր եւ հաղորդակցութեան մէջ կը
մտնէր դուրսի աշխարհին հետ: Յանկարծ
նշմարեց Վահանին արիւնլուայ չա-
պուստները:

- Բայց վիրաւորուած ես, Վահան,
- ըսաւ, - ուսէ՞ղ արիւն կը հոսի:

- Այո՛, ուսէս թեթեւօրէն վիրաւոր-
եցայ, բայց մնացեալը զու դահիճի՞ղ ա-
րիւնն է, որ ժայթքեցաւ կուրծքէն:

- Այդպէս կարելի չէ մնալ, - ըսաւ
աղջիկը, - արդէն բուական կորսնցու-
ցած ըլլալու ես, պէտք է այդ վէրքը
մաքրուի ու դարմանուի:

Վահան բացաւ ուսը: Միտին մէջ
փամփուշաբ ահօս մը բացած էր եւ շա-
րունակած էր իր ճամբան: Վէրքը վտան-
գաւոր չէր, բայց սաստիկ ցաւ սկսած էր
պատճառել: Շուշանիկ մաքուր լաթով մը
որրեց շուրջի արիւնը եւ լաշակը հանե-
լով խնամքով կապեց:

Վահան երջանկութեան այլք մը
զգաց իր խոռված հոդիէն ներս: Առաջին
անգամ ըլլալով Շուշանիկ կը դրադէր

իրմով, կը մտահոգուէր իր առողջու-
թեամբ: Առաջին անգամ ըլլալով իր սի-
րած աղջկան մատները կը հպէին իր
մարմնին: Արիւնը զարդած էր հոսելէ:

Կէսօրուան մօտ պոռչաւորներ լսուե-
ցան եկեղեցիին կողմէն: Ձինուորները
պտած ըլլալու էին դիակները եւ հիմա կը
փնտռէին յանցաւորը: Վահան երբեք չէր
մտահոգուեր անոնցմով, Գիտէր՝ որ
թաքստոցը անձեռնմխելի էր: Այնքան
ծակ ու ծուկեր կային այս փրատակնե-
րուն մէջ, որ շատ դուրին էր խաղի բե-
րել այս անուս ու անխելք զինուորները:
Հիմա կը մնար, առօթի ու ծառաւ, սպա-
սել որ գայ դիւերը եւ պատապարէ զիրենք
եւ զիւրացնէ իրենց փախուտը:

Յանկարծ շատ մօտէն լսուեցաւ զին-
ուորներէն մէկուն ձայնը, որ կը կանչէր
իր ընկերները: Վահան ուղի ելաւ ու մօ-
տեցաւ առջեւի բացուածքին:

- Մահճո՛ւտ, Հիւսէյի՛ն, Ձիա՛, -
կը պոռար զինուորը, - եկէ՛ք կեանքերին
հետքը գտայ:

Բոլոր հասնողները կը ծռէին գետին
ու ուշի ուշով կը նայէին անտեսանելի
բանի մը: Վահան անմիջապէս հասկցաւ
որ անոնց մէջ կար մէկը, որ ան-
պայման մանուկ հասակին խաղած էր
այս աւերակներու մէջ եւ ուզած էր այդ
կողմերը ուղղել իր քայլերը, եւ նշմա-
րած էր փախառականին արեան հետքե-
րը:

Վահան հասկցաւ որ ուշ կամ կանուխ
պիտի գտնէին իր թաքստոցը, մանաւանդ
որ ինք առանձին չէր, եւ Շուշան, որ
սկսու էր, պիտի չկարենար պէտք եղած
արագութեամբ ցատկի տանիքէ-տանիք,
կամ պատէ-պատ: Բարեբախտաբար, ինք
եկած ըլլալով ուրիշ կողմէ մը, խուզար-
կողները տակաւին երկար ճամբայ պիտի
կտրէին հետեւելով իր ձգած հետքերուն:

- Շուշա՛ն, - ըսաւ տղան, - կրնա՞ս
ստքի ելլել, պէտք է անմիջապէս հեռա-
նանք, զինուորներ կու գան մեր կողմե-
րը:

Աղջիկը ընդոտ ստքի ելաւ եւ սար-
սափաւոր աչքերով մօտեցաւ տղան:

— Վահան, դիտ մի՛ լքեր, պաշտպանի՛ գիտ, չեմ ուզեր կրկին ինչալ անոնց ձեռքերուն մէջ, չեմ ուզեր տեսնել անոնց անասունի աչքերը:

— Մի՛ վախնար, մի՛ վախնար, Շուշան: Միտսին կը գտնուի՞նք, միտսին կ'ապրինք ու եթէ պէտք ըլլայ միտսին կը մեռնինք:

Իջան ճշգրտ առտիճաններէն, մտան մառանը եւ հաեւի լուսամտէն դուրս սպրդեցան: Վահան աչք մը նետեց իր հետեւը: Արիւնը դապրած էր հոսեւէ եւ հետապնդումը կանգ պիտի առնէր ճիշդ այդտեղ:

Վահան Շուշանիկին ձեռքը բռնեց ու միտսին սկսան վազել դէպի գիմացի պարտէզները: Կանգ առին խիտ ծառի մը հովանիին տակ, ցանկապատին մօտ: Շուշանին դէմքը մեղրամոմի դոյն առած էր, եւ կուրծքը կը հեւար պայթելու աստիճան: Քիչ մը կանգստացան ու կրկին շարունակեցին վազել: Պարտէզները չէին վերջանար: Արահետը կը սողար ցանկապատերու երկայնքին: Վերջապէս լսուեցու գետակի մը ձայնը: Շուշանիկին վազքը կը դանդաղէր, ոտքերը կը կթոտէին: Վահան գոյն կրկին առաւ բարակներուն մէջ եւ իջաւ պղտիկ գառիփարը, որ կը տանէր դէպի գետակը: Անցաւ քարէ պղտիկ կամուրջ մը եւ շարունակեց վազել հոսանքն ի վեր: Դէմք՝ դարաւոր խիտ ծառերով շրջապատուած, տեսաւ մամռապատ քարէ զանդուած մը: Մեւը տն աղբոր շաղաքն էր:

Ձուրը կը հոսէր ջրանցքէն ներս, բայց քարերը անշարժ էին: Մեւը տն աղբոր շաղաքը ամայի էր: Ո՛չ ցորենի, ո՛չ ալ ալիւրի պարկեր շարուած էին պատերու երկայնքին: Ձ՞ուրքը այստեղէ՛ն ալ անցած էր:

Վահան բերդ դրաւ յարդէ անկողնի մը վրայ եւ ինք սկսաւ հաւաքել գետին ինկած ցորենի հատիկները: Փրկուած էին անօթութենէ եւ ծարաւէ: Անդին կային հայկական դիւղեր, անդաստաններ, ամայութիւններ, եւ բարձր լեռներ, ուր բոյն դրած էին քաջ Փետայիներ:

ժ

Յաջորդ առտու, մունետիկները սկսեցին շրջել փողոցներու մէջ, տարածելով իրենց չարագուշակ յայտարարութիւնները:

«Էրգումի հայեր, լա՛ւ մտիկ ըրէ՛ք. այս վայրկեանէն սկսեալ օճիկ արգիլուած է տուճէն դուրս ելլել: Այլ ընտանիքները որոնց պիտի հրահանգուի մեկնիլ, իրենց հետ պիտի է տանին միայն անհրաժեշտ առարկաներ: Քստան չըս ժամէն պիտի է հաւաքուին Սերայի հրապարակը...»

Արդէն ժանտարմաներու Ընկառներ, իրենց սոված օգնականներով շրջապատուած՝ կը սպասէին եկեղեցիներուն, զըզրոցներուն եւ հարուստի տուններուն առջեւ:

Ձիւտը զինուորներ, հրամանատարին հրահանգները ստանալէ ետք, քառասոյսակ ցրուեցան քաղաքի զանազան թաղերը, աւետելու համար, որ թուրք ժողովուրդին մեծ Պայքամը սկսած է արդէն:

Անմիջապէս Զափքիւնները սկսան զործի: Կը մտնէին տուններէ ներս, բնակիչները կը հաւաքէին բակին մէջ եւ իրենք կը մտնէին սենեակները՝ խուզարկութեան համար: Եթէ արժէքաւոր առարկաներ չգտնէին, կը կանչէին տանտէրը կամ տանտիրուհին եւ կը հարցունէին, թէ ո՛ւր պահած էր իր դրածը, պահարկները: Երբ ժխտական պատասխան մը ստանային, երկու զինուոր՝ հայր կը պահեցնէին գետին եւ շափուլը կը սկսէր մտրակել, մինչեւ որ արիւն հոսի ներքաններէն: Յիսուս, հարիւր հարուած տալէ ետք, խեղճը կը ձգէին արիւնլուայ դիակը մը պէս եւ կ'անցնէին յաջորդ տունը:

Որովհետեւ կարելի չէր քաղաքի ամբողջ բնակչութիւնը մէկ օրուան մէջ տեսնել, յետմիջօրէին պղտիկ դար մը տեղի ունեցաւ: Թուրք զբաղինները՝ առիթէն օգտուելով, կու գային աչք մը նետելու հայ տուններէն ներս, իրք թէ

ապարանքներ գնելու: Եթէ խղճի նշոյլ ժը ունէին տակաւին, կ'առաջարկէին ապարանքները գնել շնչին զուամարի մը փոխարէն: Շատեր, այդ առաջարկն ալ չէին ընէր. կ'ընտրէին իրենց պէտք եղած ապարանքները. գորգ, անկողին, պնակեղէն եւ կը փոխադրէին իրենց տունը, տասնց տանտիրոջ արտօնութիւնը առնելու:

Շատ մը ընտանիքներ ժամանակ դատած էին անհրաժեշտ պիտոյքները տեղափոխելու պարկերու մէջ եւ դանոնք քեռցնելու էջերու եւ ջրբիներու վրայ. աւելի հարուստները կտաքեր վարձած էին: Աքոսրեալներու առաջին խումբը հասաւ հրապարակ: Ընդհանրապէս բարեկեցիկ ընտանիքներն էին, որ ունէին առատ պաշար եւ դօսիներուն մէջ պահած էին իրենց օսկեղէնները եւ զոհարեղէնները: Եւ բոլորն ալ կը յուսային շնորհել իրենց դրամին ողջ աւօղջ հասնիլ այն անդերը, ուր պիտի ապրէին մինչեւ պատերազմին վախճանը: Քերմեսի մթնոլորտ մը կը տիրէր տակաւին. ընտանիքները խմբուած էին իրենց հակերուն մօտ: Մարդիկը քով քովի եկած կը խօսակցէին, կը խօսէին ճամբուն մասին, հանդիպիչք գրեզներու եւ քաղաքներու մասին: Եւ որովհետեւ կէսօրը չէին ճաշած, կը կանչէին սիմիտ, կարկանդակ, կամ խորոված միս ծախողները եւ կը գնէին:

Մինչեւ իրիկուն մեկնումի հրամանը չեկաւ: Ստիպուեցան գիշերը անցընել բացօթեայ հրապարակին վրայ: Ոճանք քակեցին հակերը ու անկողին փռեցին կարպետներու վրայ, ուրիշներ քաշուեցան կտաքերու մէջ, առանց գուշակելու այն ճակատագիրը, որ իրենց կը սպասէր:

Յաջորդ օրը, այգաբացին, առաջին կարաւանը ճամբայ ելաւ, եւ բռնեց Իլիւճայի ճամբան: Մօտ երեք հազար հոգի էին: Քսանի չափ ժանտաբամաներ կ'ընկերանային, իբր թէ զտնոք պաշտպանելու համար վիտացող աւազակախումբերուն դէմ:

Երկու օր ետք, ուրիշ խումբ մը հետեւեցաւ առաջինին եւ բռնեց նոյն ուղիւթիւնը: Այդ խումբին մէջ կը գտնուէին Երէջկիներ, տիկին Պարթեւեանը եւ իր երկու աղջիկները՝ Արփին ու Սօնան:

Ժանտաբամաները լաւ կը վարուէին ժողովուրդին հետ: Վախէն ստացած էին շատ խիստ հրահանգներ, որպէսզի իրենց պաշտօնը լաւ կատարեն:

Մայիսի սկիզբէն ի վեր, Թուրքիոյ բոլոր քաղաքները եւ դիւղերը կը պարպուէին իրենց հայ բնակչութենէն եւ անվերջանալի կարաւանները կը քալէին զէպի հարաւ, դէպի անծանօթ ու մահարոյր ուղղութիւն մը:

(Վերջ՝ Առաջին գիրքին)

Ն. Զ.



Նոր ցարթիս գործը և...

Նվիրում եմ Կ. Շիրազյան

1967թ.

Կարգաթիվ

Նոր ցարթիս գործը և	դու
անուշ իմն իջու	տունն հասեր:
և	ինչո՞ւ եւ լայն,
Տր անուշիկ	կրք
կրպց տնուս,	ախրերդ ինք
իսկ	կայոց կորովնը և
կրպիս ինչ	կնչում,
գործնի՛ ինչ տնուս՝	կայոց վարդերն եւ բարում,
ճեւարուն ու շիրազը	և
ուս-ուսի տղան,	թուրքի ուրններք տակ
Տր	կորցացան՝ սևաւորը
շիշ «Բա՛նվաւ»	սցաթ իւց շրճակնունն և՛
դե՛մներք դրան	վարում:
Տեր գինջ կրկնի՛ն և՛	դն, ցնճու
բա՛նվարնը շրճան,	խորտիկ ի՛ն, Յրաւի,
տարնում եւ իրար,	արագ վաչեր,
բնչում սր գինիք:	Հասարկ հասեր...
Բա՛ կրք դարարկի՛ն	Ինչո՞ւ
թուակը վերջին՝	սպասիք, Տր ջրապիտ,
Շիրազը դարարկ	վերջին իրաւիս լսիք.
Տեր իւնչը	ճանաչարտի՛ն ու՛ կանդիտարտի՛ն
Յրաւիսին.	պարտիր
— Խորտիկ ի՛ն Յրաւի	և սուս, ոք կայք
կերտի՛ և՛ լուս,	կրկն ջի
արագ վաչեր,	թուրքանին:



Ոճն էլ բերե՛ք Մասսի ճիւղից,
 Իմ հողերի ուրցումքով,
 Երբ կ'ազատուի՛ լույսն իձն բերե՛ք
 Ո՛վ ք'Արևիկով, ո՛վ շու՛քով:
 Քանզի սիրոս շատ է մաշուել
 Այսբարսիս կարօսից,
 Որ չ'էսնեմ խնդութիւնից,
 Լույսն իձն բերե՛ք շշուկով:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ
 ՇԻՐԱԶ**

*Մեր օրերուն, ամէնուր ու ամէնուր շրջաններուն է Շիրազ անունը. հայոց լիզուրի
 զէջ շատ Եանօթ բույր ժարդերը կը ճանճան էր բանաստեղծութիւնները, հայրենասիրա-
 կան լարերուն վրայ թրթռացողն'ըր մանուանդ, էր Մարտիկերը, Վանքը, Միգանը, Մանն,
 մեր մեռնէն բուրբէն խլուած, այլ հողերներուն վրայ անլինջ պայծառութեամբ մնացող
 Արևմտեան Հայաստանի խորհրդանշական բույր գեղեցկութիւնները:*

*Հայաստանի վրայ ու հայ մարզուն հողիին Եանբուրջն շրջան Եանօթ բանակալ-
 ներուն շքացումն ետք, Շիրազ իր քովանդակ ժամանակը, բանաստեղծական միջոցները,
 սաղանդին ուղ յաճը նուրբից այդ հարցերուն եւ անոնց ընդմէջէն գետնց աշխարհը, ժար-
 դերը: Մարդոց մարդկայնութեան, ժողովուրդներու բարեկամութեան ու վարդապետու-
 թիւններու վարկին բացարձակ եշանակութիւն մը շնորհից այնուհետեւ Շիրազ, ամէն ինչ
 յարաբերական արժէք մը ստացաւ իր մաս, մեր պնխ, սրգար, ստեղծագործ, այլ անի-
 թաւուած, այլ հայտնուած, խոցուած ժողովուրդին հանդէպ օրդեղուած կեցուածքներէն
 հանկց իր փիլիսոփայութիւնը, այդ հիմամբ դատեց ուրիշները, օրիներգից ու նորոնց
 եւ յի շարժութիւններով, աւելի նորոնց, զան օրններգից, օրովհետեւ տեսաւ, որ բռնա-
 կալը դեռ ներկայ է, աշխարհի մէջ բանասպաններ կան դեռ ու բանաստեղծ Մասիս, սը-
 դարութեան անունով ճառող անտարբերները շատ են, դիմակաւորները՝ շատ, շարք կան
 սակաւին, վատեր կան, վա՛յնք կան ու անոնց երեսին պոսոց ամբողջ ձայնով, աղաղա-
 կեց շարունակ, շատ անգամ է մնաւ իր արունասին, շատ անգամ զուտ բանաստեղծական
 խոհեք սքալու էր շաշլ շնորհը անտեսելու սրտատուջ գիշումով մը...*

*Անցեալ ամիս, «Յուշարձան մայրիկի» հատորին աւիթով, Հայաստանի սրտեռ-
 տի տան վարչութիւնը Երեւանի մէջ հանդիպում մը կազմակերպեց ի պատիւ բանաստեղ-
 ծին: Ելոյթ ունեցողները խանգաժութեամբ դրուատեցին զինք, կարդացուեցան շարք մը
 բանաստեղծութիւններ իրմէն և իր մասին տասնամիայ աղջնակ մը կարդաց ինքնագիր գրու-
 թիւն մը, զոր, Շիրազի մէկ բանաստեղծութեան ու քառյակներուն հետ՝ կը յանձնենք
 ընթերցողին:*

ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ**ԻՄ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ**

(«ՀԱՅՈՑ ԴԱՆՔԷԱԿԱՆԸ» ՊՈՆՄԻ ՎԵՐՋԵՐԳԸ)

Դեռ երեկ, երբ մոր մեջեցեալ էին քաղում մայր հոգում՝
Արեգամերը հոգեհանգստի խունկ էին ծխում,
Աղօթում էին իր հոգու համար, որ հանգիստ մնէր,
Որ էն աշխարհում ոչ մի սատանայ նրան չտանջէր,
Աղօթաբարձա խունկ էին սփռում իր գերեզմանին,
Որ հանգիստ հանգչէր՝ անգիր օրէնքով մեր աստուածային:

Աւա՛ղ, ոչ խունկի, ոչ աղօթքի են այժմ հաւատում,
Մարդն է սատանան, որ նմանին է Ասործուց գառում,
Լեռներ է բանտում, ծով է շղթայում այս մարդ-սատանան,
Եւ դեռ ասում են աւելի վստօքար պիտի վատանան...
Եւ հոգու համար էլ չեն աղօթում եւ առանց խունկի
Քամում են միայն լուս ազդմաբասն իր քառասունօթի:

Խունկի բոյրի տեղ գերեզմաններին գինի են ցօզում –
Որ հարբի՝ մեզ է անհանգիստ մեռեալն՝ իր մի բուս հոգում,
Քայց ի՞նչ է մահն էլ, երբ մեջեցեալի շունչս՝ իր մարմնով,
Երբ մեռնել՝ չգաք իմ գերեզմանին դուք խունկ ու գինով,
Ոչ մի աղօթքով, ոչ մի բարկառով՝ ինչ էլ որ ողբաք՝
Հանգիստ չի գտնի իմ մեռած սիրտը մի բուս հողիս տակ:

Ձեռն խաղաղուելու իմ ոսկորներն էլ իմ գերեզմանում,
Գարօտներն էլի սիրտս են կրծելու վշտիս խորանում,
Իմ փոշին անգամ չի հանգստանայ՝ ինչ էլ որ անէք,
Իմ գերեզմանն էլ՝ թէկուզ գինեծով-կղզի դարձնէք՝
Գերեզմանում էլ ինձ հանգիստ չկայ, ի՞նչ հոգեհանգիստ,
Քանի բանտում են հայոց մայր լեռներն իմ աստուածամիտ:

Եւ հանգիստ չունեն, քանի չէք կարդում աշխարհէ-աշխարհ
Հոգեհանգիստը կոտորածների հայոց անհամար,
Հոգեհանգիստը անբիւ, անհամար իմ հայ գոհերի,
Հոգեհանգիստը անապատաւիւնս՝ անթաղ դիերի,
Հոգեհանգիստը մեր աստեղաբիւ ծերի ու մանկանց
Որոնք մորթուեցին բաց աչքի առաջ անհոգի մարդկանց:

Ինձ հանգիտա չկայ, քանի կայ մեղքը սեւ ետքազանի,
 Քանի քաղաւած չէ սիրտս Մասիսի կրծքում գեղանի,
 Քանի վանայ ծովն օրօր չի սփռում իմ շիրմի վրայ, -
 Շիրմում էլ՝ քանի իմ բերանին չէ ստինքը նրա,
 Քանի Մասիսի սրբայտունն ձիւնը վրաս չի փռուի՝
 Ի՞նչ հոգեհանգիստ, գերեզմանում էլ սիրտս կը վառուի...

Ինձ հոգեհանգիստ կատարէք միայն Մասիսի վրայ,
 Երբ հանէք բանտից ինձ նոր շունչ տուող հովերն էլ նրա,
 Երբ հանէք բանտից իմ վանն ու Անին իմ վանայ ծովով,
 Երբ կլնեն բանտից մայր Հայաստանին երկունքի ցաւով՝
 Յաւերժամանակ իմ հայ Մասիսեթե՛ն հայրենասուննչ,
 Որ ծաղկի հոգս էլ հոգեհանգստով ձեր ատուածաշունչ:

Բայց թէ չպիտի արգարութիւնը հեծնի իր արք Բին,
 Թէ քար աշխարհը չազատէ Մասիս իմ շղթայաւածին՝
 Թէ չարբաւի հայասուգ արջունքն իմ ծովի վանայ,
 Թէ վանայ ծովս չընկնի լոյս գիրիը իր քոյր Արամայ,
 Թող մտնուան բուրբառ դառնայ հոգազունդն ու ցնդի անհետ,
 Թաղուի մարդկութիւնն իր անգթութեան անդունդ սրտի հետ,
 Քանգի նա ք-ռոյց, որ մեծ Հայաստանն այնքան քա՛րանայ,
 Որ վշտիս ծովի շիթն էլ քաղուելու մի տեղ չունենայ...

Ազգեր, ինկեւտ՝ եմ ուղի արցունքս ձեր աչ ու հացին,
 Գիւտե՛ք՝ կը հեծնի արգարութիւնը մի օր իր արք Բին,
 Մասիսի վրայ կոյր բախտի աչքը պիտի քաղցրանայ,
 Որ հայն էլ՝ ձեզ հետ ծիածանուելով՝ Մասիս բարձրանայ,
 Որ ներուակ Մասիսն հսկայ եւ յաւերժ մտի պէս լռիմ
 Վառենք իմ հայոց կոտորածների շիրմադաշտերին,
 Վառենք՝ ապրիլեան անհղ եղեռնի անբնի վրայ,
 Ուր անաչառն է գիշերավեղար պատանքը դժնեայ...

Ի՞նչ պատանք, էլ ի՞նչ, երբ աստ էլ գերի իմ յոյսն է աւեր,
 Ել ի՞նչ քառասունք, - մոլորանան թէկուզ քառասուն դարեր՝
 Ձի մտացուելու հայոց եղեռնը վշտով սեպիկու,
 Մի՞թէ ապերախտ, անտակ որջ է տանալն հայ ոգու,
 Որ մտքից կտնի իր բազմամիլիոն գոհեթիւն այն աւերք,
 Որ աստղեր էին, բայց եղեռնուեցին ու դարձան ասուպ
 Դարձան մոխրածով ու ռսիքափոշով անապատուեցին...

Գեռ դարեր պիտի հայ աւագն արցունքուի հայոց արք հացին, -
 Մեծ Հայաստանը քանի դեռ տյապէս կիսուած կը մնայ,
 Հանգիստ չի ննջէ հայ գերեզմանն էլ՝ եթէ հայ է նա...
 Ձի մտացուելու՝ քանի դեռ Անին չի եղեռնուել,
 Քանի ուղջ ազգը իր Մասիսներին չի ծիածանուել...

Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Ե՛ս եմ միակ խենթ իմաստունն ու անկեղծը այս դարի,
Միրտը բացսզ, իրան ստաղ միա՛կ մեծը այս դարի,
Ահա ինչու միայն ես եմ գահընկեցուած՝ քարկոծուած,
Ես եմ միակ ամենամեծ բանաստեղծը իմ դարի:

~

Մարդ կայ՝ կեանքին վարդաստան է, մարդ կայ՝ խար,
Մարդ կայ՝ ազգին վեր կը տանի, մարդ կայ՝ վար,
Վեր տանողիս շատ վար գցեց բա՛խտը կոյր,
Վար տանողին վեր տանելով անդադար...

~

Ի՞նչ էլ աւեք, Մասիս կ'անեմ, սուրբ է իմ սէրն անխտար,
Լեռ է յոյսիս ռդմաշարը, ինչպէս իմ լեռն անխտար,
Տրեգեդիի հետ չեմ փոխի մի բուռ ձիւնն էլ Մասիսի,
Խոտարին եմ խոտար քու՛մ իմ խոտարներն անխտար:

~

Այս անգլուխ պոետների գլուխն անցած, կը քայլեմ,
Այս գեռ անսիրտ աստղերի մէջ արեւի պէս կը փայլեմ,
Ախ, ի՞նչ գիտեմ կոյր աստղերը, երբ գիշերով եմ ծագում,
Թէ իմ շառլ արեւով էլ ինչե՛ր այսքան մտայլ եմ...

~

Ո՛վ դարերի բանաստեղծներ, ի՛նչ էլ հասար ցար ձեր,
Ա՛խ, իմ մասն էլ ժայռին բախուեց, ինչպէս բախուեց ճար ձեր -
Ես էլ հայտց ափս հիմ փնտուում տար ծափում պեկած, -
Ինչ էլ ծովը սուգել կ'ուզէ՝ դեռ չտեսած լաւը ձեր...

~

Ես տան ծաղիկ... Երանի է դաշտի ծաղիկն ինձ տալիս,
Մինչ իմ աչքը դուրսն է անվերջ՝ միտքս նա է միշտ գալիս,
Ծաղկամանս այն է, ինչ որ վանդակն՝ հաւքին երկնատեղի,
Երնէ՛կ մրան, ով իր վիշտն է ազատութեան մէջ լալիս...

~

Այն երեսուն հօրը բուին յայնն ինձ խաչեց իմ դարում,
Դադանի մանը ամէն սրտի տեղը դիզեց իմ դարում -
Ձարի ձեռքով, ո՛վ լուռ եղեռն, դու ո՛ր վարդն էլ քաղեցիր՝
Կողքի վարդը, տերեւն անգամ չհատաչեց իմ դարում...

~

Թէ միշտ չարը յաղթող լինէր՝ կարիճն արծուի քեւ կ'ունենար,
Թէ յաղթուէր բարին էլ միշտ՝ ծիածանն էլ սեւ կ'ունենար,
Ա՛խ, ոչ բարին՝ աշխարհով մէկ, ոչ էլ չարն է չքանալու,
Ի՞նչ գիտնայի, որ չարն, աւա՛ղ, հազար ու մի ձեւ կ'ունենար:

~

Հետեւում եմ ինձ անդադար, հոտուտում եմ անընդմէջ,
Իմ խոտերի խոտն եմ փնտուում, որ վանդակին կեանքս խեղճ,
Ի՞նչ իմանան անխոյզները, որ վաղուց եմ վանդակուած՝
Իրենց աչքերն եմ վանդակս, որ սեղմում եմ ինձ անվերջ...

ՅՈՎՃ. ՇՈՒԱՋ

Պ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

«ԳՐՈՒԹԵՆԷՆ ԵՏՔ»...

Սիրոյ սեւ հուր աչերդ վառ կ'այրեն հոգիս,
Երբ ակամայ յանկալծօրէն ինձի նայիս:

— Չեղաւ: Ո՛չ, ես բանաստեղծ չեմ կրնար ըլլալ, — որոշեց:
Դարձեալ կարգաց:

Հակառակ անոր որ մասնաւոր թերութիւն մը չգտաւ գրածին մէջ,
սակայն գրական որեւէ արժէք կամ գեղեցկութիւն չխանդավառեց ղինք:

Մտադրեց պատռել գրածը ու պատռեց: Մըշտ այդպէս եղած էր իր
գրութիւններուն ճակատագիրը:

Փրել նման գրութիւններ: Ո՛չ, Հագար ոչ: Ինք կ'ուզէր իր ամէն
մէկ գրութեան մէջ ինքզինք տեսնել: Իր իւրաքանչիւր նախադասութիւնը
պէտք է թարգմանը ըլլար իր ներաշխարհի ամբողջութեան:

Երեւնալու մարմաջէ մը մղուած պարագայական ծնունդներ պէտք
չէ ըլլային իր գրութիւնները:

Կը գրէր զժուարութեամբ: Կը գրէր երկար տաղնուպներէ եւ հոգե-
կան փոթորկումներէ ետք: Կը սրբագրէր, կը վերամշակէր, կը կարգար,
զարձեալ կը սրբագրէր, կրկին կը փոթորկէր, եւ իր ներաշխարհի մակըն-
թացութեան հետ կը պայծառանար, կը սաղմնաւորուէր եւ երկունքի երջա-
նիկ ցաւերուն հետ կը ծնէր իր գրութիւնը, որ, լաւագոյն պարագային, հա-
զիւ քանի մը օր, կամ քանի մը ժամ ապրելու բախտը կ'ունենար միայն:
Որովհետեւ, ինք կը հուստար իր ուժերուն: Ինք կ'ուզէր, որ իր առաջին
լոյս տեսած գրութեամբ շինէր անուն, անկնար արժէք:

Ի՞նչ էր տուած սփիւռքահայ գրականութիւնը վերջին քառորդ դա-
րու ընթացքին: Նոր անուններ, շատ: Լաւ գրողներ, բաւական: Տա-
ղանդներ, այո: Ինք կը սիրէր նոր անուններէն արձակագիրները մանա-
ւանդ: Պօյաճեան, Աճէմեան, Սնապեան, Գեղարդ, Մամեան, եւ բանաս-
տեղծներէն ժառ Յակոբեանի գործը, Մարուկեանի «Թուղթ առ Երեսմօք»,
Մ. Իշխանը: Բայց այս արդելք մը չէր, որ չկարգար նաեւ այլոց գրու-

Թիւնները, շխանդավառուէր անոնց բերքով, վերջերս Հրապարակ իջած բանաստեղծ ազլիկ մը՝ Թէքեան, արձակագիրներ Արծրունի, Վերապետն եւ ուրիշներ:

930-ական թուականներու սփիւռք ունեցած էր նոր գրողներ:

Ֆրանսան պոռթկացած էր այդ ասունները արձակի եւ բանաստեղծութեան զոյգ մարդերուն մէջ Հասասարապէս եւ արտազբած իբրեւ Քանակ եւ որակ: Բայց Բ. աշխարհամարտէն ետք Քանի՞ նոր անուններ իրենք դիրենք պարտազբած էին հոն:

Նոյնիակ Հիները սկսած էին նահանջել: Մամուլը սկսած էր կքել:..

Նորերու հանդէպ ցուցարեւած դժգոհութիւնը եւ «մէյտան իջնելու առթիւ անոնց առջեւ ցցուած արդելքները աւելի եւս կը խթանէին ստեղծագործելու իր կիրքը:

Եւ եկաւ օրը, երբ նորերը գտան գուրգուրանք, գտան տաքուկ երգիք: 60-ական թուականներուն Հրապարակ իջան նոր թերթեր եւ լայն բացին իրենց թեւերը Քորբերուն առջեւ, «արբուքիւնը մեղք համարելով գանձնէք ոչնչացնելու չճանարկեցին, այլ գուրգուրանքով մտնեցան անոնց, շիշուած անշուշտ թուրքերը եւ հագեպէս քրքացածները...»:

Օ՛ր: Ինչ աղուր էր նորերուն բան մը յիշեցնելու, բան մը տալու կիրքը: Եւ ինք սկսաւ յափշտակութեամբ կարգաւ նորերուն նոյնիակ «քերթաշ» գրութիւնները:

Ամէն մէկ նորի «մէյտան իջնելու լուրը իրեն համար նոր մեխալի մը յայտնութեան շափ երջանկութիւն եղաւ: Եւ սիրեց նոր թերթերու մէջ խմորուող տղոց երախայրէքը, ու օր մըն ալ որքա՛ն դիմովցաւ, ուրախութիւնը եղաւ անսահման, երբ անոնցմէ մէկուն մէջ կարդաց.

«... Ունիմք այսօր շարք մը նարեր: Յայտնութիւնները ըրած ըլլալու բուարարութենէն հեռու ենք անշուշտ, բայց ապարդիւն չէ անցած մեր միգր, մնաց որ, այս քերթաշ եւ շատ յանախ խոցելի գրութիւնները ստարագրող երիտասարդ տղոց երիտասարդ հեռանդը աւելի բան մը կ'արժէ, քան մտգական գուազանով յայտնագործուած այս կամ այն գատկական մտքիան, եւ անոնց զանկիրը շա՛տ աւելի յուսատու են, քան միջակութեան անփայլ աստիճանիմ հասնելու համար երկրարդ ծնունդի մը պէտք ունեցող յիսնամեայ քշուառներուն սեւամազ կարծիքները»:

«... Դրական կանոնուար կրթութիւն, վարպետի շունչ կամ նպատար շրջանակներու առաւելութիւններ ի տղայ տիտց չառած, չվայելած երիտասարդներն են ամէնէն այլ, որոնք, սակայն, ունիմ աներածիշտը, արտայայտուելու, ըլլալու մգում մը: Քիչ մը կը նմանիմ մեր որբերուն, անօթի, քոպիկ, մերկ, մեր դասական որբերուն: Ենթական գուրգուրանէ գուրկ մնացած ըլլալու անոնց հանգամանքը եւ յարակից դժբախտութիւնները պատճառ չեղան, սակայն, որ մեռնի ամոնց մէջ ուժերէն ամէնէն անդիմադրելիմ՝ ապրելու, տեսելու տեսնը: Մարդերն այլ մարդկօրէն վարուեցան որբերուն հետ, որբութիւնը մեղք համարելով գանձնէք ոչնչացնելու չճանարկեցին, այլ գուրգուրանքով մտնեցան անոնց, շիշուած անշուշտ թուրքերը եւ հագեպէս քրքացածները...»:

Եւ ինք կ'ուզէր ըլլալ այդ նորերէն, քիչ մը աւելի, աւելի բծախրոգիք մէկը, վերջապէս նո՛ր մէկը, նո՛ր Վահէ Ժամկոչեան մը:

Ինչ կ'ուղէր, որ երեսուն-իսուն տարի ետք, ամպերին ետև կեցած ուսուցիչներ՝ այսպէս սկսէին իրենց դասը. «Ափիւսքահայ դրակոնութեան տիրական դէմքերէն Վահէ Ժամկուշեան ծնած է Հայկու, 1942-ին, համեստ ծնողքէ...»:

Որոշեց պատմուածք մը գրել:

Գտաւ նիւթ մը:

Իրենց դրացին՝ կօշկակար Յարութիւնը սինդրաւս նիւթ մըն էր:

Ասաւ թերթ մը թուղթ:

Որոշեց գրել: Բայց ինչպէ՞ս, ուրիշ՞ սկսէք եւ ինչպէ՞ս վերջացնէր:

– Վահէ՛, ընթրիքը պատրաստ է, գեղի կը սպասենք, – լսուեցաւ մօրը ձայնը:

Ձղաշնացաւ, Գանի՛ անգամ ըսած էր որ չմիջամտէր իր տշխատանքը: Հասցենպով խմեց դաւաթ մը թէյը:

Պատմուածքին կմախքը մտքին մէջ վերջնական մարմին կը ստանար, կը պայծառանձա՛ր:

Ընթրիքէն ետք քաշուեցաւ իր սենեակը, մտքի տաղնապը փարատեալու համար:



Այսպէս ոկսաւ գրութիւնը.—

«... Սենեակի անխնամ, աղքատ կահուարուէք ճնշող բան մը անիս Յամկուշի տիւանը հազիւ ծածկուած է հինուածչ կարգիտով մը, որ կարողանէ աւելի գիշ մը ամէն բանի կը նմանի:

Առաստաղները աղտոտ են եւ գորշ: Ոչ մէկ զարդ պատին վրայ, բացի տախտակէ ժամացոյցէն եւ 890-ական թուականները յիշեցնող հաստ պիտիւրով երիտասարդի մը նկարէն, որ անկասկած Փետայի մը ըլլաւու է:

– Վարուժ, մեր տախտակէ ժամացոյցին ձայնը կը սիրե՛ս:

– Ժամացոյցին ձայնը, ին՞նք ես, – պատասխանեց եղբայրը երանաւորեւով դէմքը չար ժպիտով մը:

Սօսիկ չհաւատաց մեծ եղբորը խօսքին, նոյնիսկ չհասկցաւ անոր հեղինական ժպիտին իմաստը: Եղբայրը իրմէ հինգ դասարան բարձր ըլլալով, միշտ կը թուէր անհասկնալի, անմանթ, նոր բաներու մասին:

– Սօսիկ, գիտե՞ս թէ աշխարհի ամէնէն ճիշդ ժամացոյցը ուր կը գտնուի:

– Ոչ, աղբար:

– Պիկ Պէն, – պատասխանեց եղբայրը հպարտանքով, – ե՛հ չ չեալսած, աշխարհագրութեան պարտնը ե՛հ չ չեալսած պատմած:

– Պիկ Պէնը ո՞ւր է, աղբար:

– Լոնտոն:

– Լոնտոն...:

– Այո՛, Լոնտոն: Զարմանալու քնչ կայ: Աշխարհ կը բաժնուի հինգ ցամաքամասերու, Ասիա, Աֆրիկէ, Աւստրալիա, Ամերիկա, Եւրոպա: Անգլիա կը գտնուի Եւրոպայի մէջ: Լոնտոն Անգլիոյ մայրաքաղաքն է: Իսկ Պիկ Պէնը կը գտնուի ճիշդ Լոնտոնի մէջուրը:

- Լոնտոն հեռո՞ւ է, աղբար :
- Շա՛տ հեռու :
- Որքա՞ն :
- Հոսկէ մինչե՛ւ... մինչե՛ւ Լոնտոն :

Սօսիկ չխանդավառուեցաւ : Անպիտա, Լոնտոն, Պիկ Պէն իրեն համար միայն անուններ էին : Ուրեմն իրեն ի՞նչ : Ինք կը սիրէր ոսկի մազերով եւ ուլունք աչքերով իր անուշիկ պուպրիկը, իրենց տան ժամացոյցը, դունաւոր նկարներ եւ տաք կարկանդակներ :

- Ես մեր ժամացոյցը կը սիրեմ, - հաստատեց :

Եղբայրը շպտատախտեց, միայն բարձրաձայն խնդաց, քիթին մէջէն մրթմրթալով, - մէյ մը ռատիոյին մէջէն անոր ձայնը լսէ, տա՛նկ, տա՛նկ, տա՛նկ... :

Հայրիկը ամէն առտու ռատիոն կը բանար, միշտ Լոնտոն մտիկ ընելու համար : Հայրիկը երբ քաղաքական որեւէ տաղնապի շուրջ կարծիք յայտնելու ըլլար, «Լոնտոնէն լսեցի», կը հաստատէր : Երբ շարս-հիսգ հոգի քով-քովի եկած ժամուն շուրջ վիճէին՝ «ժամացոյցս, Լոնտոնի վրայ ճշգրտ եմ, երկվայրկեան մը իսկ չի փախցներ», կը հպարտանար :

«Լոնտոնի մէջ օթօնները ձախէն կը քայլեն», «Լոնտոնի մէջ լոքտերը սեւ գլխարկ կը դնեն», «Լոնտոնի փառերը երկու յարկ են», «Լոնտոն միշտ թէյ կը խմեն», «Ձրչիւ Լոնտոնի...» :

Իրացիները երբ իր հօր մասին խօսելու ըլլային, «Լոնտոնը պարսպ կը պաշտի եղբր», «Լոնտոնը ըսու», «Լոնտոնը կինը ծեծելու է եղբր», «Լոնտոնը...» : Ու օր մըն ալ թաղեցիք պարոն Յարութիւն կանչելու տեղ, սկսան զինք Լոնտոն կոչել :

Ժամացոյցի փոքրիկ պատուհանին բացուելուն հետ բացուեցան նաև Սօսիկի երազային աշխարհի դռաները : Երկու աջուրներ կոտորուած շարժումներով դուրս երկարեցին իրենց գլուխը :

«Տինկ տանկ, տինկ տանկ, տինկ տանկ, տինկ...» :

Սօսիկ յափշտակութեամբ դիտեց աջուրներուն պարը : Իր աջուրները աշխարհի աջուրներուն հետ չէր փոխեր : Անոնք մաս կը կազմէին իր աշխարհի կորիզին, որուն շուրջ կը զառնար իր մանուկ հոգին :

Ժամը ուժն էր արդէն, բայց հայրիկը դեռ եկած չէր :

- Հայրիկը ուշացաւ :

- Հիմա կու գայ, ձապո՛ւկ, - պատասխանեց եղբայրը, որ ինկած էր թիւերու ուղեանին մէջ :

Քիչ ետք կօշկակարի սաքին կոշտ ձայնը կանխեց զինք, հաղորդելով անոր գալուտը :

Ձսափուած երեսով, անխնամ մազերով, հաստ սլեխով, յաղթանդամ, լեռնցիի մը վազիլ լեցուն բազուկներով, տղեղ, կոշտ, բայց... բարբէ՛ր էր իրենց հայրիկը :

- Հայրիկ, ուտելիք չըբեր՞ր :

- Շի՛մա աղբարդ կը բերէ, - պատասխանեց կօշկակարը, առանց գլուխը ալ կողմ իսկ դարձնելու, եւ դառնալով տղուն հարցուց թրքախառն հայերէնով մը :

... - Ո՛ւր է մայրդ, նորէ՞ն զրացիներուն : Արդևօք դայնակը այս կընկան պորտը փողօ՞ցն է նետած, - հարցուց եւ կօշկակարի բերան լեցնող,

Թրքերէն հայհոյանքներուն ամենագունազեղներէն օրինակ մը շարտեց կնոջ հասցէին:

- Պեոյլէ հայաքըն տա, պէոյլէ արվատըն տա, արլիսըն...:

Պարոն Յարութիւն բարկանալու իրաւունք ունէր: Տակաւին օր մը չէր եղած, որ գործէն վերագարձին կինը դինք գիժաւորած ըլլար: Ե՛հ, այն ատեն կնկան դէմքին վրայ վարագուրուած ժպիտը, տասը ժամուան ձանձրացուցիչ աշխատանքը, տասը վարկեաններու, տասը երկվարկեաններու եւ գաւաթ մը օդի ճնկելու պէս բանի մը կը վերածուէր:

Պանի մը աղուոր խօսքեր, հողւոյն խորը թափանցող շերտ ժպիտը, կարող էր կեանքի կոշիկ մուրճին հետ անցուցած լիդի ժամերը, զանոնք պատարագի վերածելով:

Բաւ էր որ բարեացակամ նայուածքներու անուշ նշոյլներ երկարէին իր հողւոյն խաւարէն ներս, հրդեհելու համար մարած մոխիրին մէջ թաղած կեանքը, որ պիտի բռնկէր. պիտի ըլլար ընցէ խելագար պար, եւ այն ատեն լոյսէ պայծառ թանձր պատեանով արեւին սուշեւ կրնար լոյսէ որմ քաշէլ:

Ի՞նչ էր կեանքը իմաստաւորող երջանկութիւնը, եթէ ոչ կնոջը աղ-նիւ վերաբերումը, մօրուք անարող խօսքերը, պայծառ ժպիտները եւ բա-րի, հարազատ նայուածքները:

Այն ատեն գաւաթ մը օդիին հետ շոր հացը կը վերածուէր բախլա-վայի եւ շերտ մը պաստըրման կը դառնար խորոված հաւէն աւելի հա-մեղ:

Ինք միշտ կը պնդէր, որ ատանց ժպիտի օգի չի խմուիր:

Միթէ կարելի՞ է ատանց փեսացուի նշանուք ընել, կամ անանց հարսնցուի՞ հարսանիք: Հարսնցու մը պէտք է անպայման, որ անապաստի ամայի, անշունչ անկողինը կեանքի երջանկութեան եւ սօժի վերածէր:

Եւ իր հարսնցուն կնկան ժպիտն ու անուշ խօսքերն էին:

- Հայրի՛կ, անօթի եմ, բան մը չբերի՞ր, - կրկինց աղջնակը:

- Հիմա եղբարդ բան մը կը բերէ, ես կուշտ եմ, խանութը նմառ

կերանք:

- Հայրի՛կ, ֆելեֆիլ բերե՞մ:

Գրպանը տանըմէկ սուրբական ոսկի ունէր միայն:

- Ա՛ռ սա մէկ ոսկին եւ երեք հաւ բեր:

Տղուն անօթի նայուածքները լափեցին մէկ ոսկին. առաւ զայն եւ

վազեց:

- Ա՛մօ՛, երեք հաւ ֆելեֆիլ:

- Ծօ՛՛ չախալ, կարդդ սպասէ, աղջկան կարգն է՛:

- Ա՛մօ, անօթի եմ:

Ա՛մօն չպատասխանեց: Ի՞նչ շար է այս ամօն, ի՞նչ անբաղաճավար, մտածեց, եւ դառնալով աղջկան՝ ուզեց խօսիլ հետը:

Իրեն տարեկից աղուոր պուպրիկ մըն էր, բայց ի՞նչ հարցնէր:

- Ֆելեֆիլը համով է, չէ՞, ես ֆելեֆիլ չա՛տ կը սիրեմ:

Կարճութիւն մը դունաւորեց աղջկան այտերը: Զգաց՞ որ սրտին անծանօթ խլրատում մը, մեղմ բան մը բռնկեցաւ մէջը, իրեն համար քորո-րովին. նոր երջանկութիւն մը պարտրեց հոգին...:

Աղջկան դէմքի կարմիրը աւելի բռնկեցաւ: Առաւ ֆելեֆիլը, կոճ-կըւած խնդուքով մը պատասխանեց աղուն ու փախաւ:



- Վաճէ, այ կը բուէ...
 Ո՛րք, այս կինը, որքան շատախօս է, որքան վնասակար: Իրեն ի՞նչ,
 կը բուէ թէ ոչ: Ինք պիտի չքնանայ, զօրո՛վ է՝
 Երկնցաւ անկողնին վրայ: Բայց տակաւին տղեկը դանկին մէջ առն
 կը վազէր: Անորը վագք չէր, այլ թոխը:
 Կինը երկնցած էր քովը: Բարակ դիւնբանոցով մը բանառած մարմ-
 նէն արձակուած հեշտանքի ջերմութիւններ հրաւէր կը կարդային: Քնացաւ
 ճիշդ այնպէս, ինչպէս սեւէ զոյգ սովոր են քնանալ:



Դպրոցը բոլորը կը վազէին իր մտքին մէջ,
 Առօրեայ յոգնութիւններուն հետ լալկեց պատժուածքին հասունցած
 մասը եւ վերադարձաւ տուն:
 Անցաւ դրասեղանին առջեւ: Ակնարկները հապճեպով ցատկեցին բա-
 րակոյտերուն վրայէն: Ձեռք առաւ գրիչը եւ սկսաւ շարունակել-

«... Վարուժ հասաւ տուն:
 Կերան ֆէլէֆիլ լորձնաշորթն:
 Սօսիկ սկսաւ դալարուիլ:
 - Հայր, բժիշկ կանչէ Սօսիկին:
 - Ուրկի՞ց դեղի դրամ, Աստուած:
 - Ախ, հայր, տեղէ մը ճարէ:
 Բժիշկը եկաւ եւ հապճեպ քննութենէ մը ետք՝ եզրակացուց.
 - Եղածը պարզ թունաւորում, հրմ... թունաւորումի պէս բան մըն
 է, սնունդը ազտոտ ըլլալով ստամոքսին մէջ խանգարում է պատահած:
 Ոչինչ, հիմա դեղադիր մը դրեմ, վաղը կ'առնէք, դրե՛լիքս վիքամիլն է,
 մարմինը զօրանալու պէտք ունի. բայց թունաւորումին ազդեցութիւնը չէ-
 րոքացնելու համար բաւ է գաւաթ մը լիմոնի հիւթ խմել:
 Բժիշկը գրպանեց տասը սակին: Պատրաստուեցաւ մեկնելու. դրան
 առջեւ կանգ առաւ, կոճկուեցաւ, ու ձայնին ազդեցիկ շնչո մը տալով՝
 աւելցուց.
 - Բայց մի մոռնաք որ մաքուր սնունդը անհրաժեշտ է:
 Ու մեկնեցաւ:
 - Թող ճէշտճէտին եօթը տիպը մեկնէր: Աստուած, դուն վերը նըր-
 տած սոխ-սխտա՞ց կը մանրես: Մեր վիճակը շտեսա՞ր: Աստուած, սա ան-
 խիղճ բժիշկը խեղճ Յարութին տասը սակիով պիտի հարստանա՞ր: Ձէ՞ որ
 դուն կը հասնիս, երբ մարդիկ քեզ կը կանչեն: Ո՛ւր էիր, Աստուած: Ին-
 չո՛ւ շեկար: Ե՛րբ եկած ես որ, դունէ՛ այս անգամ գայիր: Ինչո՞ւ այս ան-
 խիղճ բժիշկը դարձի չբերիր: Ինչո՞ւ այս դրամասէր հեթանոս բժիշկի հո-
 գին, քար սիրտը չկազուղցուցիր:
 Իւ պոռթկաց կօշկակարը: Հարձույտ: Ձովացաւ:
 Ձեռքը երկարեց դրպանը: Փնտուկ քսանըհինգ դրուչը: Մատները
 դժկամութեամբ դտան դայն, առաւ վերջին լուման:
 - Ա՛ն, սա տեղէն կէս քիլօ լիմոն բեր:

Կեանք: Վաղը ելեկտրականութեան գանձիչը պիտի դար: Թող եր-
րորդ ազդարարութիւն մըն ալ ձգէր: Ի՞նչ պիտի ընէր: Շատ-շատ ելեկ-
տրականութիւնը պիտի կտրէր: Բայց չէ որ այս լոյսերուն մէջ ալ ար-
դէն թանձր, մութ, սեւ կեանք մը կ'ապրէր: Ինչ կ'արժէր լոյսը, էականը
հողիին եւ երջանկութեան լոյսն էր:

Պարոն Յարութիւնի սրտին հեւքը թշու, փուլ բերելով իրեն հետ
ամբողջ աշխարհ մըն:

•

Հանդարտեցաւ նաեւ Վահէ, «միթէ ա՞յս է կեանքը», մտածեց եւ
պատմուածքը փակեց օտար գրողի մը մէկ ճշմարիտ խօսքով՝ «Մարդկա-
յին սկզբունքները կը յարգուին այն ատեն միայն՝ երբ կուշտ են մարդոց
փորձերը»:

Որունց գրութիւնը «Բագին»-ին զրկել:

Յենթութիւն: Թէրեւս:

Գրիչը ձեռքերուն մէջ դողալ սկսաւ: Բայց ձայն մը, ներսէն ժայթ-
քող ձայն մը պարտադրեց որ գրէ:

Եւ գրեց:

Հայեպ, 1 Մարտ 1969

Պատուարժան Խմբագրութիւն՝

«Բագին» գրական ամսագրի,

ՊԵՏՐՈՒԹ:

Անասիկ ձեզի նարեկ «որք» մըն ալ՝ «վարպետի շուկ կամ նպաս-
տաւոր շրջանակ չվայելած երիտասարդ մը, որ ձեզի կը գրկէ իր առաջին
համեստ պատմուածքը: Երբեք գայն տպուած տեսնելու պարագայակամ
մայմաջէ մը մզուած չէ որ կը գրկեմ: «Հատուտ»ի եւ «կիրէ»ի առաջին,
«թերեւս թերթաշ» ծիլ մըն է ասիկա:

Շատ լաւ գիտեմ, որ գրութիւններէն շատեր «կը շարձարտին», ա-
մանք ալ «կը բզկտուին», իսկ ուրիշներ ետ կը վերադարձուին շինիչ տի-
տոգրութիւններով»:

Արդ, կ'ապաւինիմ ձեր նշմարիտ, օգտակար եւ շինիչ արշուձին,
կանխադաս շնորհակալութիւններով՝

Սփիւռքեան «որք»երէն
ՎԱՀԷ ԺԱՄԱՅԵԱՆ

•

Թուղթը լուծ էր: Գրութիւնը զինով հրճուանքով էր աչքերը կը
համարէր: Թուղթը լուծ կը ժպտէր: Կը պարէր:

Սլաւ աթոռէն, բոլորովին նորոգուած: Նոր Վահէ ժամկոչեան մը,
որ երկնալով անկողինն վրայ, հրճուանքով ու հաստեղով սրունց:

- Պիտի գրեմ: Մանուկը «Գրութիւնն» հաջ, զիբբերէն առաջ»:

Գ. Կ.

Հայեպ

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԿՌՈՒՆԿՆԵՐՈՒ ԵՐԱԶՈՎ

Սիրոյ մարմաք սրտիս՝ անբուն էի այդ գիշեր,
Կը շքէի մեծաւոր փոփոնակեան քարափին:

Հագիս՝ հեռովը գեղում կարօտներու կարեվեր
Եւ իզմերուս՝ որ ինկան ասուպի պէս ցայգային:

Իր հիւրընկալ ասիերում ես այցելու մը օտար
Ու քախտիս դէմ դառնացած անկարեկիր սիրահար՝
Կը տեղայի տեղայայտ թանալ ծալքերն իմ հագուստն
Հեշտակոծակ ջուրերուն...

Բայց ծովն անփոյթ կը ճիրիէր աղերսանքիս դէմ խորին,
Մերք կ'արթննար ակամայ շագնաւի մը սայլէն

Ու կը սուգուէր պահ մը ետք գիրկն անուրջին վերտոնն,
Հառաչելով փրփրադէզ լսկ տրտուցներ ինձնիրենն:

Ու վիշտերուս մէջ անտեր երբ կ'ուզգուէի գինետուն,
Հագիս կարօտ բաժակին սփռփարար հեշտութեան՝

Հեռուն, տարփոտ գիշերին, տեսայ լուսնին տակ գարնան
Յնձուսի մը անկազին

Որ կը նայէր գլխահակ ծովու հանդարտ ծփանքին:

Ռ՞Վ էր սակայն եւ ի՞նչու՞ այնպէս լուռ էր, մտորուն,

Որ կը հակէր տրտութեամբ կռակներուն փրփրադէզ:

Ջայն դիտեցի ցանկութեամբ եւ սիրաբուռն ի՞նչ տեղում,
Նրբամարմին էր, մինակ, արդեօք որո՞ւն կը սպասէր,

Նաւաստիի՞ մը ծանօթ, որ ժպտագին ժամանէր
Եւ քեւանցուկ տանէ՞ր գայն խուցն իր երգով մը գիւնով...



Պահերը լուռ կ'անցնէին ու սրտիս մէջ կ'այրէին
 Միրաբարբոս ի՞նչ յայտեր, ի՞նչ ապրումներ անառն,
 Ա՛հ, կ'ուզէի որ մոռնամ տանջող տարփանքս անհուն
 Իր դիւքանքին դէմ շողուն...:
 Խեղճած խռովքը սրտիս՝ ես մտնեցայ համարակ,
 Ձեռքիս փունջ մը մանիշակ -
 «Բարեւ», ըսի, ընծայելով գայն իրեն,
 Բայց չստացայ գէթ ողջոյն մը փոխարէն:
 «Գոցէ տարուած է», ըսի, ողբունելով գայն կրկին,
 Ձեռնանշեց աչքերուս ոչ իսկ նայումս մը լռին...:
 Ծովափն ի վար կ'անցնէին մերք յամրանեմ ստուերներ,
 Լազուրք՝ ծովն էր միայնակ որ կը հեւար յղփագին
 Ու լուսնի սակ այդ գիշեր
 Անհուն էինք միասին...:
 Այլ մզումով մը անգուսպ երբ ձեռքս իրեն մեկնեցի,
 Իր նայումսին դէմ անհոյք ես զգացի, զգացի
 Թէ այդ ոգին ծովափնայ
 Լակ արձան մ'էր աղկայ:



Երբ ձեռնուցայն կը դառնայի ես տրտում
 Սգաւորի մը հանգոյն՝
 Յանկարծօրէն լսեցի
 Կարօտաբարդ հրգր հին, երգն հոգեյոյզ «կռունկ»ի:
 Ո՞վ կը հծծէր գայն արդեօք այս հեռուօր ծագերում -
 Դիտեցի շուրջս արբշիւ, ո՛հ, ինչ կախարդ հրաշքով,
 Նայն արձանն էր պրոնգեայ, որ իմ պանդուխտ հայրերում
 Կ'երգէր վիշտը դարաւոր խղցրաբքիւ յանկերգով -
 «Կռունկ, ուստի՞ կու դաս,
 Ծառայ եմ ձայնիդ...»
 Իր հեզ ձայնին ունկնդիր՝ մտածեցի տխրագին.
 Ո՞վ էր Լակն այս օտար որ կ'երգէր նոյն ապրումով,
 Նայն նայիրեան երագով...
 Հնդհատելով երգն իսկայն ի տես Քախձոտ հայեացքիս՝
 «Սպասումի, օ՛, ծովահարսն եմ աներբ
 «Լանժեյիմի՛»ն, չե՛ս գիտեր,
 Հայրենիքիս պանդուխտներում ծովագնաց
 Ես կը մազքեմ բարի ողջերք, բարի դարձ -
 Քանի՞ սէրեր արտասուագին եղան բաժան
 Բայց բոյրին մէջ նոր սէրերու ճանապարհին
 Օտարացան ու չդարձան:
 Մերկ եմ թէն, ծովահարսերն ինչպէս բոլոր,
 Ինչո՞ւ սակայն կը Քախձոտ շուրջս մոլոր»

Օ՛ր, մերկուրիւնս չունի երբեք ոչ մէկ ազերս
 Տեմչանճնեբուզ հետ սիրակէզ... :
 Մի՛ ցանկար գիս,
 Եղբրամա՛յրն եմ գի դժբա՛խտ ժողովուրդիս.
 Հո՞ծ նաւերս ի յար առյի՛ն՝
 Քմբամ ցարսին թէ լոյս գարնամ
 Ես կը ապստեմ մտած անձայն
 Հեռակորոյս գաւակներու ժամանումին :
 Մի՛ յայտներ ինձ սիրոյ վերքերդ անբաւասան,
 Օտա՛ր ես դուք եւ օտա՛ր եմ վիշտերդ հագույս.
 Միտփանճի կ'ուզես յօսէ՞ք, դե՞պ ու դարմա՞ն,
 Հայրենիքիդ գնա՛ լանջերն գեղեցկալոյս :
 Գնա՛, կանգնէ՛ գետափունճին Մայր Արաբսի
 Եւ լա՛ց իրեն, լա՛ց մարմններդ անբաժնի,
 Ան կարեկցի աղերսանիքդ պիտի անհում
 Գարգուրանճով իր կարկաչումս :
 Լսեց յանկարծ, ու դէպի ծոցն իր երբ վազեցի՛
 Հպան ձեռքերս սզնձանոյլ իր այտերուն,
 Ո՛հ, զգացի թէ լուսնի սակ կ'երազէի,
 Լսի հոգիս էր որ «Կուսմկ»ի երգը կու լար... :
 Ըմբռնեցի տառապանճիս մէջ դառնօրէն,
 Թէ գթութեան չկայ արցունճ օտարներէն.
 Ու ցաւին մէջ իմ տարագիր մտիմիճներուն,
 Որոնք դարեր հեկեկացին երգն այս սրտում,
 Վերելին դէմ հայրենիքիս լուսապայծառ,
 Որ կը ծաղկի գրկած ազի՞ն անմահութեան,
 Ու գալիքի յոյսի՛ն մէջ վառ, յոյսի՛ն անմար
 Պիտի դառնանք թէ հողերուն մեր սեփական,
 Թէ չհծծէ եւ ո՛չ մէկ վայր
 Ա՛յ «Կուսմկ»ի երգը լալկան,
 Հանգանակին մէջ հաւատքին այս վեհագոյն
 Մտոցած մարմնին իմ հուր սիրոյն՝
 Ամոճեցա՛ւ սիրտս անյոյս, սիրտս խռով,
 Վարդածիծաղ կուսմկներս նա՛ր երագով... :

Իմացական Շարժում



«Եթէ այս բալոր խօսքերը, բալոր գրութիւնները, որ ասուեցին ու կարգացուեցին ինձ եմ վերաբերում, ինձ համար են, հաստացէ՛ք, որ շատ են ու շոյալանք, իսկ եթէ իմ միջոցով տրւում են հայ մշակույթին եւ նրա բազմաչափար մշակներին, այն ժամանակ, հաստացնում եմ ձեզ, որ բիշ են դրանք»:

ՄԱՆՈՒԷԼ ՄԱՐՈՒԹԵԱՆ

Սայրսի սկզբները, Բարսի մէջ, Իրանական Գրողներու Միութեան նախաձեռնութեամբ տեսուեցաւ Մանուէլ Մարութեանի բնական ու գրական գործունէութեան յիմնական յարեցանքը:

Բան երկիրներու երկու անգամ ցան քաղաքներու մէջ ցանի մը հարիւր անգամ բեմ բարձրացած այս վաստակաւորը, իր անձին մէջ կը մարմնացնէ հայ մշակույթին ողորդող նախնայնորուն մէկ ահագոյրը: Տարբեր քաղաքներու մէջ եւ յիսուն տարի շարունակ բեմ բարձրացած ըլլալու փաստը մարտիրոսութիւն մըն է ինքնին եւ ամէնէն առաջ կը վկայէ Երանական ուժի մը մասին, ա՛յն մասին, որ Մարութեանի համար բեմը եղաւ կենսատու սնունդ մը, իր հողին սփոփող միակ միջոցաբաժնի, առաջը, հայրենիքը: Ուրիշ ձեռքով զփուար թէ կարելի ըլլայ բացատրել իր հեռուգտութիւնը:

Ի՞նչ սրտատու է մանաւանդ այդ վաղըը: Հրուէրով համբայ ելլելու բախտը շատ նանթ չէ հայ արուեստագէտին, այդ հնարաւորութիւնը յաճախ շարուեցաւ եւ Մարութեանին, Մարութեան ընդհանրապէս համբայ եղաւ իր նախնայնութեամբ, առանց պայմանագրութիւններ կնքելու, զինուած միայն իր արուեստով, նուաճած ու փայտաբան գեղեցկութիւնները այլոց հազարհազու հայկական ցեղերով, ծառայութեան ծարուսով:

Ուրիշներ արկանախնդրութիւն պիտի համարէին գործունէութեան այս կեղքը: Տարբեր է միթէ իրականութիւնը: Մարութեանի գործունէութեան ամենարեզուն ըլլանին աւելի աննպաստ էին մեր պայմանները, բեմը՝ մեկ ինչիք, խաղակից հարելու պարտաճան՝ երկրորդ հարց, հանգիստաններուն որակն ու քանակը՝ տարբեր պատմութիւն, բայց Մարութեանի գործունէութիւններուն առջեւ ահարկ չմտաց, յաղթահարեց բոլոր խոչընդոտները, գտաւ գործակիցներ, մարդից խաղակիցները, բեմ յարգարեց յաճախ եկեղեցիի մը վաւթին մէջ, զպրօքի մը յակը, որիւէ սեղ եւ այդպէս ներկայացաւ ժողովուրդին, ստեղծեց, տարածեց արուեստին հմայքը, տասնեակ երիտասարդներ կուգելով բեմին, իր անձին մէջէն հազարաւոր մարդոց սիրելի դարմանելով թատրոնը:

«Բացիմ» ի որակ կը մասնակցի Մարութեանին ընծայած Իրանական գրողներու յարգանքին եւ նոր կորով կը մայթէ երախտալուս վաստակաւորին:

Բ. ՓԱՓԱԶԵԱՆ



ԴԵՐԱՍԱՆԻՆ ԱՇԽԱՐՀԸ

(ՄԱՆՈՒԷԼ ՄԱՐՈՒԹԵԱՆԻ ԲԵՄԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՅԻՄՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԻՅՈՎ)

Կոչ մը, Թեհրանէն, կը յայտնէր, թէ լրացած էր զերասան Մանուէլ Մարութեանի բժժական գործունէութեան յիշատակը. թէ շուտով, 1969-ի Մայիսին, յորելիական հանդիսութիւններ տեղի պիտի ունենային ի պատիւ վաստակաւոր զերասանին:

Ինչքան ալ լաւ խմբագրութիւն նման առիթներով կազմուած կոչերը, իրենց մէջ կը պարունակեն տրամեցնող իրողութիւններ՝ ժամանակի թաւալումն ու մոռցուած ըլլալու յիշեցումը: Երկուքն ալ, երեւութապէս կը պատկանին յորելիական երեւութապէս կրնան թուիլ ոչ անձնական իրողութիւններ, սակայն այդպէս չէ. երբ ժամանակը կը թաւայի ու կը զգաս թաւալումը անոր՝ բոլորին համար է. ուրիշին ընդմէջէն սեփական ժամանակիդ անցնիլը կը զգաս եւ երբ մոռացումին մասին կը մտածես, ակամայ կը յիշես մոռցուած բազմաթիւ իրողութիւններ, ու կը տրամիս՝ անցեալին եւ զայիջին հաշուին:

Առաջին զգայնութիւնը, որ փոխանցուեցաւ ինծի Մարութեանի յորելիական առիթու առաջուած կոչէն՝ տրամութեան զգայնութիւնը եղաւ:

Երբ զերասանի մը կեանքի թաւալումին մէջ է որ արուեստական ձեւով

ընդմիջում մը կը կատարենք, եւ յիշատակայ հանդրուան մը կը մատնանշենք, կրկնակի ծանր է այդ առաջին զգայնութիւնը. ի՞նչ կը մնայ զերասանէն...: Շանթ կարելի է կարգալ՝ դարեր շարունակ, կարելի է զայն ներկայացնել որեւէ ժամանակ, որեւէ տեղ, եւ արուեստագէտ Շանթը կը վերակենդանանայ. տնտէս է: Իսկ Ադամեանէն, Սիրանոյշէն, Փափագեանէն... ի՞նչ մնացած է. «Մեծ գերասան էր» յորջորջումը միայն: Իրենք, վերակենդանացողները թատերագործներու գրքերու էջերուն մէջ պատկած անձնաւորութեանց, որ մը այլ լեւս պիտի չըլլան. կարելի պիտի չըլլայ իրենց արուեստը ըմբռնինել, ոչ մէկ նկար, ոչ մէկ ֆիլմ կրնայ վերարտադրել զերասանին ստեղծագործական պահը, կեանքեր ստեղծագործող իւրաքայտուկ աշխարհը. իւրաքանչիւր ներկայացման զիշեր, ան կը բերէ բեմին բան մը իր էութենէն, անձանթ տուեալ մը, որ կրնայ Հիւսցումի սարսուռը փոխանցել սրահ, ի տես զերասանին ընդմէջէն կեանքի եկող այլ անձնաւորութեան մը ծնունդին:

«Իր անձնաւորութիւնը այրելու համար զերասանը կ'օգտագործէ գրութիւն մը. կրնայ եւ սչ մէկ գրութիւն ունե-

նալ ի սնունդին: Քատրանին անձամօքը, «ԻՔՍ»ը, ասիկա է բեմական արուեստը՝ անկախ միւս բոլոր արուեստներից: Չօշակիի այնպէս՝ ինչպէս կեանքը, շողւած սիրով, իլակամ սիրով, իրական արտաբերականներով ու ցանկով: Արուեստ մը, որ չի ծնիր միւս բոլոր արուեստներու միացումով: արուեստ մը, սւր զգայնութիւնները, զգացումները, մտածումները չեն վերածուիր երաժշտութեան, գոյնի, բանաստեղծութեան, այլ կ'առաջացնեն մարդկային էակներ: «Քատրանիան արուեստը ամենապարզն ու ամենազբոգականն է արուեստներում: Կ'ապրի այնպէս՝ ինչպէս կեանքը: Եթէ յանկարծ յարութիւն առնէին բոլոր կեանքերը, սէրերը, ցանքը որ բնմ ելած են, որ դերասաններ շարունակ ապրած են բնմի վրայ, դարերէ ի վեր... այդ բոլոր գործերը...: Արուեստը այստեղ ստեղծած է կեանքը: Փաստը տրուեցաւ այս գիշեր: Քիչ մը իրական, անզոգակի կեանք ծնաւ այս գիշեր, այս բնմի վրայ, մեր խեղճ դերասաններուն քննադէմ... ու հիմա (դառնալով դերասաններուն) վերադարձէ՛ք սեր կեանքին, (Հասարակութեան) իսկ զուգ, մտքէ՛ք մեզ, քանի որ ասիկա է մեր օրհանգիւրդը»:

(Լ. Փիլանտէլլօ, «Այս գիշեր անպատրաստից կը խաղան»)

Բեմադրիչ Հինգֆուլի բերնով, դերասանին մեծութիւնն ու միաժամանակ մոռացութեան դատարարութեան ըլլալուն տիրութիւնը ճշմարտութիւնն է, որ կ'ընդգծէ Փիլանտէլլօ:

Մարութեանի բեմական գործունէութեան յիմնադրանքն առթիւ, տրամութեան զգայնութիւն մը, օրերով յամեցաւ մէջը. յանձնարարութիւն կողմն ու նամակը, երկու երեք օր, գրասեղանիս մէջ անկիւնը հրած էի, կարծես վանելու համար անկէ ինծի եկող ալիքը: Հետզհետէ, սակայն, այլ իրողութիւն մը սկսաւ առաջին գծին գալ, այս անգամ, անձնական յիշողութեանց մութին մէջ կար-

ուած աշխարհէն կամաց-կամաց լոյսին պալով, այդ իրողութիւնը լոյսի բիծ մըն էր. մութին մէջ, սիկարէթի վառուող ծայրի մը բոցավառումը: Մութին մէջ, սիկարէթի բոցավառ ծայրին ետին, նըստարանի մը վրայ, ինքն իր վրայ կըծկրած Մանուէլ Մարութեանը կար. Պաղտատի թարգմանչաց վարժարանի բակին մէջ, աղիւտաշէն բեմին կից բակը, ներկայացման մը միջնարարին (Եթէ չեմ սրայիր՝ Շիրվանդադէի «Նամուսը») 1921-ի կամ 1922-ի ամբան:

Յիշողութեանս մէջ, 47 տարուայ արագ վաղջ մը տեղի ունեցած էր դէպի ետ, դէպի մանկութիւն: Հայաստանէն եկած խումբ մը երիտասարդներ էին, սիրող դերասաններու խումբ մըն էր: Մեր բնակարանը, այն ատեն, Հայոց եկեղեցիի նեղ փողոցին («Տարսուկէ»-ի) մէջ էր. հօրեղբորս մեծ վաճառատան, Մալաղլու վեհապետի երկրորդ յարկը:

Եօթը տարեկանին դժուար է յստակ դադար մը ունենալ Հայաստանի Հանրապետութեան անկման, անոր խորհրդողայնացման, դէպի Պարսկաստան տեղի ունեցած արտագաղթի մասին: Այն օրերուն չէի գիտեր, թէ խումբը երիտասարդ ուսանողներու խումբ մըն էր, որ Փրակա կ'երթար, շարունակելու Համարութեանը: Ծամբորդութեան եւ ապրուստի ծախսերը հողալու Համար, խումբը ինքզինք կազմակերպած էր իբրեւ սիրող դերասաններու խումբ, եւ ճամբուն վրայ, իւրաքանչիւր հայաշատ քաղաքի մէջ, ներկայացումներու շարք մը կուտար:

Յիշողութիւնը, սակայն, առանց գիտակցութեան եւ ըմբռնումի ալ պատկերներ կը պահէ: Երիտասարդ դերասանները մէկէ աւելի անգամներ եկած էին մեզի. կարծեմ մեր բակին մէջ տէքորներ կը գծէին: Սե յետոյ, բաւական երկար ժամանակ մնացին Պաղտատ, եւ... անմոռանալի ներկայացումներ տուին զըզրոցին բակը: Բոլորին ներկայ էի. չեմ յիշեր ինչպէս, փախստակահ, հրաւիրեալ... եօթը տարեկանին չեն հրաւիրուիր. դրամով՝ այդ տարիքին դրամ ուրկէ. ծնողքի՞ս հետ... յիշողութեանս

մէջ չկայ անոնց ներկայութիւնը, Հակասակ որ զիտակցութիւնս զիտէ, թէ անոնք անպայման հոն էին: Ի՞նչ փոյթ սակայն, թէ ինչպէս հոն էի. կը բաւէ որ բակի մթութեան մէջ տեղ մըն ալ ինծի համար կար, եւ լուսաւոր բեմին վրայ տեղի ունեցող դէպքերը, գացող եկող անձնաւորութիւնները, երբեմն զարհուրանք ազդող, երբեմն զուարթութիւն բերող, բայց միշտ հիացում պատճառող աշխարհներ կը բանային դիմացս:

Ճամուռքի՞ մէջ էր արդեօք Մանուէլ Մարութեանը փափախաւոր հսկայ մըն էր, թէ «Մէրլաք Լալմա»ի մէջ, ուր արագօրէն զիմայարդարում ու հազուստ մէկդի նետելով, երեւան կուզար ոճրագործները երեւան հանող իրբեւ վարպետ հետախուզող. արդեօք «Տարօրինակ մեծալը» թատերակի՞ն մէջ էր. ո՛չ, «Նամուս» էր, «Նամուս»ը ըլլալու էր. անօրինակ հսկայ մը կար բեմին վրայ: Ձայնը կ'ըսէր ինծի, թէ ան մեր տունը կող Մանուէլ Մարութեանը պիտի ըլլար. սակայն բեմին վրայի հսկան ուրիշ մէկն էր, ուրիշ բան էր. եւ ես կ'ուզէի մօտէն տեսնել ի՞նչն էր, ինչքն էր, կի՞նքն էր, ինչպէ՞ս Հակասակ ինք չէր բեմին վրայ:

Միջնարարին, ինքզինքս դտայ բեմին կից եղող մանկապարտէզի բակը: Մէկ երկու հոգի ոտքի էին. մէկը, նստարանի մը վրայ հակած, ինքնիր վրայ կծկուածի ձեւը ունէր: Սիկարէթի ծայր մը միայն կը զգացնէր անպարտ զանդրածի մը ներկայութիւնը: Ա՞ն էր. ան չէ՞ր. չէր խօսեր, զէ՞մքը չէր երեւեր... Իրմէ երեք շորս քայլ հետու, մութին մէջ կանգնած, անձանթ մեծութեան մը դիմաց՝ աւելի եւս փոքրացած, շունչս բռունած կը սպասէի. Մարութեանն էր, թէ «Նամուս»ի հսկան...:

Քաշեց սիկարէթին ծուխը ներս. բոցափառեցաւ մութը, զէ՞մքը զժազրուեցաւ: Ա՞ն էր. Մարութեանն էր. ոչ, այն միտն էր: Երկուքն ալ էր: Ի՞նչպէս կրբնար երկուքն ալ ըլլալ, Աստուած իմ: Կարելի՞ էր արդեօք քիչ մը աւելի մօտե-

նալ. պիտի չբարկանա՞ր արդեօք: Կուզէի գպիլ իրեն:

Քայլ մը. միայն քայլ մը մօտեցայ: Իր ձայնը հնչեց, ու ես կանգ առի: Ինծի չէր ուղղուած խօսքը. Հաւանաբար խումբի անդամներէն մէկուն հետ կը խօսէր: Կրկրորդ քայլը չկրցայ առնել: Փախայ: Հետագային Մարութեանը տեսնելու առիթը ունեցայ. իր ձայնը առանց սարսափի ալ լսեցի, մինչեւ իսկ հետը. խօսակցելու առիթը ունեցայ. այլևս փախ չէր սպասճառեր ինծի. քարեկամ ալ էր: Սակայն ատիկա միւս Մարութեանն էր, փափախը չլիտուն չէր, մութին մէջ կայծկլտացող սիկարէթ մը չկար մատնեքուն մէջ, պարզ մարդն էր, բեմին վրայ ստեղծագործող հսկան չէր:

Այսօր, իր դերասանական կեանքի յիսնամեակին առթիւ երբ կը գրեմ, տրամութիւն չկայ հոգիին մէջ, կայ անժար լրյոթի զգայնութիւնը: Եթէ քուտասունը թը տարիներուն մէջէն զարմիւր շունչով բոցափառող սիկարէթին լրյոթը իր ստեղծագործ հսկայի դիմադիրը կը զժողովէ այսօր իմ յիշողութեանս մէջ, և դերասանի ստեղծագործութեան դիմաց զգացումած անձկութիւնն ու հիացումը այսօր եւս կը վերապրեմ, Հաւատացէ՛ք, նոյն ուժգնութեամբ, կը նշանակէ Մանուէլ Մարութեանն սուր իր մէջ թատրոնի անձանթ «Իքս»ը եւ տէրն է դերասանի արուեստին, որ «Շօշափիյի է այնպէս՝ ինչպէս կեանքը. շաղուած սիրով, իրական սիրով, իրական ուրախութիւններով ու ցաւերով»: «Ամհնապտուրն ու ամենաողբերգականը արուեստներուն»:
«Որ կ'ապրէ այնպէս՝ ինչպէս կեանքը-կը մեռնի այնպէս՝ ինչպէս կեանքը»։ այս սինքն միշտ յարութիւն առնելով, ծլնելով, ծաղկելով ուրիշներու հոգիներուն մէջ, շարունակուելով ուրիշներու ընդմէջէն:

Կը կարծեմ, թէ զիտակցութիւնս ատոր՝ շարունակման գուհունակութիւնը կը բերէ, եւ ատիկա կարելի միակ ձեւն է յաւիտենականութեան մաս կազմելու:

Բ. Փ.

ՀՐԱՅՐ ԽԱՆՔԵԱՆ

Ս Է Ք Ի Ի Լ Ա Ր Ի Ձ Մ
+++++

Սէֆիւլարիզմ տարազի ընտրութիւնը քառասունէն է այն պատճառով, որ հասարակարգերի պատմական հոլովոյթի մէջ սէֆիւլարիզմը ներկայանում է նախ որպէս հանգրուան, եւ ապա խորհրդանշում է նոր մէկ դարաշրջան:

Այժմու յառաջընթաց հասարակարգերը այդ փուլից անցել են 19-րդ դարու վախճանին. մինչ յետամնաց եւ թերաճ հասարակարգ ունեցող երկիրները կա՛մ նոր են թեւակոխում այդ հանգրուանից ներս եւ կա՛մ էլ այն դիւրանցեալու ընթացքի մէջ են:

Եթէ կամենանք թարգմանել եւ պարզարանել սէֆիւլարիզմ տարազը, հարկ է աւելորութիւն դարձնել նախ նրա բառական եւ յետոյ իմաստական ու տարազարանական - քերականութիւնը - նշանակութեանց վրայ:

Սէֆիւլարիզմը՝ որպէս բառ-բայ, նշանակում է կրօնը անջատել քաղաքականութիւնից եւ մշակոյթից. սակայն երբ պատմա-փիլիսոփայութեան ու հասարակագիտութեան դիտանկիւնից ենք նայում այդ բառատարազի վրայ, այն մեկնաբանում է որպէս աւատապետական դարաշրջանի վախճանաւորումը, դրա-

մատիւրութեան սկզբնաւորումը, հին դաւանարգի սչնչացումը, նոր դասակարգերի առաջացումը, անտեսա-արդիւնաբերական նոր յարաբերութիւնների եւ պատմա-հասարակական նոր պայմանների երեւումը, որոնց շուրջ պիտի խօսուի վարը:

Սէֆիւլարիզմի շուրջ խօսելիս, պէտք չէ մոռնալ եւ այն, որ անցեալ դարում տեղի ունեցածը, ամենայն նօյնութեամբ չի կարող կրկնուել ժամանակակից յետամնաց եւ թերաճ երկրներում:

19-րդ դարում, նորահաս քաղցենի դաւանարգը երբ անցաւ սէֆիւլարիզմի սահմանը, նախ, հասարակութեան եւ անտեսութեան բնագաւառներից զիջեց աւատապետներին ու կղերին, ապա իբրև ունեւ ազահոյեց մասնաւոր սեփականութեան եւ արդիւնաբերութեան համար. հասարակա-տնտեսական ապակեզրոնացումը, որ բխում էր աւատա-տնտեսութեան էութիւնից, հայրենասիրութիւնն ու ազգասիրութիւնը ձեռքազատեց կրօնի ներգործութիւնից, շեշտաւորուած ազգայնամոլութիւնը (շովինիզմը) խոր ներարկեց զանգուածների հոգիներում, քաղցենիութեան բացարձակ

գերիշխանութիւնը կրայ յաւերակեց եւ ձեռնարկեց հոծ զանգուածներէ լարուած շահագործմանը :

Քիչ անց, յիշատակելի քաղքենիութիւնը աչքառու նուաճումներ է արձանագրում թէ՛ երկրներէն ներս եւ թէ՛ միջազգային կեանքում : Եւ շուտով՝ սրբութաց առաջացող քաղքենիութիւնը, հասնում է 19-րդ դարու վախճանը խորհրդաշնորհ մենաշնորհների կամ մոնօփոլիսքական ֆախիթարիզմի և նրա պատճառ-հետևանքով թարձր փուլերից մէկին՝ կայսերապալատութեան : Այդ սլացքը տեւում է մինչև 19-րդ դարի վախճանը եւ առաջին տասնամակնիս յաջորդող տարիները քոսներորդ դարու : Այդ ժամանակաշրջանի պահերն ու պայմանները մեծապէս նպաստաւոր էին մասնաւոր դրամատորութեան արագ զարգացման համար...

Եւ սակայն, վերիվայրորէն փոխուել են այսօր պայմաններն ու ժամանակները : Ներկայիս հրապարակ են իջել այնպիսի նոր ուժեր եւ գործօններ, որ իսպառ փոխել են մարդկային հասարակարգերի զարգացման ուղիները եւ եղանակները :

Այսօր այլևս սրբազնութիւն չէ մասնաւոր սեփականութիւնը : Աւատակետական սեփականութեան անկումից յետոյ, այժմ քաղքենիական մասնաւոր սեփականութեան կողին առաջացել եւ տարածուել է պետական-հաւաքական արդիւնաբերութիւնը : Մեր օրերում շատ է տարածուել արդայնացման եղանակը, որն ինչ խօսք՝ շատ է տարբերում մարքսի նախատեսած սոցիալիզացիայից...

Հաւաքական նորատիպ սեփականատիրական եւ արտադրական ձեւերը, որոնք բացարձակօրէն դոմնում են տիրող պետութեանց ձեռքում, պատճառ են դարձել, որ կարճ ժամանակում ուռճանայ եւ հասակ նետէ մի իւրատեսակ բիրտօրասի, որն ունի իրեն յատուկ դասակարգային շահեր ու փոխյարաբերութիւններ :

19-րդ դարում, հետքն անգամ չկայ

- եւ չէր կարող լինել - այսօրինակ բիրտօրասի : (*)

Մեր դարու մասնաւոր, հաւաքական ու խառն տնտեսաձեւերը եւ արդիւնաբերութեան եղանակները, զարգանալով նորագոյն քէֆնոլոգիի նպաստով, զոյսացրին այնքան և այնպիսի նոր սպասարկութիւններ եւ գրադումներ, որոնք եկան վերջնականօրէն կազմակերպելու նոր բիրտօրասին :

Ու երբ մէկ անգամ կազմաւորուեց նոր բիրտօրասին եւ թափանցեց տնտեսա-ընկերային մարդկային ներս, փորձեց ևս դիւրաւ յաջողեց իւր գրոյմը դնել հասարակական յարաբերութիւնների տնտեսա - արդիւնաբերական ձեւերի մարդ-բազմութիւնների առօրեայ կենցաղի վրայ :

Արդ, եթէ ընդունենք այս գրոյթը, ապա ուրեմն պարտ ենք ընդունել եւ այն, որ քոսներորդ դարու եւ հիւլէական դարաշրջանի քաղքենիութիւնը չի կարող ունենալ 19-րդ դարու միահեծան տիրակալութիւն եւ բացարձակ ազատութիւն : մերօրեայ քաղքենի դասակարգը հարկադրուել է իրեն բաժնեկից դարձնել նոր դասակարգեր եւ կիսել ու մասնատել իր շահը, իր տիրակալութիւնը եւ իր ազդեցութիւնը :

Ու դեռ ամէնք այս չէ : Կար ու կայ տակաւին միլիթարիզմի պարագան : Այսօր միլիթարիզմը ամէնուր փոխել է իր էութիւնն ու կառուցը. ուղղակի, տիրող դարաբ, միջամուխ է լինում հասարակարգերի առօրեայ կենցաղի մէջ : Այսպէսով առաջ է եկել միանգամայն նոր տեսակի մէկ այլ բիրտօրասի, յանձինս տիրող կամ իշխանութեան ձգտող զին-

(*) Անգլիայում, երբ աշխատաւորականները ազգայնացրին մի քանի մայր թարտարաբետաներ, սեղծուեց նպաստաւոր պայմաններ նոր բուրժուազի կազմաւորման եւ զարգացման նամար : Ու նոր բուրժուազի կրանց այն անհը, որ պիտի հասներ աշխատաւորութեանը, եւ աշխատաւորական զիկավարները երես դարօրնելի պահեցին ազգայնականացումից...

տորականութեան: Ոչ մէկ տարակոյս, որ 19-րդ դարում անդոյ էին այս երեւոյթները:

Ասեմք ընդհուպ, որ մեքորեայ բանւորն ու գեղջուկն էլ շատ են փոփոխել, անցեալ դարու թաղապատմամբ: Նոր քեֆնիքը, որ արդէն իր ետին է թողնում օքսօւրիքը եւ հակամէտ է հասնել արքիպիքի-ին (cybernetics). հաղորդակցութեան նորահար միջոցները՝ ձայնագիր, հեռաձայն, հեռաձայնահեռաձայն, միացած ներքին եւ արտաքին բազում այլ ազգակներին, բացել են ու բացում են բանուորների եւ գիւղացիների աչքն ու միտքը, նրանց մէջ գոյացնում են նոր հակումներ:

Որո՞նք են այդ նոր հակումները.

Նորա հակում ունեն վեր բարձրանալու բանուորի եւ գեղջուկի դիրքերից ու հասնել միջին դասակարգերի կենսամակարդակին. անշուշտ այն միջին դասակարգերի, որոնք դեռ քաղաքականօրէն ճնշուածների բանակին են մաս կազմում: Բանուոր եւ գիւղացի այժմու դասակարգերն ուզում են իրենց կենցաղափարութեամբ նմանուել միջին այն դասակարգերին, որոնք ունեն նիւթական աւելի բարձր պայմաններ եւ սակայն բնաւ նման չեն 19-րդ դարի մանր քաղքենիութեան: Եւ բանուոր ու գիւղացի այժմու դասակարգերը ձգտում ու հզնում են որոշ շփոյժ եւ ըստ հնարաւորին մասնակից լինել տիրող իշխանութեանը եւ իրենց կնիքը դնել իրերի եւ պայմանների վրայ: Կան դեռեւս մնացուկները Հին աւատապետական դասակարգերի (սնանկ աւատատէրեր, կղեր և սոցա կապուած հանրախմբեր) եւ դրանք էլ ըստ ժամանակի ու պայմանների բաժանուած են մի քանի մասերի, յարել են այլազան ճակատների եւ այսպիսով միանգամայն շեղել են դասակարգային պայքարի ուղին, որ գալիս էր անցած դարուց:

Այս, հարկ է նշել յոյժ կարեւոր մէկ հանգամանքի մասին, որն աչքի է

վարնում այժմու յետամնաց եւ թերաճ երկիրներում (*):

Ի բացառեալ Համայնաժողովի Զինատանը, միւս բոլոր յետամնաց եւ թերաճ երկիրները ունեն մէկ եւ ընդհանրական յատկանիշ: Ու այդ յատկանիշը, յետամնաց եւ թոյլ երկիրների ենթակայութիւնն է զօրեղներին՝ միջազգային փոխարարելութիւնների մէջ: Յետամնաց երկիրները եւ նրանց հասարակարգերը ենթակայ են պաղուծացման՝ զօրեղ երկիրների հասարակարգերի կողմից: Ուրեմն այսօրինակ պայմաններում, յետամնաց երկիրների նորահաս քաղքենիութիւնը ստիպուած է տուրք տալ նաեւ արդի աշխարհի զօրեղներին:

Յետամնաց երկիրների քաղքենիութիւնը ո՛չ միայն անկարող է 19-րդ դարու քաղքենիութեանը նման իր երկրի սահմաններից դուրս գալ եւ աշխարհակալական քայլեր առնել, այլեւ՝ իր երկրի սահմաններում իսկ ապրել եւ գործելու համար՝ հարկադրուած է բաժին տալ նոր ու Հին դասակարգերին եւ պատրաստ է հաշուի նստել աշխարհի զօրեղների եւ նրանց ակնկալիքների հետ: Ու հետեւանքը լինում է ա՛յն՝ որ յաճախ, յետամնաց երկիրների քաղքենիները դառնում են աշխարհի զօրեղների կամակատար միջնորդները, գործակատարները եւ հլուսեւրբ: Ու այսպիսի քաղքենիութիւնը հարկ է կոչել քաղքենիութիւնը...

Ներկայիս յետամնաց երկիրներում տարածուած մոնիթամային ճարտարաւեստները աւելի ծառայում են համաշխարհային քրասքներէ քոնտրաքոնտներէ շահերին, քան յետամնաց երկիրների ազգային տնտեսութեան օգտին:

(*) Այլազան յարաբերումներ են ստեղծուած յետամնաց երկիրների համար: Այդ շարքից է անս ընթացք աշխարհ տարածք, որ ոչ մէկ տրամադրամակալ եւ առարկայակալ նիւմտութեալ ունի ներկայիս. Ուայման հիմնադրուած չեն գիտապիտ եւ այլ յարաբերումները, որ իրենք յետամնացները տալիս են իրենց հասարակարգերիմ...

Այսպիսով՝ յետամնաց եւ թոյլ երկիրներէ զաղքենի դասակարգը հարկադիր է տուրք տալ շատ ուժեղի եւ կրճատել իր իրաւունքներն ու շահերը:

Ինչպէս տուեց վերը, միայն Համայնաբար Ձինաստանն է, որ յարտերականորէն աւելի ուժեղ լինելով, քան յետամնացները, յարձակողական զաղաքականութիւն է վարում միջազգային փոխ-յարտերութիւններէ մէջ:

Եւ այն՝ ինչոր Համայնաբար Ձինաստանն է անում այսօր, միշտ արեւ են զօրաւորները համաշխարհում: Նոքա՝ մեծերը՝ խուսափելու համար իրենց ներքին դժուարութիւններէ, միշտ դիմել են արտաքին յարձակումների, որոպէսզի դասակարգային կռիւը վերածեն ազգային-հայրենական պատերազմի եւ ճշուած դասակարգերի թշնամանքը ուղղեն դրսեցիներին, իրենք իրենց ազատելով անմիջական վտանգներէ: Մինչ թոյլ եւ յետամնաց երկիրներէ իշխող դասակարգերը՝ այս գէպքում զաղքենիները, ստիպուած են անձնատուր լինել զօրեղներին, որպէսզի կարենայ յարտակել իրենց զոյւթները:

Վերը նշուած պատճառներով, Աւֆիլարիզմը մեր ժամանակներում եւ յետամնաց երկիրներում տեղի է ունենում ոչ այնպէս, ինչպէս տեղի էր ունենում անցեալ դարում եւ այժմու յառաջընթաց երկիրներում (*):

Արդ, բոլոր այն դասակարգերը, որոնց մասին յիշատակութիւն տրուեց վերը, առանձին կամ շահակցութեամբը մէկ կամ մի քանի այլ դասակարգերի, Աւֆիլարիզմի շրջանում եւ նրանից յետոյ, ձգտում են տիրանալ իրենց երկիրներէ զաղաքական իշխանութիւններին: Եւ այդ նպատակի համար, այդ դասա-

կարգերը նախ պարտաւոր են հարուկ նստել արտաքին գործօնների հետ, կրուել կամ հասկացողութեան զալ ներքին բազմազան գործօնների հետ, միով քանի, վարել դասակարգային զարտուղի զաղաքականութիւն եւ պայքար:

Տրամաբանօրէն, մտաւորականութիւնը, յետամնաց երկիրներում, ուղեկցում եւ զործում է առգոյ դասակարգերին, - քանի որ հենց այդ դասակարգերի արզանդեց է ծնուել: Եւ այդ մտաւորականութիւնն միատարր չէ, աղքատային յատկորոշ դիմադիմ չունի, զաղափարական չէ, սկզբունքային չէ, խնդիրներին եւ կրկնօրէններին մօտենում է մակերեսայնօրէն եւ հետամուտ է հանդուստակու կենցաղ վարել, փայլուն գիւղքեր պրակել եւ հեշտօրէն համբաւ շինել: . .

Յետամնաց երկիրներում, թէկուզ էլ Աւֆիլարիզմիցիւր թերւում, ազդասիրութիւնն ու հայրենասիրութիւնը թօթափում են կրօնի ազդեցութիւնը եւ դարերի թմբիւր, եւ սակայն բնաւ նման չեն 19-րդ դարու Ալթրանացիոնալիզմին եւ շովինիզմին:

Մերօրեայ յետամնաց երկիրներում ազգայնականութեան գէժ ծառայել է միջազգայնականութիւնը եւ անգամ համաշխարհայնութիւնը. իսկ յառաջագէժ եւ զարգացեալ տարրերի մէջ, տիրում է Աւֆիլարիզմիցիւր:

Ու հետեւանքն այս իրերապիմակի, յետամնաց երկիրներում տիրակալողը խառնակ ու անկայուն պոյալիճակն է, որ իր կնիքն է դրել հանրային կեանքի բոլոր բնագաւառների վրայ:

Ուշագրաւ եւ միեւնոյն ժամանակ մոլորեցուցիչ է նաեւ այն պատկերացումը, որ յետամնաց երկիրներէ մտաւորականները ունեն իրենց երկիրների եւ համաշխարհային արդի ուժերի մասին, և բնականօրէն ձգտում են իրենց պատկերացումները պարտադրել զանգուածներին:

Յրբեք չպիտի մոռնալ եւ անտեսել այն ցցուն ճամբատութիւնը, որ Բ. աշխարհամարտից մինչեւ մեր օրերը, շուրջ յիսուն (50) պետական հարուածներ եւ

(*) Թեւ սեփուրէրը ունի քանակական տարբերութիւններ քրիստոնէոյ եւ մահմետական երկիրներում, եւ սակայն քստ էւրօքսմ մոյնն է նպատակը եւ արդիւնքը: Այստեւնեւայնի, երբ ռուսներու է մահմետական երկիրների ինքնավիճակը, անհրաժեշտ է ցկատի առնել վերը յիշուած քանակական տարբերութիւնները:

յիտուն էլ տեղական ու սահմանափակ պատերազմներ են տեղի ունեցել, որոնց մէջ մասը դեռ շարունակուում է: Եւ այդ պետական հարուածներէ ու պատերազմներէ հետեւանքները հրապարակի վրայ են այժմ...

Այն ուժերը, որոնք առաջ են բերել յիշուած պետական հարուածներն ու ռազմերը յետամնաց եւ թողլ երկիրներում, ճգնել են միշտ, որ պարտադրեն իրենց տեսակէտները, գաղափարները եւ վարդապետութիւնները: Ու յետամնաց երկիրներէ մտաւորականները, մերթ զմերթ սակցաբար եւ մերթ սնդիտակցօրէն, իւրացրել են ամէն կարգի զօրեղներէ պարտադրած տեսակէտները ու սկսել են տարածել ու զարդել դրանք. որով՝ ազգային ու ճշմարիտ մտածելակերպը եւ մտածողութիւնը շեղուել ու յետադիմել է թողլ երկիրներում:

Յետամնաց երկիրներէ մտաւորականութեան ունեցած պատկերացումը, իրենց եւ զօրեղներէ մասին ո՛չ միայն ճշգրիտ չէ, այլեւ մոլորեցնող է զանազաններէ համար:

Եւ մտաւորականութեան հետ միատեղ, մոլորուել են նոյնիսկ յետամնաց երկիրներէ երիտասարդութիւնը, զըպրոցական աշակերտութիւնը եւ պատանկութիւնը. նրանք փոխանակ հետեւելու լուրջ եւ կարգիմալ խնդիրներէ, վազում են սեռային ցանկութիւններէ, հեշտանքի եւ այլ մոլութիւններէ ետեւից...

Այս բոլորով անդէրձ, ժամանակը յարաշարժ առաջ է թաւալուում ու նոր պայմանները նորանոր հարցեր են դնում երկիրներէ եւ ժողովուրդներէ առջեւ:

Այժմ, աւէիւլարիզմը, յետամնաց երկիրներում, սեղանի վրայ է եւ դանում է կարեւոր օրակարգերի գլխավերում: Ու այդ բերումով, մենք թուարկում ենք ա՛յն հարցերն ու խնդիրները, որոնք գրուել են ներկայիս, յետամնաց ու թերաճ երկիրներէ դիմաց: Այն յոյսն ենք փայտայում, որ իրաւ մտաւորականները պիտի գրադուեն դրանցով եւ լուսարա-

նեն պիտի յետամնաց աշխարհի մոլորեալ զանգուածներին...

1.- Աւէիւլարիզմի բերումով, մինչ այս ի՞նչ ճանապարհով են ընթացել յետամնաց երկիրները եւ ի՞նչ ուղիով պէտք է ընթանան յետ այսու:

2.- Դասակարգային ներհակութիւնները եւ կռիւնները ի՞նչ ընթացքի մէջ են եւ ի՞նչ ընթացքով պէտք է առաջ երթան:

3.- Որպիսի՞ն են համալխարհային փոխ-յարաբերութիւնները՝ թողլերի եւ զօրեղների միջեւ, եւ ինչպէ՞ս պէտք է բարեփոխել:

4.- Յետամնաց երկիրներէ տնտեսութիւնը եւ արդիւնաբերութիւնը, արդեօք պէտք է հիմնել մասնաւոր, հաւաքական, թէ խառն արտադրութեան հիմքի վրայ:

5.- Առողջ եւ զարգացեալ տարրերն եւ ուժերը ի՞նչ վիճակի մէջ են յետամնաց երկիրներում, ու ներկայիս իշխող առողջ տարրերին փոխարինող ուժերի պատրաստութեան համար ինչպիսի՞ միջոցառումներ են հարկաւոր:

6.- Որո՞նք են մարդաշխարհին տիրող ուժերը ներկայիս եւ յետամնաց, թողլ ժողովուրդները ո՞ր ուժի կամ ուժերի եւ ո՞ր շահով կարող են եւ պէտք է գործակցեն:

7.- Ո՞րն է արտադրութեան ներկայի գրութիւնը, եւ ի՞նչ միջոցով կարելի է առաւելագոյն չափերով արդիւնաբերել:

8.- Ինչպիսի՞ն է հարստութեանց եւ եկամուտի բաշխումը ներկայիս եւ ինչպէ՞ս պէտք է կարգաւորել այն:

9.- Յետամնաց երկիրներում ուսման վարդապետութիւնը (զեմլագրասին) ի՞նչ վիճակի մէջ է եւ ինչպէ՞ս պէտք է լինի:

10.- Հասարակական, տնտեսական եւ գիտական հետազօտութիւնները ի՞նչ վիճակի մէջ են յետամնաց երկիրներում, եւ ի՞նչ պէտք է անել որ հեշտ ուղիով ընթանան:

Հ. Խ.



ՀՈՒՆ ԲՈՒՆՏՐԻՍ ՄԷՋ,

Մեր մեծագոյն նահատակ բանաստեղծին՝ Դ. Վարուժանի պայթուցիկ եւ ամէնէն բանաստեղծական խօսքերէն ամէնէն շքեղներէն է, ըստ իս, «Հոգիս բունցքիս մէջ սեղմած» խօսքը, որ անդէմ բայով մը կարմուած է:

Եւ, հիմա, այս խորապէս թելադրիչ եւ պայթուցիկ խօսքին վրայ ձեր միտքը լարեցէք, անոր հետ բազմապատկելով ձեր հոգիին լարումը, որ կարենաք տակաւ բանալ անոր ետին թաքնուած իմաստը, որպէսզի դասն տակաւ հասկընաք, որպէսզի դասն տակաւ կարենաք խորացնել եւ, ըստ այնմ, ընդլայնելու համար անոր տարածայնութիւնը, այսինքն՝ անոր տարածքին համապարփակ սահմանները, որոնք, ըստ երեւոյթին, այնքան ալ անձուկ կը կարծուին:

Չորս բառերէ բաղկացած վերոյիշուալ խօսքը կու գայ մեզ հաղորդակից ընելու բանաստեղծի հոգիին ամբողջական եւ ահազնաութ պոթփկումին, որով Վարուժան իր «Կարմիր Հողը» երկարաշունչ քերթուածը կատարելութեան կը հասցնէ: Վերջնական լրումին:

«Հոգիս բունցքիս մէջ սեղմած»:
Եթէ ճարտարապետական աւարտուն կառոյց մը, իր մէկէ աւելի տարրերովը - քար, կիր, երկաթ, եւ այլն - տարածային է եւ տեւողային է, ապա՝ ուրեմն՝

քերթուած մը, անշուշտ՝ հանճարային փայլատակումով մը բառակերտուած քերթուածը, իր արտայայտած խորունկ մտքերու եւ ջերմ ու համակող զգացումներու հոժութեամբը եւ ներգաշնակութեամբը ոգեզինացնող մթնոլորտովը, շատ աւելի տարածային է եւ նոյնքան ժրն ալ տեւողային: Եթէ ճարտարապետական կոթող մը, իր բովանդակութեանը մէջ՝ իր համաչափ եւ խօսուն ու արտայայտիչ քանդակներովը, կը զրաւէ, կը հմայէ զիտողին աչքերն ու հոգին, ապա՝ ուրեմն՝ քերթուած մը, այս պարագային, «Կարմիր Հողը», բառի եւ ձայնի, մտածումի եւ սպրուժի ճարտարապետութիւն է: Ծարտարապետական աննրբեղէն շքեղութիւն մը, որ զրաւիչ է եւ հմայուն, որուն ամէն մէկ մասնիկը կը թրթռայ, կը խօսի, կը թելադրէ, կ'առնէ կը տանի քեզ, կը վերացնէ միտմանակ եւ ընթերցողը, եւ ունկնդիրը, հաւասարապէս:

Վերոյիշուալ քերթուածին քանալին կրնանք համարել «Հոգիս բունցքիս մէջ սեղմած» խօսքը եւ լոկ անկէ մեկնելով է որ հետզհետէ կը յստականայ բանաստեղծին բուն ըսելիքը: Միտք բանին:

Արդարեւ, Դ. Վարուժանը այն բացառիկ բանաստեղծներէն է, որոնք խորապէս եւ լայնօրէն ճանչցեր են իրենց

ժողովուրդին առհասարակ գեղեցիկ եւ արի առաքինութիւնները, որոնց անշքացումը կամ չբացումը զիրենք շարունակ կը տառապեցնէ, իրենց սիրան ու հոգին կը շարշարէ եւ իրենց միտքը կ'ահարեկէ :

Ահա՛, մշտակայ այդ տառապանքին, այդ տեւական, մղձաւանջային տառապանքին եւ յարատեւ շարշարանքին արդիւնքն է բանաստեղծին պատկերաւոր, լիիմաստ եւ անհունորէն խոր այդ խօսքը. «Հոգիս բռունցքիս մէջ սեղմած» : Փորձեցէք ստեղծել պահը, դուք ձեռքի լուս կամ բարձրաձայն կարդալով կամ արտասանելով ամբողջ քերթուածը : Մանաւանդ՝ վերջին տողը, ուր կ'աւարտի ան : Արդէն, նո՛յն վայրկեանին, դուք ձեր աչքին, դուք ձեր անձին համար կը դառնաք մէկէ աւելի անհատներ, երեք, տասը, յիսուն, հարիւր, հազար... Կը հսկայանաք : Վիթխարի կը դառնաք :

Ի՞նչ է արդէն քերթուածի մը իսկուկան բանաստեղծական շունչը, եթէ ոչ մեզ՝ մերթ՝ ալլափոխողը, ուրիշ անձ մը ընողը, մերթ՝ մեր անձը մեր իսկ անձով հարիւրապատկողը : Հազարապատկողը : «Հոգի», «բռունցք», «սեղմած» :

Երեք բառեր : Ուժ արտայայտող երեք բառեր : Հոգի՝ անկրուծիւն մըն է : Բռունցք՝ սահմանաւոր եւ սակայն անյստակ տարողութիւն : «Սեղմել» բայը թէ՛ քաղցրութիւն փոխանցող է եւ թէ՛

բարկութիւն դրսևորող, նայած թէ ենթական ի՞նչ հոգեվիճակի մը մէջ է :

«Կարմիր Հողը» քերթուածի պարագային, «Հոգիս»ը թէ՛ անկրուծիւն է, թէ անշարի տարողութիւն, որուն մէջ բանաստեղծ Վարուժանին բովանդակ էութիւնը կայ, եւ այդ էութեան մէջ կայ՝ Արարտ եւ Արագած, Արաքս եւ Սեւան, «Հուսաւորչի Կանթիզ» եւ էջմիածին : Տակաւին կան՝ Հայրենիքին լեռներն ու դաշտերը, ձորերն ու ժայռերը : Եւ այս ամբողջին վրայ գումարելով մեր փառանկ առջեւը, կ'ունենանք Վարուժան-մարդը, թէ իբրեւ նիւթեղէն, թէ իբրեւ ոգեղէն, միաժամանակ : Այսինքն՝ բիւրապատկուած մարդ-բանաստեղծը :

Ուրեմն, «Հոգիս»ը, որ դարձեր է անպարազիծ անկրուծիւն մը, կը թուի սեղմուած ըլլալ «բռունցքիս» մէջ, ինչպէս կ'ըսէ բանաստեղծը : Եւ, այսպէս, բռունցքով մը անկրուծիւն մը սեղմուել, պարփակելը՝ միայն բանաստեղծական պատկեր մը չէ, այլ՝ մարդէն անդին բան մը, անպարագանցիկն, գերմարդը՝ եթէ կարելի է ըսել, անշուտ, որ աննիւթական է, որ շունչ է, որ հոգի է, իր առաւելագոյն տոկոսովը :

Արդ, «Հոգիս»ին նման բիւրապատկուած է նաեւ «բռունցքս»ը, որ բանաստեղծին բիւրապատկուած նիւթեղէն գոյութեան ամէնէն բացայայտ նշանն է :



**ՀԱԻԱՔԵՆՔ
ԶԱՐԵՆՑԻ
ԶԵՌԱԳՐԵՐԸ**

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անուն գրականության ինստիտուտը ծրագրել է տպագրության պատրաստել Հայ մեծ բանաստեղծ, Հոկտեմբերեան յեղափոխության երգիչ Եղիշ Զարենցի ստեղծագործությունների մի նոր զիրք, որն ընդգրկելու է բանաստեղծի կեանքի վերջին երեք տարիների (1936-1937) անտիպ էջերը:

Մեծ բանաստեղծի կեանքն ընդհատուեց, ինչպէս ինքն էր գրում, «իր արարչական գործի ճանապարհի կէսին»: Նրա ձեռագրերում մնացին տասնեակ անտիպ պոեմներ ու բանաստեղծություններ՝ գրուած 1936-1937 թթ.: Ուստի աւելի քան ցաւալի է, որ գրուած էջերից շատերը դեռ մեզ չեն հասել: Բացառուած չէ, որ շարենցեան նորայայտ թղթերի մէջ յայտնարբուեն շատ ստեղծագործությունների պակաս թերթիկները, որով եւ կ'ամբողջանայ նրա անտիպ ժառանգութիւնը:

Ճակատագրի բերումով բանաստեղծի ձեռագրերը ցրուել են, եւ մենք շատ դէպքերում չգիտենք, թէ նրանք որտեղ են գտնուում: Բայց հաստատ համոզուած ենք, որ եղիւ են ժարդիկ, որոնք քաղաքացիական բարձր առաքինութեամբ եւ բանաստեղծի հանդէպ ունեցած անհուն սիրոյ մղումով, տարիներ շարունակ պահել ու պահպանել են իրա ձեռագրերը: Կասկած չկայ, որ Զարենցի այդ թերթիկները նրանց համար հարազատ են դարձել, եւ դժուար է բաժանուել դրանցից: Սակայն, այսօր այդ խնդրին պէտք է մօտենալ այն գիտակցութեամբ, որ Զարենցի իւրաքանչիւր մասունքը պատկանում է Հայ ժողովրդին եւ այն իր տիրոջը վերադարձնելը քաղաքացիական սրբազան պարտականութիւն է:

Եղիշ Զարենցի անտիպ էջերի ժողովածուն, որ իջ կազմի Հեղինակի ստեղծագործությունների գիտական հրատարակութեան 7-րդ հատորը, անհնար է իրագործել, քանի դեռ ի մի չեն բերուած նրա բոլոր ձեռագրերը:

Սոր հաւատով գիմում ենք բոլոր այն մարդկանց, որոնք ունեն բանաստեղծի ձեռագրերը ու նրա մասին յուշեր, խնդրելով դրանք ուղարկել Մանուկ Աբեղյանի անուն գրականության ինստիտուտին (Երեւան-15, Կարմիր բանակի թիւ 41), եւ գրականութեան ու արուեստի թանգարանին (Սպանդարեան թիւ 1):

Մ. ԱՅԵՂԵԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
Ե. ԶԱՐԵՆՑԻ ԱՆՈՒԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ



Կղճարներ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ «ԵՐՐՈՐԴ ԱՅԳԱՐԱՑ» Ի ԵՒ «ԹՈՒՂԹ ԻՈՍԻՖ ՍՏԱԼԻՆԻՆ»

Անցեալ տարի լրացաւ Չարենցի հրկերուն վեցհատորեակին ապագրութիւնը: Մեզի տրուած բացատրութեան համաձայն, այս շարքը կազմելու համար՝ խմբագրութիւնը առաջնորդուած էր այն ցանկով, «որ կեանքի վերջին տարիներին կազմել է բանաստեղծը ինքը, մտադրուելով հրատարակել իր երկերը հինգ հատորով»:

Մտադրական կողմը պէտք տեսաւ «հինգը» վեցի վերածելու, իսկ այսօր, ինչպէս կը յայտնէ «ՀԱՄԱԲԵՆՔ Չարենցի ձեռագրերը» խորագրով շրջաբերութեան գրուած դիմացի կոչը՝ կը մտադրէ հատոր մը եւս հրատարակ հանել:

Վստահաբար, բանաստեղծին մտերմութիւնն ու վստահութիւնը վայելած բարեկամները խանդավառութեամբ պիտի ընդառաջեն եղած առաջարկին եւ պիտի շարժեն Դ-րդ հատորը դուրս հանելու համար տալու անի կոչուած մարդոց նուիրական զործը:

Մինչեւ հաս, հաւանօրէն դիւրին ըլլայ ամէն ինչ: Դժուարը, մեր կարծիքով, պիտի սկսի ա՛յն ատեն, երբ մէկտեղուին Չարենցի նշխարները: Խմբագրութիւնը պիտի կրնա՞յ արդեօք յաղթահարել հաւանական դժուարութիւնները եւ ընթերցողին ներկայանալ այն արու կեցուածքով, որ ցուցարեքեց «Դիրք մանապարհի» գործին առիթով:

Տար Աստուած, որ Դ-րդ հատորը լոյս ընծայելէ ետք, ութերորդի մը սպասելու կարիքը չզգացուէր, կարելի ըլլար նոյն կողքին տակ խմբել դրոնէ՛ խմբագրութեան արածագրութեան տակ զտնտեսմաները:

Մենք վերապահութեամբ կը մօտենանք Դ-րդ հատորի ծրագրին ա՛յն պատճառով, որ 1935-1937 թուականներուն, Ստալին-Բերիա-Սրժնիկիձէ արիւնաբերու եռապետութեան քաղաքական հաշիւներուն հետեւանքով՝ մեր երկիրը սպրեցաւ ահուարսափի աննախընթաց միջնուրտ եւ այդ օրերուն Չարենցի յօրինումներուն ամբողջութիւնը դժուար թէ կարելի ըլլայ հրատարակ հանել տայժմ:

Այն օրերուն՝ մարդը դադրած էր մարդ ըլլալէ ու ակամայ վերածուած էր հուսաբական խելագարութեան մասնակից մտանկի մը, որ կ'ապրէր ինքնիրմէ դուրս կեանք մը, լարուած մեքենայի մը պէս, խամանիկի անմիտ դալարումներով: Կասկածամտութիւնը տիրական էր, քրութիւնը՝ պարտականութիւն, զրպարտութիւնը՝ ամէն օր: Եղաւ այնպէս, որ երէկուան բարեկամներէն մէկը յանկարծօրէն թշնամի համարեց միւսը, եղբայրը պէտք չզգաց նզովք կարդալ եղբորը, կինը մատնել ամուսինը, գրող մը ստիպուեցաւ ուրիշ գրողի մը հասցէին հրատարակային յերիւրանքներ հիւ-

ուել։ Եւ այսպէս, Հեղափոխոյ խառնուածքը յանկարծ դարձաւ դազանարարոյ, քծինքը ծայրայեղ չափերու հասաւ, մտնուեցինը՝ աներեւակայելի, մէկ օրէն միւր խորտակուեցան բարոյական հասկացողութիւնները եւ տիրող հոգեկան համառարած մամուլեան մէջ բուսան ամէն կարգի փուշեր, ամէն կարգի թունաւոր բոյսեր եւ արիւնեցիկ եւ թունաւորեցին ողջ երկրին ողջ բնակչութիւնը։

Այդ բոլորին արձագանգները գիտենք որ կան, կ'ենթադրենք որ կան Չարենցի անտիպ երկերուն մէջ, կան եւ դերակատարներուն անունները, նոր փոթորիկին մէջ նոր նկարագիր կազմած երկկուան իր երկրպագունները կան, քսութիւններ քնարերգու քսուներ, որոնք կտոր-կտոր կըսած են Չարենցի այդ օրերուն գրած կտորներուն մէջ եւ այդ հանդամանքն է, որ վերապահ կը դարձնէ մեզ Դ-րդ հատորին ամբողջականութեան հաշտին...

Բայց դուրս գանք վարկածներու այս լարծուն միջավայրէն եւ պահ մը կանչ առնենք Դ-րդ հատորին մէջ ենթադրարար մտնելու սահմանուած երկու ծանօթ «բանաստեղծութիւններու» առջեւ, անոնց՝ որոնք 1946-ին լոյս ընծայուած «Ընտիր էջեր հայ գրականութեան» անուն հատորին մէջ երեւցան առաջին անգամ եւ կը կոչուին «Երրորդ այգաբաց» եւ «Թուղթ իտսիփ Ստալինին»։

Իրենց հոսիմամբ Ստալինին եւ Ստալինեան Սահմանադրութեան կը վերաբերին այդ երկու կտորները եւ պէտք է գրուած ըլլան 1936-1937 տարիներուն, ա՛յն օրերուն, երբ ամէն գրողէ կը պահանջուէր գովերգել Ստալինեան Սահմանադրութիւնը եւ փառաբանել մասնաւորաբար մեր հայրենիքը հարուածող այդ դասին զաժան հեղինակը։

Չարենցի 1935-37 տարիներու բերքը հատորի վերածելու հետամուտ մարդերը տեղ պիտի առն արդեօք այդ օրերէն եկող ու մէ՛կ անգամ միայն սպուած Չարենցի այդ երկու «անտիպներուն»։

Հոս չի կրնար ի դօրու ըլլալ այն վերաբերումը, որ մեծ ցաւագարին պահպանեցին ինքնուրու հոգ կիրարկուեցաւ Հայաստանի ազրող բանաստեղծներուն կողմէ։ Հայաստանի բանաստեղծները կա՛մ բոլորովին հրաժարեցան ստալինեան ներշնչումներէն, կա՛մ անոր անունով արատաւորուած տողերը մաքրաշրջով հիւրընկալեցին իրենց հին կտորները նոր ժողովածուներէն ներս։ Ողջերը դեռ կրնար նման բարեփոխումներ ստրքել իրենց սեփական գործերուն մէջ, բայց գրական անդէր օրէնքը չ'արտօներ, որ նոյնպէս վարին նաեւ նահատակներու գործերուն հետ։ Նահատակներու երկերուն դազափարական բովանդակութեան թեր կամ դէ՛մ կրնանք ըլլալ, ասիկա մ'ը իրուաւունքն է, մեղի իրաւունք տրուած չէ սակայն կամայական յարգարանքներ ընել անոնց մէջ։

Արդ, Չարենցի այդ օրերու գործերը հատորի մը մէջ ամփոփելու աշխատանքին լծուած անձերը ի՞նչ վերաբերում ցոյց պիտի տան արդեօք ստալինեան լունչով յօրինուած այդ երկու կտորներուն, տեղ պիտի արուի՞ր «Երրորդ այգաբաց»-ին եւ «Իտսիփ Ստալինին», բաւարարող ծանօթագրութիւններ պիտի ընկերացուի՞ն անոնց, թէ... թէ ի՞նչ։

Դ-րդ հատորին մէջ կը սպասուի առնուագն, որ տեղ մը խօսուի այդ մասին, տրուի՛ հանրութիւնը լուսարանող համոզիչ բացատրութիւն մը, որովհետեւ կասկած կայ, հիմնաւոր ու յամառ կասկած մը, թէ այդ երկու կտորները իր, Չարենցի գրչին չեն պատկանիր, զանոնք թխած եւ «Ընտիր էջեր»-ուն մէջ Չարենցի հաշտին տեղաւորած են ուրիշներ, իմբարբութեան անդամներէն մէկն ու մէկը, ասոնցմէ պերադառ ուրիշ ու՛մ մը

գուցէ, նոր հաշիւներու հիմամբ դադանօրէն հրահանդ ստացած ունէ կա-
մակատար, ո՞վ գիտէ, պէ՛տք է պարզուի սակայն մեծ շահեկանութիւն
ներկայացնող այս առեղծուածը:

Քիչ անգին, մեր ՅՂ եւ ԴԶ-րդ էջերուն վրայ արուած են խնդրոյ ա-
ռարկայ այդ ոտանաւորները: Արդարեւ, պիտի բաւէր կարգալ վերջինին
ձօնը միայն, կասկածելու համար, որ Չարեկցի հետ շառնչուող իրապէս
խախտութեան մը կայ հոս: Ստալինի եւ Ստալինեան Սահմանադրութեան
օգտին այդ օրերուն գործուած ցոյց ունէ դրչակի կարելի է պտաշանցնել
այդ ստրկահաճութիւնը, բայց Չարեկցի նման տկարութիւններու չէ վար-
ժեցուցած ընթերցողը, ստալինեան կամայականութիւններուն դէմ կանգուն
մնացած մարդու փառք մը կը վայելէ ան եւ հարկ է վերականգնել այդ
փառքը:

Չարեկցի չէր կրնար մեր պատմական հողերը մասնատող Ստալինեան
Սահմանադրութեան մասին նման բաներ գրել, ու չէր կրնար անո՛ր հա-
մար, որ ինք ինք էր, ուրիշ մէկը չէր- ուրիշները, վերէն եկած հրահանգ-
ներու ընդառաջելով ինչե՛ր շարքին ուրիշները այդ պատմական դոկու-
մէնտի մասին: Բերեկք մի քանի սեղմ նմոյշներ հանրայայտ դէմքերու
արտայայտութիւններէն:

Ստալինեան Սահմանադրութեան վաւերացումէն (1966 Դեկտ. 6)
քանի մը օր առաջ, «Սովետական Հայաստան» օրաթերթի 1936 Նոյեմբեր
28-ի թիւին մէջ՝ Ա. Իսահակեան կը յարտաբարէր.

«Ստալինեան Սահմանադրութիւնը քաջալերում է համշխարհային
մարտնչող պրոլետարիատի համար եւ ուժգին հարուած բալըր երկրներին
բարձրագոյնը եւ փաշտոններին: Դրանով անլի խորամու՛մ է եւ հաս-
տատում լեմինեան-ստալինեան ազգային քաղաքականութիւնը»:

Նոր օրը, նոյն Սահմանադրութիւնը «Անցիմ քսկզէն գիրք» կը
հաշակէր Դ. Դեմիրճեան, իսկ չորս ամիս ետք, «Սովետական Հայաստա-
ն»-ի 1937 Մարտ 3-ին մէջ՝ «Վարդանանք»-ի հեղինակը կը գրէր.

«Ինքը պիտի կեանքի պայքարով այս դոկումէնտը մեմք կը պաննիմ
մեր աշխի լոյսի պէս, այն բալըր տրոցկիստական-հայրնալիստական քրի-
կաների՝ մեր ժողովրդի թշնամիների ռոմագութիւններէց, որոնք փորձում
էին ու կը փորձեն փաշխովի տնօրինութեանը յանձնել մեր երկիրն ու ժո-
ղովուրդը»:

Կային եւ Իսահակեանէն ու Դեմիրճեանէն քանի մը աստիճան անլի
ոգեւորուածները, որոնց շարքին, բնական է, ամէնէն անլի. գրողացողը
պիտի ըլլար եւ եղաւ Ն. Չարեանը, որ նոր թեւ ու թոխք առած կը թե-
ւածէր սա բռներով.

«Ստալինեան Սահմանադրութիւնը ինձ նոր բեւեր ու թոխք տուց, եւ
ես անլի մեծ զգեւորութեամբ եմ աշխատում այն ընդարձակ պոմի
վրայ, որ նուիրուած է մեծ Ստալինին: Այդ պոմը ես դարձրիմ եմ իմ
կեանքի իմաստն ու նպատակը»:

Բացառելով անգամ Դեմիրճեանի խղճատա՛նքը վրդոված
«տրոցկիստական-հայրնալիստական սրիկաներ»ը, այսինքն՝ 1936 Սեպ-
տեմբերին գրողներու միութեանէն իբրեւ «հացիոնալիստ-տրոցկիստ հակա-
յեղափոխականներ» դատարուած եւ հուսկ ապա իբր այդ ձերբակալուած
Ֆակունցը, Մահարին, Նորեկցի, Քոթովենցը, Ալազանը, Դրաստատոտ
Սիմոնեանն ու Վանանդեպին, միւսները, ամէնքն ալ, արձակ կամ լարա-
նոյ զեղումներով յայտնեցին իրենց կարծիքները Ստալինեան Սահմանա-

զբուժեան մասին: Բերանը կուղւոյ պահեց բացառաբար մէկ հոգի միայն՝ Զարենցը, որ դեռ ձերբակալուած չէր այդ օրերուն, Ֆիզիքական շրջաններէ զերծ էր, զերծ մնաց առնուազն մինչեւ 1937 Ապրիլ 16:

Այդ թուականին կայացած գրողներու կուսակցական կազմակերպութեան ժողովին ներկայ եղաւ եւ Կիրպոտինը, որ թոյլ տրուած սխալներու համար խստօրէն կշտամբելէ ետք Ա. Իսահակեանն ու Զարենցը, առաջինին թելադրեց «իրերին նայել խորհրդային աշխրոյթ», իսկ միւսին կապակցութեամբ հաստատացուց, թէ՝

«Ուզողներու ուղին Զարենցի համար վակուած չէ»:

Հայաստանի այդ օրերու թերթերուն համաձայն, Իսահակեան, Հետեւեալ օր Դիւզ, սկսաւ «իրերին նայել խորհրդային աշխրոյթ» եւ Գրողներու Միութեան ներկայացուց ընդարձակ նամակ մը, ուր, ի միջի այլոց, կը կարդանք.

«Անշուշտ շատ սխալ կարգ եմ գործած լինել, բայց դրանք վերագրելի են այն հանգամանքին, որ ես հազար շիւտերով հեռու եմ եղել մեր իրականութիւնից եւ հետեւաբար չէի կարող իրագրել լինել:

«Ինձ շատ վիշտ պատճառեց նաեւ մի քանի գրողների ձերբակալութիւնները, որոնց մէջ ունէի անձնական ընկերներ, բայց երբ վերադարձայ Նքեւան եւ հնար եղածի չափ ծանօթացայ իրերի եւ իրադարձութիւններին հետ, տեսայ որ մեր կառավարութիւնը – որին անպայման վստահում եմ – եւ ժողովուրդը ուրիշ կերպ չէին կարող վարուել նրանց հետ: Որովհետեւ նրանք շեղուել են սպիտակ, տրամաբանական նախապահից եւ ընթացել են մի դատապարտելի նախապահով, որ միայն վնաս է քերտում մեր բազմաչարյաբ ժողովրդին»:

Իսահակեան այս ձևով փրկեց իր կաշին, ուղուածը ուղուած՝ ձեռով կրկնելով, ստորագրելով իր «անձնական ընկերներուն» դէմ էլջխանութիւններուն յերիւրած ամբաստանութիւնները:

Զարենց Իսահակեան չէր սահայն: Զարենց արհամարհեց Կիրպոտինի կողմ եւ երբեք չփորձեց օգտուել «ուզողներու ուղի»-ին, ո՛չ իր նախկին ընկերներուն դէմ հղած ամբաստանութիւնները կրկնեց եւ ոչ ալ գիշնցաւ պահանջուած փրկագրի մասին մտածել, երբ Հիւսէլ Ստալինի եւ Ստալինեան սահմանադրութեան հաշտին:

Այդ մասին իր անունին դիմաց արձանագրուած փաստ չկայ, չերեջաւ ո՛րեւէ տեղ, մինչեւ 1946 թուականը, երբ «Ընտիր էջերը հայ գրականութեան» անուն հատորը հրատարակ եկաւ եւ ընթերցողին տրամադրուեցան «Երբորդ լուսաբաց» եւ «Թուրք Իսախի Ստալինին» խորագրերները կրող զոյգ յայտնութիւնները:

«Ընտիր էջեր»-ու խմբագրական կազմի անդամներէն երեքը՝ Ա. Իսահակեան, Ս. Զօրեան եւ Հր. Գրիգորեան մեկնած են անդարձ, միւս երեքը՝ Ն. Զարեան, Ռ. Զարեան եւ Իդ. Թովչեան ողջ են եւ անպայման ծանօթ ջննարկուած հարցին էութեան: Ատոնցմէ, Զարենցի 7-րդ հատորը կազմող անձերէն, ո՛րեւէ մէկէն կը սպասենք, որ յանձնառու ըլլայ լուծել զբուժեան կնիւտ խնդիրը:

Մինչ այդ, պարագայական խորագրի մը տակ ընթերցողին ուղարկուեան կը յանձնենք նոյն երկուքին նուիրուած Վ. Նաւասարդեանի մէկ խորհրդածութիւնը, զոր արտագրած ենք իր «Զարենց» անունը կրող գործէն:

Վ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

ՎՈՍԱԶԻՆ ԱՆԳԱՄ ԼԻՆԵՆՈՎ,...

Մեր խօսքը 1160 մեծազեր էջերից բաղկացած այն հատորի մասին է, որ ճիշտ Համազումարի օրերին, 1946-ին, արդեն տպուկ էր Երևանի մէջ, Հետեւեալ խորագրի տակ՝ «Ընտիր էջեր հայ գրականութեան» (Հնամասն ժամանակներից մինչև մեր օրերը):

Այս հատորը լոյս տեսաւ խմբագրութեամբը Համազումարի նախադաս՝ Ալեքիմ Իսահակեանի, զեկուցարար Հրաչեայ Գրիգորեանի, ու նաև Նայիրի Ջարեանի, Ռուբէն Ջարեանի, Ստեփան Ջօրեանի եւ Էդուարդ Թոփչեանի:

Խորհրդահայ Գրողների 2-րդ Համազումարը բացուեց, ինչպէս ասացինք, 1946 Մեպտ. 25-ին, երբ դրանից երեք օր առաջ, 1946 Մեպտ. 23-ին, մեր յիշատակած հատորը արդէն յանձնուած էր տպագրութեան եւ արդէն տպագրուած էր երկու տպարանների մէջ՝ տպագրութեան գործը տրագորին գլուխ ճանելու համար:

Դառնանք այժմ մեր բուն խօսքին:

Հատորի մէջ, առանց գոգոզողական ստեղծագործութեան ընդարձակ - եւ անհուն - բաժինը նկատի առնելու, շուրջ 1000 էջ նուիրուած է 131 անունների: Ջարենցին յատկացուած է 27 էջ (979-1006), շատ աւելի, քան յատկացուած է բազմաթիւ ուղղահասակ առ անբարձր երգիչների, աւելի, քան յատկացուած է մինչև իսկ Յակոբ Յակոբեանի, Աւետիք Իսահակեանի, Վահան Տէրեանի, Նայիրի Ջարեանի եւ, ի հարկէ, շատ աւելի, քան յատկացուած է ամէն կարգի Գէորդ Արոյ-Մարտիների:

Ասացինք, որ մենք պատերազմի յաղթական վախճանին Բոլշեւիկը որոշած էր տէր կանգնել գրական ժառանգութեանը այն երգիչների, որոնց նախապէս սրածած էր. այս անարգ նահանջը նա չէր կատարի, ի հարկէ, եթէ երբեք սրածումից յետոյ լոյս աշխարհ գային սրածումներից աւելի փայլուն տաղանդներ. չեղաւ սակայն. Բոլշեւիկի ստեղծագործ արզանդը մնաց ամուլ. նոր Մայակովսկիներ ու Ջարենցիներ լոյս աշխարհ չեկան. եւ այդ պատճառով կոմկուսը որոշեց սրածումների տաղանդը պատուանդան ծառայեցնել իրեն:

Այս գործը մասնաւորաբար Ջարենցի նկատմամբ չափազանց դժուար էր սակայն. Ջարենցը անտեսած էր Ստալինին, իր երգերի մէջ ուրացած էր նրան, պայտարած էր նրա դէմ. Այս Ջարենցին կեանքի վերականգնել:

մեծարելու խնկարկել, նրա մէջ Բոլշևիկի երգիչը տեսնել - ի սպառ անկարելի բան էր. այսքան բարոյական քաջութիւն եւ այսքան քաղաքական յանդգնութիւն Բոլշևիկի ունեցած չէր երբեք:

Այլ է, օրինակ, Մայակովսկիի պարագան. հռչակաւոր երգիչը 1930 Ապրիլ 14-ին, խորհրդաւոր պայմանների տակ, «անձնասպանութիւն» գործեց. գժուար է ստոյգ ասել, ապանեցի՞նք արդեօք, թէ՞ հարկադրեցին, որ ինք իրեն սպանի. ստոյգ է սակայն որ Մայակովսկու զերեզման գրին էրբի «տրոցիկիստ»ի եւ ուրացումի ու լուսթեան շիրմափոսի մէջ նրան թաղեցին. եւ այսօր, երբ խորհրդային մամուլը կրկին փառաբանում է հին ու մոռցուած երգչին, երբ նրա մահուան 20-ամեակի առիթով պաշտօնաթերթերը յատուկ թուեր են նուիրում նրան («Պրավդա»՝ 14 Ապրիլ 1950, «Երգչուհի»՝ 14 Ապրիլ 1950, «Լիտերատուրնայա Գազետա»՝ 12 եւ 15 Ապրիլ 1950 եւայլն) այսպէս են անում, որովհետեւ նոյն թուերով հրատարակութեան տրուած Մայակովսկիի երգերում փառաբանում է Ստալինը, Ռոմմենտեւ նոյն թուերի էջերից իրեն փառաբանող Մայակովսկու հասցէին էր հերթին վկայում է Ստալինը, - «Մայակովսկին էր եւ մնում է լուսագոյն, ամենէն տաղանդաւոր պոետը խորհրդային դարաշրջանի»: (*)

Հիմնովին տարբեր է Չարենցի պարագան. Նայիրեան Աշխարհի հզօր երգիչը իր բովանդակ ստեղծագործութեան մէջ չունի Ստալինին նուիրում փառաբանանքի ոչ իսկ մէկ տող, ոչ իսկ մէկ բառ. միայն մէկ անդամ, ինչպէս իր տեղում մատնանշեցինք արդէն, նա աննկատ յիշատակում է նրա անունը: Այս է ամբողջը:

Սակայն Բոլշևիկի ընկրկել չէիտէ. երբ նա մի բան նպակադրած է անել, նա այդ կարող է անել, որովհետեւ այդ նպատակին տանող բոլոր ճանապարհները արամադրելի են իրեն. Օրմանեանը պիտի ասէր՝ «կամենալ - կարեանալ բնի է». այս խօսքը ամբողջութեամբ ճիշդ է Բոլշևիկի մի նկատմամբ, երբ նա մի բան կամենում է անել անպայտպմ գոհի նրկատմամբ:

Որովհետև տիրանալ Չարենցի գրական ժառանգութեան, բայց արգելք տեսնելով այն բանի մէջ, որ բանաստեղծը լուր կերպով հովատարալինեան է, Բոլշևիկի նրան դարձրել է խոսուն կերպով ստալինեան:

Իր բարբին ու հռչակին վայել «քաջութեամբ» Բոլշևիկի այս նպատակին հասած է՝ անարգօրէն սրբապղծելով բանաստեղծի հոգին եւ խաղախելով նրա գրիչը:

Դասանք փաստերին:

«Ղնտիւր էջեր հայ գրականութեան» ծաւալուն հատորի մէջ առաջին անգամը լինելով, խորհրդային Ի. խանութիւնը հրատարակութեան տուած է Չարենցի գրական ժառանգութեանից երկու անծանօթ կտորներ:

Առանց, սակայն, խճապական որեւէ ծանօթութեան, առանց յայտնելու, որ այդ կտորները առաջին անգամն են հրատարակուում, մի հանրապարտալիր նախազգուշացում, որ Բոլշևիկի, ուրիշ նման գէպերում, երբ այդ ձեռնառու է իրեն, կատարում է ամենայն բժանդրութեամբ: Այս

(*) Ուշագրաւ է, մտեաւաբար, Մայակովսկիի նուիրում Մոսկուայի «Լիտերատուրնայա Գազետայի» 1948 ձևիւ. 1-ի բիւր, սրին այստեղ, դժբախտաբար, անկարող եմք անգրադատմալ:

անգամ այդ ծանօթութիւնը չկայ՝ գործուած խարդախութիւնը, որքան
հար է, հանրութեան տեսանկիւն չշարժենելու համար:
Ստորեւ նոյնութեամբ տանք այդ կտորներէն առաջինը:

ԵՐՐՈՐԻ ԱՅԳԱԲԱՑ

Ժողովուրդները բնատուօն առաջնորդին ևւ ամենամեծ բարեկամին ԻՈՍԻՖ ՍՏԱԼԻՆԻՔ

Նայիրեան պոետից
Ներքոջ նուստագոյն եւ խօսք պոետական
Ռորհրդային Նոր Մահանադրութեան համար:

Ա.

Երեք այգ է ցոլացել հայրենիքի վրայ մեր--
Երեք անմար արշալոյս - սիեզերքի համար ողջ: -
Այգն առաջին... նա շաշեց իրրեւ բոցէ Հոկտեմբեր -
Որ արիւնով նուանեց նոր գոյութեան համար հող:

Բ.

Այգը երկրորդ... դա մեր մեծ զեկավարի պողպատէ
Ձեռքով վառած Այգն էր բորբ՝ որ դաշտերի վրայ նոր
Փռուեց, որպէս յայտերի երջանկութիւն մշտատեւ:
Համայնական երկերի ընդուն բերքով փառաւոր...

Գ.

Այգը երրորդ... Ահա՛ նա: - Բացում է նա ոսկերիզ՝
Նա՛յն հանճարի խորհուրդով՝ ոգիները՝ վրայ մեր...
Այդ - կրկնակի՝ անկաշկունջ խորհրդային ազգերի
Յառնած ոգի՛ն է կոչում աշխատանքի հանճարեղ...

Դ.

Օ՛, մեր հագու, մեր հոգի, մեր արտերի - եւ համայն
Հայրենիքի վրայ մեծ - Այգաբացեր մեր երեք, -
Դուք իրարից էք սերել, նա՛յն Արեւի գուք ամմար
Բռնկումներն էք՝ նրա նամապարհին անեզերք... (*)

Մականդրութից որոշ է, որ այս կտորը Չարենցը գրել է ստալինեան
Մահանադրութեան առիթով, այլ խօսքով՝ գրել է 1936 Դեկտ. 5-ից յե-
տեւ, երբ այդ Մահանադրութիւնը Համառուական Ռորհուրդների Ց-րդ -
ու վերջին - Համագումարի կողմից միանայնաբար ընդունուեց:

(*) «Ընտիր էլեր հայ գրականութեան», 1946, Երևան, էջ՝ 981-982:

Այս պարագան վաւերական լինելու համար՝ հետեւեալ երկու նախադրեալները առկայ եւ անվիճելի պէտք է նկատուի.

ԱՌԱՋԻՆ.— Զարեհը 1936 Գեկտ. 6-ից յետոյ ողջ էր. ազատութեան մէջ էր եւ վայելում էր Իշխանութեանց վստահութիւնը:

ԵՐԿՐՈՐԿ.— Զարեհը ստալինեան Սահմանադրութեան հետ էր եւ ոչ թէ այդ Սահմանադրութեան դէմ էր: աւելի լայն առումով՝ Զարեհը ստալինեան քաղաքականութեան հետ էր Հայկական Հարցում եւ ոչ թէ այդ քաղաքականութեան դէմ էր:

Դատեանք այս երկու կէտերից առաջինին:

Արդ, 1936 Դեկտ. 5-ից յետոյ ո՞ղջ էր արդեօք Զարեհը, եթէ ողջ էր՝ ազատութեան մէջ էր, եթէ ազատութեան մէջ էր՝ վայելում էր արդեօք Իշխանութեանց վստահութիւնը:

Ինչպէս յայտնի է, Համաժողովեանական մեծ սրածուծի սկզբնաւորութիւնը դրուեց Հայաստանում. 1936 Յուլիս 9-ին առաջին դեղսկը պարզուեց Խանջեանի վրայ: Այս դեղսկով պայքարը ստալինականների եւ Խալաստալինականների միջեւ սկսուած էր արդէն: Այս դեղսկը պարպուելուց յետոյ՝ որեւէ բան քողարկել այլեւս կարելի չէր:

Զարեհը հակաստալինականների հետ էր. նա ընդդիմադիրների հետ էր ընդդէմ օրտան Իշխանութեանց. նա այս պայքարին հրապարակով լքած էր 1934-ին, այդ թուականին հրատարակութեան տալով իր «Իրք ձանապարհին». այս պայքարը գնալով ոչ թէ մեղմացած, այլ առաւել սաստկացած էր. վկայութեամբը Հր: Գրեգորեանի՝ այս պայքարը «Առանձնապէս սուր կերպով արտացոլուեց 1935-1937 քաւերին», այսինքն՝ հիշող այն օրերին, երբ աշխարհ պիտի դար ստալինեան Սահմանադրութիւնը. այս օրերին է ահա, որ Զարեհը, վկայութեամբը միշտ նոյն Գրեգորեանի, «Տուրք էր տալիս բուրժուա-ճարտարապետական կոնցրետայիններին», փոխանակ իր տուրքը Ստալինին եւ ստալինեան Սահմանադրութեան տալու:

Զարեհի այս եղբայրակցութիւնը «Փաշիգովի նոզկայի դորձակալներին՝ ամէն զէրքի ու գոյնի Խանջեանների հետ իրեն ատան շնատեց:

Ինչպէս առաջինը, Զարեհը նախազան էր այն Յորեկեանեան Յանձնախմբի, որ Հայաստանի մայրաքաղաքում, Երեւանի մէջ, պիտի սօնակատարէր Պուշկինի մահուան 100-ամեակը:

Պուշկինը մենամարտի մէջ, Պանտեի գնդակով, ընկած էր 1837 Յունուար 29-ին (նոր տոմարով՝ Փետրուար 10-ին):

Ս. Միութիւնը ընդունած լինելով նոր տոմարը՝ Պուշկինի մահուան 100-ամեակը Երեւանում պիտի սօնակատարուէր 1936 Փետր. 10-ին, այսինքն ստալինեան Սահմանադրութեան հռչակումից ընդամէնը 2 ամիս 6 օր վերջ. սակայն այդ ահաւոր օրերին Երեւանը ընչու էր խեղդող սարսափի տակ եւ ընդդիմադիրների արիւնը առատօրէն հոսում էր Չեկայի գնդաններում. Խորհրդային մամուլը այդ յարեիեանի աղքատութեամբ այլուս երբեք չսնդրադարձաւ Զարեհի անուամբ. պոետը այդ յարեիեանին այլուս չկար...

Մեզ պէտք է չփոթանք մասնի այն սրտցա՛ւ շահագրգռութիւնը, որ Ստալինը հանդէս էր բերում Զարեհի ճակատագրի հանդէպ՝ Ստեփան Զօրեանի հետ 1936-ի Յունուարին ունեցած գրոյցի ընթացքին...

Այդ նենգ գրոյցը յղացուած էր Չեկայի գոհերին քնացնելու եւ ընդդիմադիրների շարքերում չփոթ սերմանելու համար:

Այդ օրերին Կոմկուսի երկու թեւերի միջև կեանքի և մահուան կռիւ կար Իշխանութեան շուրջ:

Ստալինեան Սահմանադրութեամբ խորհուրդները դերեղմանելու եւ նախապէս գործող խորհրդային շատ աւելի ազատ ու ժողովրդավար Սահմանադրութիւնը ջնջելով՝ Ստալինը պատրաստուում էր արեան ծովի մէջ խեղդել ամէն ընդդիմադրութիւն, ամէն սոսնձաութիւն իշխանութեան դէմ:

Չարենցի ու Զարեհականների դէմ նիւթած դաւը Ստալինի մեղմոցսն յանցանքներից էր...

1936 Դեկտ. 5-ից յետոյ Զարենցը անկարող էր գրել իր «Ներքու Այգաբաղը», ձօնուած Ստալինին եւ իր Սահմանադրութեան. նա այդ շէ՛րջանին Իշխանութեանց անվստահելին էր. նա այդ օրերին կա՛մ ողջ չէր եւ կա՛մ եթէ ողջ էր՝ մահուան դռնի մէջ իր կեանքի մնացորդն էր մաշուած Չեկայի խաւար նկուղում:

Դառնանք մեր քննութեան ենթակայ Հարցի երկրորդ կէտին:

Զարենցը կարո՞ղ էր միթէ Ստալինի հետ լինել, լինել նրա Սահմանադրութեան հետ ըստ էութեան: Կարո՞ղ էր ընդհանրապէս ստալինեան քաղաքականութեան հետ լինել Հայկական Հարցում:

Երեք «այգաբաղ»ներից առաջինը «Մեծ Հոկտեմբեր»ն է, երկրորդը՝ Ստալինի կոլխոզային հրովարտակն է, որ միջոնաւորներին դէպի մահ առաջնորդեց, իսկ երրորդը՝ նոր Սահմանադրութիւնն է:

Առաջին «այգաբաղ»ը կապուած է ոչ թէ Ստալինի անունին, այլ Լենինի, որի հանդէպ պաշտամունք ունէր պոետը: Բացառաբար Ստալինի անունին կապուած են միւս երկու «այգաբաղ»երը՝ կոլխոզն ու Սահմանադրութիւնը:

1949 Դեկտ. 21-ին Ստալինի ծննդեան 70-ամեակը ողջունելով՝ Համամիութենական Կոմկուսի Կեդր. Կոմիտէն, ի միջի ալտոյ, յայտարարում էր:

«Քո իմաստուն ղեկավարութեանը տակ, ընկ. Ստալին, 1929-ին դիւղում պատմական յեղաշրջում տեղի ունեցաւ, իր հետեւանքներով համակշիռ այն յեղաշրջումին, որ տեղի ունեցաւ 1917-ի Հոկտեմբերին: Համայնավար կուսակցութիւնը մեր երկրի բովանդակ գիւղական տնտեսութիւնը վերակառուցեց կոլխոզային (համայնատնտեսական) հիմունքով եւ այս ձեւով հաշուեյարգարի ենթարկեց կոլալտիւրիւնը (բարունց ունեցող խաւը -- Ն.) իբրեւ դասակարգ: Այս բարեփոխութեամբ խորհրդային գիւղում նոր, ընկերվար կեանք հաստատուեց՝ աշխատանք գիւղացիութիւնը ազատելով ստրկացումից, քայքայումից եւ շքանորութիւնից»:

Ինչպէս տեսնում էք, Համամիութենական Կոմկուսը 1949-ին արձակով ասում է այն, ինչ որ Զարենցը իբրեւ թէ 1936-ին ասել է շափածոյով: Կոմկուսը եւս, հետեւողութեամբ Զարենցի, կոլխոզի մէջ «Մեծ Հոկտեմբեր»ին համակշիռ պատմական յեղաշրջում՝ մի նոր «այգաբաղ» է տեսնում: Մի «այգաբաղ», որ փոռուեց դաշտերի վրայ, ինչպէս որ Զարենցը պիտի ասէր, «որպէս յաղբի երջանկութիւն մշտատեւ»...

Սակայն տարակուսանքները վերստին նախապաշարում են մեզ. «Ղեկավարի ձեռքով վատած այս բորբ այգ»ը իր կենսատու շողերը փռեց Խ.

(*) Ի. Ի. Կապուեւ - «Ի. Վ. Ստալինը + ստեղծել կոլխոզային կարեւորը», 1950 Մոսկուս, էջ՝ 3:

Միութեան - ու նաև Խ. Հայաստանի - դաշտերի վրայ ոչ թէ 1936-ին, այլ 1929-ին. արդ, եթէ Ձարենցը կախարհի մէջ իրաւամբ «Մեծ Հոկտեմբեր» տարողութիւնը ունեցող պատմական յեղաշրջում էր տեսնում, նա ինչո՞ւ միջնու 1936-ը այդ երկրորդ «այգարաց» երթեք շերտից իր հնչեղ քնարի վրայ. նրան սող իսկ շնուիրեց. շնուիրեց ոչ իսկ մէկ քառ:

Ինչո՞ւ առաջին «այգարաց»ը՝ «Մեծ Հոկտեմբեր»ը՝ անթիւ անգամներ երգեց ու օրհներգեց իր քնարի վրայ, մինչ երկրորդ «այգարաց»ի մասին յիշեց միայն... մէկ անգամ, յիշեց շատ ուշ... 1936-ին, երբ ստոյգ յայտնի չէ, թէ այդ թուականին ինք ո՞ղջ էր թէ մեռած, ազատութեան մէջ էր թէ Ձեկայի զնգանում...:

1929-ից մինչև 1936 թուականը երկարող լուսփունք ապացոյց չէր միթէ, որ Ձարենցը դէ՛մ էր կոխողին, դէ՛մ էր Ստալինի կոխողային քաղաքականութեան...:

Արդ, այս դէմը 1936-ին, առյաւէտ լռելուց առաջ, մէկէն ի՞նչպէս կարող էր թիչ դառնալ...:

Դռանակ երրորդ «այգարաց»ին՝ ստալինեան Սահմանադրութեան:

Մոսկուայի եւ Կարսի թուրքախորհրդային դաշինքները - առաջինը ստորագրուած 1921 Մարտ 16-ին, իսկ երկրորդը՝ 1921 Հոկտ. 13-ին - դժտոխային պայմաններ ստեղծած էին մեր հայրենիքի համար:

Հայաստանը յուսահատ պայքար էր սանուտ այս դաշինքների դէմ՝ նրանց պարտադրած ծանր ու խեղդիչ պայմանները փոխելու համար:

Այս պայքարին լծուած էին ամէնէն առաջ ընդդիմադիր համայնաժողովները, բոլոր նրանք, որոնք դէմ էին ստալինեան քաղաքականութեան Հայկական Հարցում:

Մի անուտ վկայ՝ Բ. Բորհանի երկհատոր «Հայաստան»ը՝ ապացոյց է, թէ որքան հիմնաւոր ու խոր էր այս դժգոհանքը խորհրդային քաղաքականութեան հանդէպ, յատկապէս Հայկական դժոժ:

Բոլշևիկզմը տեւաբար փառաբանելով ու շարունակաբար Դաշնակցութիւնը խարանելով մէկտեղ՝ Ձարենցի արիւնտ ճանապարհը բռնած Բորհանը, այնուամենայնիւ, խիզախում էր գրել.

«Հայաստանի խորհրդայնացումից յետոյ հողային առաւելագոյն զիջումները կատարուեցին Թուրքիոյ, Հայաստանի հաշուին, Կարսի մէջ»: (*)

«Աւելի ծանր եւ աւելի աննպաստ խաղաղութիւն քան Կարսին է՝ պատմութեան էջերի վրայ հողի թէ կարելի է գտնել»:

«Կարսի դաշնագիրը ըստ էութեան աննպաստաբար եւ աննպաստապէս խաղաղութիւնն էր Հայաստանի համար»:

«Կարսի դաշնագրի այն յօդուածը, որով նախնական շրջանը կազմուեւ էր մի ինքնավար երկրամաս Ազրբեյջանի հովանաւորութեան տակ, լրացնում էր Հայաստանի աննպաստութիւնը Թուրքիոյ առջեւ...»:

«Կարսի դաշնագրով Հայաստանը ծախու դրանց խորհուրդների արեւելեան քաղաքականութեան մտնապարհին՝ ի շահ համաշխարհային յեղափոխութեան»:

Բորհանը շարունակ Կարս է ասում, որովհետեւ այս վերջինը կըրկ-

(*) Բ. Բորհան - «Հայաստան (Միջագային դիմադրութիւնը եւ Կ. Միւսթուլի»), Կ. Բ., 1928, Մոսկուա, էջ՝ 285:

նութիւնն է Մոսկուայի դաշնադրի, բայց միայն Հայաստանի համար աւելի աննպաստ ձեւով (առանձնաբար նախիջնական հարցում) :

Յիշատակուած քաղաքացիների շարանը կարելի է անվերջ երկարել : Բորեանը առանձին չէր, մեծ էր Բորեանների թիւը Հայաստանում : Հայրենի երկրի յօշոտումը տեսնելով՝ նրանք յայտնապէս ճակատ յարդարած էին թէ՛ անձնապէս Ստալինի եւ թէ՛ ընդհանրապէս ստալինեան քաղաքականութեան դէմ :

Ու երբ դուռեր ապէս, տպաչիթ թղթի վրայ, նրանց բողոքը այդ չափերին էր հասնում, այլևս խորհել պէտք է թէ ի՞նչ չափերի էր հասնում այդ բողոքը մտերմիկ հանդիպումների ժամանակ, բերանացի խօսքի մէջ . . .

Հայաստանի մէջ միւս այն ազօտ յոյսը կար, թէ կարելի պիտի լինի վերաքննութիւն կատարել Մոսկուայի եւ Կարսի դաշինքների պայմանների վրայ :

Ստալինեան Սահմանադրութիւնը եկաւ ջուր մաղիլու այդ բոլոր յոյսերի վրայ . . .

Այդ Սահմանադրութիւնը եկաւ հանդիսաւորապէս վկայելու, թէ Մոսկուայի եւ Կարսի դաշինքներով Հայաստանին պարտադրուած պայմանները անփոփոխելի են, վերջնական ու անվերաճնելի :

- Պէտք չէ խորհել, - անհրաժեշտ էր դատում Սահմանադրութեան հոչակունտի անմիջապէս յետոյ յատուկ ճառի մէջ յիշեցնել Ստալին, - քէ Սահմանադրութեանը գծուած հազային սահմանները կարող են փոխուել . . .

Այդ, ա՛յս Սահմանադրութիւնը ինչո՞ւ պիտի փառաբանէր Չարենց . . .

Ա՛յս Սահմանադրութեան մէջ նա ինչո՞ւ «այգաբաց» պիտի տեսնէր իր անիրաւուած, դաւուած ու ծախուած հայրենիքի համար . . .

Մինչեւ Սահմանադրութիւնը, երբ դեռ որոշ յոյսեր կային - Թո՛ղ թէ խախտու, ոչ-հիմնաւոր -, թէ կարելի պիտի լինի գէթ մի չափով մեղմել հայրենի երկրին վիճակուած դատնագոյն ճակատագիրը, պոետը կտակում էր այդ երկրին՝ «Հա՛յ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւատակամ ուժի մէջ է» . արդ, Սահմանադրութիւնից յետոյ, երբ այդ ազօտ յոյսերն իսկ մարած էին ընդմիջտ, պոետը այդ «փրկութիւն»-ը ինչո՞ւ պիտի տեսնէր իր յոյսերը մարող Սահմանադրութեան մէջ . . .

Ո՞ւր է տրամաբանութիւնը այստեղ :

«Ընտիր Էջեր»-ի մէջ, առանց ամիս եւ օր նշանակելու, Յմբադրութիւնը Չարենցի ծննդեան եւ մահուան, համար նշանակել է հետեւեալ թուականները՝ 1897-1937 :

Ասացինք, որ Սահմանադրութիւնը վերջնապէս ընդունուել է 1938 Դեկտ. 5-ին. այս նշանակում է, որ պոետը, մեռած լինելով 1937-ին (տարբարախտաբար, մատնանշուած չէ ամիսը), կարող էր մի շնորհալի բան գրել, եթէ երբեք «Մեծ Հոկտեմբեր»ին համակչին «այգաբաց» նստած է Սահմանադրութեան մէջ. ինչո՞ւ այդ երգը չկայ. ինչո՞ւ միայն «Յրի՛ք այգաբաց» խորագրով մի եղկելի թոթովանք մնացած է իրենից, մի երգ, որ ձեւով ու խորքով վայել է «նոտանաւոր» եղծող ամէն թշուառականի, սակայն երբեք Չարենցին, երբե՛ք Նայիրեան երկրի հօրը քունանին . . .

Դառնանք «Ընտիր Էջեր»ում տեղ դառած երկրորդ կտորին :

Ահա այդ կտորը :

Նոյնութեամբ պահուած ենք տպագրական այն ձեւը, որով այդ կը-
տորը լոյս տեսած է յիշատակուած հաստրում:

Թ Ո Ւ Ղ Թ
Ի Ո Ս Ի Ֆ Ս Տ Ա Լ Ի Ն Ի Ն

(հատուած անուարտ պետմից)
Ընդլոյսնեայ համայն աշխարհում -
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻԱԿ ԱՌԱՋՆՈՐԴ - ԲԱՐԵԿԱՄԻՆ -
Իմ հազարամեայ ժողովրդին՝ նրա ամենադժնի չարչարանաց
և փորձուքեան օրերին
ԳԱԼԻԹ ՎԵՐԱՇՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԲԱԻԸ ԱԻԵՏՈՒԻՆ, -
Լեմինեան հանճարով հաստուած
ԱՆԿԱՍԱԿԱՐԳ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՆ ԵՒ ԱՊԱԳԱՆ
ԿԵՐՏՈՂ ԻՄԱՍՏՈՒՆ ՃԱՐՏԱՐԱԳԷՏԻՆ, -
Եւ ի վերջոյ ամենայնի -
Պանտական խօսքի տարօրինակ վարպետներին
Ամենամեծ հովանաւորին և սկըռզին, -

Ե Ղ Ի Շ Է Զ Ա Ր Ե Ն Յ Ի Յ

Նուաստագոյն պատից ժողովրդի նախրական
Anno Domini MCMXXXVI

Ա.

Ո Ւ Ղ Ե Ր Զ

Իբրև Նայիրեան երկրի բանաստեղծ Որ՝ հպարտ իրեն յղած հաւատով, Եւ սնուած միայն անարատ կաթով Իր ժողովրդի կ'ը դժբախտ, կ'ը մեծ, -	Օրերին դժնի, - խինդն անարգել, Նրբ խնդում բնդաց երկիրն իր երգից, -
Իբրև Նայիրեան աշխարհի պանտ, Որ դեռ չի լսել իր ժողովրդից Խօսք կշտամբանքի, - որ, իբրև որդի, Հաշտ է ոգեւին եղել նրա հետ, -	Իբրև հնամեայ աշխարհի գուսան, Որ առաջինն է աւետի կեանքում Իր ժողովրդի գարթօնքը խնդում, Նրբ նո՛ր էր ծագել այգը հիւսիսեան, -
Իբրև Նայիրեան աշխարհի երգիչ, Որ տառազանքն է իր երկրի երգել	Եւ իբրև նուաստ քերթող վերջապէս Եւ նուաստ քարգումն իր ժողովրդի Դարեղով խոցուած հանճարեղ որդի, Որ ծծում է արդ խինդը կենսարեք

Լեմնեման հրով եւ ձեռքով քա պիրկ
Յաւիտեան վառուած այս արեգակի,
Որի լուսացայտ շողերի տակին
Կեանքի եմք կոչում ե՛ւ կորով, ե՛ւ կիրք: -

Իմ ժողովրդի անունից անա-
Որ քա զառուարին ելած ընդառայ
Կերտում է արդէն իր բազմաշառայ
Երբք՝ աշխարհում իր արեւանում, -

Իրբու հայրենի երկրի երգախօս՝
Դիմում եմ երկրիս անունից անա -
Քե՛զ, ստեղծագործ մարդկութեան վահա՛ն,
Քե՛զ, հալածական ազգերի փառոս, -

Ես քեզ եմ հայցում իստով այս հանձ...
Ժողովուրդների բարեկամ ու հայր, -
Ղեկավար անկոր, դառուար արդար, -
Ես քեզ եմ հայցում իստով այս հանձ...-

Դիմում եմ քեզ, ո՛վ Առաջնորդ մեծ,
Որ առաջի՛նքը օրերում դժնի
Յղեցիր պատգամ ե՛ւ վեհ, ե՛ւ ազնիւ՝
Պատգամ, որ անդարձ կորըստից փրկեց

Դիմում է անա ուղերձով հուսաս
Ժողովուրդների պողպատեայ մարզան
Նայիրեան երկրի բանաստեղծն արքուն՝
Ո՛չ իրբու միջնորդ, այլ պոետ լուկ արար, -

Իմ երկիրն ու իմ ժողովուրդն համայն,
Ժողովուրդն իմ այն, որ դարեր բազում
Փրկութեան շողջող ա՛յց էր երազում
Ստեղծագործական իր երթի համար, -

Վառուած բացազայտ ուղերձով իր այս -
Հայրենի երկրի տաղերգուն հուսաս՝
Իր պոետական անազարտ իստով... (*)

Տարակուսանքները վերստին նախապաշարում են մեզ.

- ա. - Ե՞րբ է գրուել այս պոեմը.
- բ. - Ինչո՞ւ ցարդ այս պոեմը չի հրատարակուել, ինչո՞ւ է անծանօթ մնացել.
- գ. - Ինչո՞ւ այս մասին որեւէ ծանօթութիւն չկայ «Ընտիր էջեր»ում.
- դ. - Ինչո՞ւ պոեմը «անաւարտ» է մնացել, ո՞ր է բացատրութիւնը այս խորհրդատու գաղտնիքին:
- ե. - Եթէ Չարենցը այսքան մեծ համարում ունէր «Ինտիմ Ստալին»-ի մասին, ինչո՞ւ այս համարումի հետքը չկայ իր բովանդակ գրական ստեղծագործութեան մէջ. ինչո՞ւ մինչեւ «Թուղթ»-ը Ստալինի հաննարը նա երբեք չտարփողեց իր գնարի վրայ. ինչո՞ւ լուս մնաց մինչեւ իր մահը:

Այս «ինչու»ները իրենց պատասխանը չունեն:

Վ. Ն.

(*) «Ընտիր էջեր հայ գրականութեան», Երևան, 1946, էջ՝ 1004-1006:



« Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն Ք »

(Պ Ե Պ Օ Ս Ի Մ Ո Ն Ե Ա Ն)

Այս Ապրիլին սկիզբները, Հայաստանի գրողներու վարչութեան Երգ լիակատար նիստին, Հայաստանի բանաստեղծութեան արդի խնդիրներուն մասին ընդարձակ զննուցում մը կարգաց բանաստեղծ Գեորգ Կոթի, որ, ի միջի այլոց, մտաք զրուս նաեւ աւերկու վերջերուն վրայ:—

« Ի՞նչ պիտի ըսէք մեր երիտասարդական պոեզիայի համար բնորոշ էին երկու քերպուքիւմ՝ մի կողմից հզօմի, կրկնուածի ինքնաշարժ գնալը եւ ոչ քէ իր շուրջը ձգածը պոեզիայի զարմելը, իսկ միւս կողմից՝ ժամանակակից պոեզիայի մուտքի ու հնարքների մեքենայական կրկնութիւնը: »

Կ'ուզէիք անմիջապէս ըսել, թէ այս արտահանարումը ամբողջութեամբ հիշք է նաեւ Սփիւռքի մէջ կատարուած բանաստեղծական վերջին գործերուն կապակցութեամբ: Վաթնուական թուականներէն ապրիլ, իրիւս բանաստեղծ հանդէս եկող ծորերը կ'ս'մ աչակերտեցան օտարներուն եւ կ'ս'մ ուղղակի արձագանգէին մեր զասականներուն կ'ս'մ Սփիւռքի աւագ սերունդներուն: Եւ ունեցանք մէկ կողմէն չմարտած ու շանհաստեղծացած վիճակներու սեւագրութիւն մը, եւ միւս կողմէն՝ ծանօթ արտերէ բերուած նոյնպէս անշահական հասկացող մը: Ըսել կ'ուզենք այս ակարութիւններէն մէկը կ'ս'մ միւսը յաղթահարած եւ անհաստեղծ թիչ շատ հանգուրձելի տուրքերով օտուած բանաստեղծ մը աչքունելու բարիքը վերջին ասանձեակներուն բնաւ շարունակու ընթերցողին: Զայտնուեցաւ ան՝ որ հասարակ մտկանցուներէն շեղուած նոր քննաներու յայտնութիւնը ընէր, կ'ս'մ ընդգրկուած հաւաքական տաղանդները վերազարմէր հաւաքականութեան բանաստեղծական տարրերով մը, մտածումի, յուզի, պատկերի միանոյլ հարստութեամբ: Աւ մէն ոք գիտէ, թէ առանց անծանօթ գեղեցկութիւն մը յայտնադրելու կ'ս'մ Ծանօթը յարեթական որովով մը օտուելու ստոյգ կարողութեան, բանաստեղծութեան անուսով ներկայացող որեւէ կտոր կ'ս'մ զիրք չի կրնար նուանել ընթերցողին համարումը:

Պէտք Սիմոնեան կը պատկանի երկրորդ խումբին: Իր «Նախնազան»-ին մէջ չկայ հարց մը, որ որեւէ մեղով աչքերս ունենար նորութեան հետ: Բնապատկեր ըլլայ արուածը թէ Հայաստանին ուղղուած ողջոյն, առանձնութեան պէտքը զգայ թէ հաշուարդարէ նստի, սիրային շրջանակներու անձնատուր ըլլայ թէ հայ մարդուն յատկութիւններուն թուումը կատարէ՝ միեւնոյնն է, զբուած բոլոր հարցերը, տաղանդները, հոգեկեանները, բուրբը, բուրբը ծանօթ են բոլորին:

Նիթերուն ներկայացուցած այս հանգամանքը ակարութեան նշան պիտի չհամարուէր անուշա, ԼԹէ անոնք, նիթերը, ընկալուած ըլլային նորագուած իրգերով, որուած ըլլային կենդանացող շունչով մը, ցնցող, կիզող յատկանիշերով, բանաստեղծին գորութիւնը կ'ս'մ ու աւելում: Այս յատկանիշերը հաստատելի չեն «Նախնազան»-ին մէջ, որովհետեւ անոր կը պահի հիմնական բան մը, նոյնիքն բանաստեղծութեանը: Պէտք Սիմոնեան կարծես երեք չէ զգացած անկրկնելիին անհրաժեշտութեանը, ընդհակառակն, ամբողջութեանը սովորական մակարդակներու վրայ մզելու անփութութեանն հոգ՝ զիջած է միեւնոյնն իսկ ուրիշներուն շատ ծանօթ տողերը, զազապարները, պատկերները կրկնել:

Այսպէս, Միմոնեան երբ ինքզինք ըլլալ ուզէ՝ Եղ. Պոյանեանին կը կառնի, երբ հաշուե-
 յարգարի նստի՝ Թէքէեանի ներկայութիւնը անհրաժեշտ կը համարէ, և զեռ մթնշաղկն, եր-
 կինքին, վէրքերուն, հայ մարդուն քնաւորութեան զիծերուն մասին խօսք ըսած պահուն՝
 անպայման իրեն կ'ընկերացնէ Մեծարեմբը, Զաւէն Միւրմէլեանը, Վահէ Վահեանը, քաղ
 Յակոբեանն ու Պարոյր Սեւակը:

Անուասիկ այդ իրողութենէն բխած քանի մը նմոյշ-արձագանքներ:

Իդ. Պոյանեան իր վերջին շաբթի երկարատևնէ կտորներէն մէկուն մէջ կ'ըսէ.

Ըսուած էր քայց մեր հոգիին
 Աստուածակայք տեղէ մերին՝
 «Ն՛յ» ըսել միշտ,
 Մարդու կեանքին մաւք պարսազրոյ
 Ամէ՛ն, ամէ՛ն յուսար ուժի:

Ահա և Պեպօ Միմոնեանի «ՈՒՐ».

Երբոյս մնալ եւ ունկնդիր՝ սրտի ճայնիմ,
 Ոք տիրապաք
 Բանաստեղծի՝
 Զայնն սըլ՝
 Կարծր, մեծղի՛:

Վ. Թէքէեան իր հոշակաւոր «Հաշուեյարգարծ» եղբարփակելով՝ կը կերտէ առ զե-
 ղեցիկ պատկերը.

Ու չեմ ըսեր քի՞նչ մընաց...: Ի՞նչ կը մնայ հոգիմ տակ
 Եղէցմերէն գիրքաքի՛ն, կազմիմերէն հաստարուսն,
 Արեւն ըմպած ըլլալու մըլիթքարանքն անհուն:

Իսկ Պեպօ Միմոնեան հետեւեալ ձևով կը հարուածէ իր «Հաշուեփակի զիւրք»-ը.

Ի՞նչ կը մնայ, քայց ըսէ՛ք կոյունքներու համեղուն,
 Կեանքն ըմբռնեմք ըլլալու պատրա՞նքը լակ միամիտ:

Զաւէն Միւրմէլեան իր «Ընտասարդի աստղին ասկոյ տնուն քերթուածին մէջ ունի
 առ ասքը».

Աստեղագարդ երկիմն է մեծ երգեհոմ մ'արծաթէ,
 Պեպօ Միմոնեան չէ ուզած զրկուիլ նաեւ այդ պատկերէն, այսպէս.
 Երկիմնն այսօր է կարծես երգեհոմ մը հոգեւերգակի,
 Վահէ Վահեան կ'ըսէ՛ «Ճեպէլ Մուսա» խորագրուած իր քերթուածին մէջ.
 Ճեպէլ Մուսա, Ճեպէլ Մուսա... Դուք մոր վերք
 Հիմ վերքերու դեռ միացող ցաւին ձով...

«Նայեք զանձն»-ին մէջ, ի զէ՛մ ճեպէլ Մուսայի յիշատակուած է Սփիւռքը, քայց
 հին ու նոր վէրքերէն ու վէրքերու նկարագրէն բան չէ փոխուած.

Հայաստանի յայիացող, Ի՞նչ վերքերն զարուար,
 Դեռ միացող վերք մըն է խոր, հայակե՛ր

Աւելորդ է ընդգծուած ուրիշ նմոյշներ զնէլ քով քով: Պեպօ Միմոնեանի ասոյց-
 րէն ասոյցանոց ուրիշ զէ՛մքերու հարուածը մեծ եղած է «Նայեք զանձն»-ին, որ, բարե-
 բարետարար, նախերգանք մըն է, բուն երգը չէ: Բուն երգին տունն, սրբելի է յուսուել, որ
 մուսաներու զարգացող ընող այս երեսասարգը յիշեալ տկարութիւնները յաղթահարած
 ներկայանայ ընթերցողին:

Գրելու արարքը հարկ է առանձինն զլուր հանել...

Պ. Ա.



ՄԵԾ - ՎԱՐՊԵՏ ՍՕԼՆԵՍ (ՀԵՆՐԻԲ ԻՓՍԵՆ)

Բնագրութիւն՝ Վ. ԽՏԸՇՍԱՆԻ

Գաղութանայ իրականութեան մէջ, թատերական կեանքով ազրոզ ամենէն բախաւոր քաղաքը անասարկոյս եղաւ մերը, ուր, երեք տասնամեակներէ ի վեր, տարին անուազն երկուերեք Նոր բեկեմեր տեսնելու առիթներ տրուան հասարակութեան:

Դժուարութեան կուրծք ցցած եւ միաժամանակ յամառութիւն ու թատերական արուեստին նայիչ տուող առաջին խումբը եղաւ Համազգայինի Վրաստանի Ինքնիշխան թատերախումբը, որ ամբողջ քսան տարի իր ստեղծուն կրեց հայ թատրոնին խոյն ու պսակը, ծաւալելով ընդարձակ շրջանակներէն մը:

Թատերական շարժումին դարի տուող միւս խումբերուն նպաստը տասնց ուրանալու, պիտի ըսենք, որ քաղաքիս արտիստիկաբար միւս ուժը կողմուն է ըլլալու Վարդան Խորընիսի զըխաւորած Համազգայինի շէնքն Եանթ խումբը, որ հազիւ երկու տարի կ'ընէ հրապարակի վըրայ է, բայց արդէն կը վայելէ թատերասէր հասարակութեան լայն խումբ համակրանքը:

Վեհեան Եանթ իր պատմութիւնը սկսաւ Ար-

թիւր Միլլըրի Վոյլեմի վնակները բեմին բեմադրութեամբ, յետոյ՝ ներկայացուց մէկ արարնոց շորս կտորներ, իսկ այս տարուան Ապրիլի առաջին շաբաթներուն՝ Հէնրիք Բրոսիէ Վեծ վարպետ Սոյնէս անուն թատերախումբը:

Վոյլեմի վնակներու-ան ներկայացուցած կարգ մը պատկերները դեռ անաղտօ կը մնան հանդիսատեսին յիշողութեան մէջ:

Լոյսերու առարկելի գործածութեան անկախ՝ մարդիկ ազրուածով կը յիշեն Վարպետի Երգչին սրտայոյզ ամբողջութիւնը:

Իսկ այդ երկուցին ներկայ եղողներուն վըրայութեամբ՝ Վոյլեմի բեմադրութիւնը կը հանդիսանար հսկայաքայլ յառաջխաղացք մը:

Վարպետի շարժացման հետ, առաջին հերթին աչքի կը զարնէ Ջաւէն Խորընիսի իրազորած բեմական արուեստի հարուստ համադրութիւնը: Խորընիսի, խորհրդանշական՝ գոյնիւրով ու սլացումներով՝ կ'երեւն Սոյնէսի կատարած եկեղեցիներուն ու գմբէթներուն պատկերները, իսկ առաջամասին Մեծ Վարպետին աշխատանքն է, ուր, տարրեր սեղաններու վը-



Հիլտա Վեճկը (Նանիա Զաքրնեան) եւ Սօլմէս (Վարուժան հարշեան)

ըսէ՛ր հակած՝ կ'աշխատին Սօլմէսի օգնական Գրեյնոսթ Գրովիքը (ձօնի Այնեման), Գրովիքի աւուշան՝ զծաղրէ՛լ Ռահմարը (Արա Յովհաննէսեան), Գրովիքի գրով աղջիկը՝ Լաշուպան Գայա Տոսլին (Ձեփիւս Մաճուհեան)։ Քիչ անց, ներս կը մտնէ Սօլմէս (Վարուժան հարշեան) եւ մինչեւ վերջ կը մնայ բնակ միայն, թատերախաղին բուրսը հանդիպանքուն ու լաւութեան ընթացք առողջ իրբն տիրական անձնաւորութիւն։

Կեանքի վերջին տարիներուն, Սօլմէս հաշուարդարի նստան է ինքն իրեն հետ եւ արդիւնքը կապաղութեամբ լեցուցած է Լոպին։ Շինարարական ապարդիւն մէջ շահած Լաճարը բուրսովն փուն կը թուէ իրեն հիմա եւ պատանդանը՝ խախուս։ Եկեղեցիներ կառուցելով՝ ծառայած է Աստուծոյ փառքին, փոխարէնը, սակայն, Աստուած իրան է երկուորեակները իրմէ։ Այս երկու յուսախաբութիւնները նոր անկիւնազարմի մը առջեւ կը դնեն զինք։ Կ'որոշէ բնակարաններ շինել ժարդոց օգտին, բայց հոս եւս բողոքալի արդիւնքին չի համարի։ Բնակարանները երջանկութիւն չեն բերեր ժարդոց, ընդհակառակն, կը խորացնեն իր վրիպակներն զխտուցութիւնը։ Եւ այսպէս, երկինքն է վեր գմբէթ

ըսէ՛ր հակած՝ կ'աշխատին Սօլմէսի օգնական Գրեյնոսթ Գրովիքը (ձօնի Այնեման), Գրովիքի աւուշան՝ զծաղրէ՛լ Ռահմարը (Արա Յովհաննէսեան), Գրովիքի գրով աղջիկը՝ Լաշուպան Գայա Տոսլին (Ձեփիւս Մաճուհեան)։ Քիչ անց, ներս կը մտնէ Սօլմէս (Վարուժան հարշեան) եւ մինչեւ վերջ կը մնայ բնակ միայն, թատերախաղին բուրսը հանդիպանքուն ու լաւութեան ընթացք առողջ իրբն տիրական անձնաւորութիւն։

խոյանցնողը, քննկարաններ կառուցանողը, գա-
լակներու հայրը, այսինքն՝ արուեստագետը,
օգտագործողը եւ անհատ մարդը յաջորդաբար կը
յիշեցնեն իրեն իր պատրանքներուն ստույթիւնը,
յուստիարութիւնը, կործանումը: Սօյնէսի քա-
նը աւելի կը շնչուի, երբ իր տեղը գրտելու
հկող կրօնասարգութեան ուսնամայնը կ'տանէ:
Հօլովուած ժամանակները նոր պահանջներ քե-
րած են իրենց հետ, նոր պահանջներ կրնան
գլուխ հանուիլ նոր կրօնասարգներու նոր յա-
ցակներով: Այս ճշմարտութիւնը աւելի կ'ալի-
կոծէ հոգին, ապշուողը կը բարդանայ, ու ճի՛շտ
արդ պահուի կը յայտնուի շիւտա Վենէնը (Նա-
նիս Չախրնիսի), Սօյնէսի միւս անձը, կրօնա-
օտարութիւնը, բարձունքներու կարծումը այժմոյ
ոգին, որուն մղումով վերակուլու անկը մը կ'ա-
ւանջանայ Սօյնէսի հոգիին, նոր բարձունքներու
է ինչիք նորէն ճամբայ կ'իջէ եւ իր նոր սը-
լացքին մէջ՝ այս անգամ կ'իջնայ թեւաբեկ:

Իր ընդհանուր գիծերուն մէջ՝ այս է Սօյնէ-
սը, Թատերախաղին միւս տիպարները իրենց ան-
փակու ինքնութենէն աւելի՝ Մեն վարպետին
քնաստութեան մէկ կամ միւս գիծը հաստատող
նեղակութիւններ են: Պրոֆէսը դասադասութիւն-
ներու ընդունակ Սօյնէսի մասին կը վկայէ,
Ռակնարը՝ անոր անվերջութեան, Յոսիին՝ խո-
րամանկութեան, Ալին՝ բրտութեան, Հելլանի՝
վերանորոգուելու ընդունակութեան, Ասոնց դան-
դասներուն, ըմբատութիւններուն, կրկնաբանը-
ներուն, անձկութիւններուն ու տենչերուն ընդ-
մէջէն կը կողմուի նեղ, բիրտ, կռակածամիտ,
փոռասեւի, իղճուար, բարձունքներու կարծու
եւ վերջապէս ցեխի եւ լոյսի խառնուրդ: Սօյնէսի
բարը նկարագիրը:

Դիտումներ կը բողով ծանրացանք Սօյնէսի
նկարագրի գիծերուն վրայ, ըսելու համար ան-
միջապէս, որ վարուժան Խորշիան դիւրին գոր-
ծի մը չէր ձեռնարկած: Ոչ կրօնասարգ արուես-
տագէտը սուսնց մեն դժուարութիւններու յազ-
թահարեց ալը դժուարը: Համաձայն նեղ բոլոր
անոնց հետ, որոնք լուս շտպարուեցան անոր
խաղարկութեան մասնակի կողմերէն, յարկա-
պէս արտայայտութեան բարկացալո կերպէն, որ
մայն էր աւելի, Նղային իրական պոռթկումէ
եւ ուժգնութենէ զուրկ ճի՛ւղ, բայց միւս բոլոր
պահներուն, անդադարձումի, յուզումի, ըմբո-
տութեան, մրմունջներու ու լուսիեան վայր:

կեանքներուն՝ խօսքի, կեցուածքի, շարժումներու
բացայայտ շնորհներով՝ Խորշիան եղաւ իր անձ-
նաւորած տիպարը, Սօյնէս մը, որուն շնորհ-
կալութեամբ ծափահարեց Հանգիստանը:

Թատերախաղին կրկնորդ անձնաւորութիւնը
Սօյնէսի կինն էր, կրկու գլուխներուն առաջով
խոցուած Ալինը, ամուսնեան պատճառով կրկին
անկամ խորակուած այն կերպուն կանչը, որուն
սպրտմենքը շնորհալիորէն մարմնաւորեց ճի-
Անեախեան: Իսկ երբորդ անձնաւորութիւնը
Սօյնէսի յարուցեալ կրօնասարգութիւնն էր,
Մեն վարպետին կրկնորդ անձը, Նիլան, է
զգժս որուն Հանգիս հկաւ Նահիս Պաշքեան,
երեսն բերելով իր անձնաւորած տիպարին յա-
սուկ՝ խելացի, յանդուպ, խորհրդաւար, պատ
հանելուտ, մարդը սովորական ճամբաներէ
զուրս բերող բաւականին ուշադուս կարողու-
թիւն մը:

Միւս գերակատարներէն Դանիէլ Մանուկեան
(ընտանիքին քծիլը), Արա Յովհաննէսեան (գը-
ծագրիչ Իսկնար) եւ Ջիգիւս Մանուկեան (ձաղ-
ւապան), Իրանիին իսկ անօրինութեամբ, հաղի
զգալի դարձուցին իրենց ներկայութիւնը:

Տեղի է ըսել, որ ընդհանուրին մօտ ընդհան-
րապէս տիպար էր յանկարծակի պոռթկումներուն
յաջորդող խօսքի ուժգնութիւնը, լուս մշակուած
չէր նոյնպէս արագ խօսելու կարողութիւնը, իսկ
կրթորդ անախորժութիւնը կու գար շանթեան
լեզուէն, որուն անձու ձեւերը պիտք է խնայ-
ւին այլեւս հանդիսատեսին:

Բայց «Մեն վարպետ Սօյնէսը ուշադուս
էր իր ամբողջութեան մէջ, նոր՝ իրեն բնական
յղացում եւ իրազործում: Թատերախաղին ոգին
պատկերացնող Ջուէն Խորշիանի տեղորոշող
պարզապէս շնորհաւորելի էին, իսկ խաղարկու-
թեան ընկերացուցած վարուժան Խորշիանի լոյ-
սի եւ երաժշտութեան զոյգ նպաստները վերին
աստիճան նպաստակալացու – զինմադրիլիմ ձրց-
ստումն է, – կ'ըտէ տեղ մը բնագրիւնը, – միա-
ւորել, շաղախել բոլոր արուեստները՝ լոյս,
գոյն, երաժշտութիւն, խօսք, շարժում ու ձեւ,
անշուշտ կարելի սանձանկարում մէջ:

Մեր կարծիքով, այդ ճամբում մեն չափով
իրազործուեցաւ «Սօյնէս»-ի բնագրութեամբ:

Գ. Ս.

Համազգային քաղաքի վարչության կողմից կազմակերպված հրատառական յանձնախումբը Երասխային Պէրուք հրատեղից միջնադարյան բեմերու վնասուած կրկնուհի Լուիզա Պոզապալեանը, որ 15 Մայիսին, Թեաթրը տնւ Լիպանի մէջ տըւաւ Երասխային կրկնուհի, հովանաւորութեամբ Լիբանանի կրթական եւ գեղարուեստից նախարար Պ. Ժոզէֆ Ապուխաթեանի:

Սրանք լեցուն էր ծայրէ ծայր, հայ եւ արաբ հրատառաներնեցով, որոնք առանձին վալիզով մը ծափահարեցին երասխային աշխարհին մէջ բացահայտելով զերբէր զբաւած կրկնուհին:

Յայտագիրը կազմուած էր Աջարութիւն, Պրահայի, Պէրլիզի, Փարսիլի, Մոցարտի, Վերտի, Կոմիտասի եւ Կանաչեանի սանդղաղորդութիւններէն, որոնք, շնորհիւ Պոզապալեանի հարուստ, սաք ձայնի եւ ուժակուն արուեստին, ունկնդրուցան մեծ հաճոյքով, ծափահարուցան ինչայնչորէն: Տպաւորութիւնը ուժղին կողա յաւկազմ Պարլիզի, Մոցարտի, Վերտի կոմիտասի մեկնարանութեան առն եւ ժանտանը Կոմիտասի հոգ տալանը հարապէս զբաւորող անկրկնիկ Պիտանի ծառայն աւտիթով:

Պոզապալեանի կրկնիկ յաւերջ օրն իսկ, անզբարարմաւ լիբանանեան մամուլը, որուն մէկ վկայութիւնը կու տանք թովի սինակին վրայ:

LE JOUR VENDREDI 16 MAI 1969

LUISA BOSABALIAN AU THEATRE DU LIBAN

Des notes qui ne sont pas "d'argile"

Il a fallu une belle voix, mariée avec infiniment de souplesse et d'intelligence, pour nous reconcilier avec leebel canton. Pour nous faire réaliser, aussi, les singularités et la science de certaines écritures vocales, les audaces de compositeurs réputés anachroniques.

Hier soir, au Théâtre du Liban, «Luisa Bosabalian a tenu la gaigeure... Fastueuse par son timbre chatoyant, touchante par ce regard où dominait l'inquiétude, conciliant admirablement vivacité et concentration, elle a su prouver qu'il existe «des grands» sachant nous empêcher de voir leurs pieds d'argiles.

D'autant que cette exceptionnelle audition nous a fait sentir à quel point un artiste de qualité réussit à parer d'habits de pourpre et de lumière un genre dont nous avons eu souvent à nous plaindre amèrement...

C. GEBEYLI





ՄԻՄՈՆ ՎՐԱՏԵԱՆԻ ՄԱՀԸ


Մեր մերկայ թիւին վերջին պրակը կազմած վերջացուցած էինք, երբ խոր կսկիծով իմացանք Բաղաձական կարկառուն դէմք, հանրային գործիչ եւ բազմաթիւն մտաւարական Միմոն Վրացեանի մահուան լուրը:

Հայոց պատմութեան փոթորկալի մէկ պահում ծնաւ եւ իր սերունդի միւս բնորեալներում պէս փոթորկալի կեանք մը ապրեցաւ Վրացեան, բայց փոթորիկները չընկնեցին զինք, այլ հրահրեցին իր ուժերը, ամրացուցին կամէր, ոգին, կերտեցին իր մէջ բացառիկ անձ մը, որ իր բովանդակ կարողութիւնները ի սպաս դրաւ մեր հայրենիքին, ժողովուրդին, երիտասարդութեան, մշակույթին, վագելով ամէն տեղ, հոն՝ ուր պէտք կար իրեն, տհմելով գիշեր ցերեկ, ամբողջական գոհարեութեամբ:

Գործիչ, խմբագիր, երասարակագիր, պատմագիր, պատգամաւոր, ուսուցիչ, տնօրէն, ճախարար, վարչապետ, գրող, հեղինակ: Ու հրաշքը ա՛յն է, որ ասոնք պարզ տիտղոսներ ու մակդիրներ չեն Վրացեանի անունին դիմաց: Վաստա՛կ ունի բոլոր սոսարեգներում մէջ, հե՛տք ձգած է իր անցած բոլոր ճամբաներում վրայ:

Բազմաթիւ բնդունակութիւններ մշակած, իրենց լրումին հասցուցած անսովոր դէմք մը, որ իր մեծութիւնը յիտնդներում կտակած կը մեկնի աշխարհէն:

Մեր յարգանքով պիտի տանք մեծ հայուն կենսագրականը եւ գրական վաստակէն անձնակի կտոր մը:



A.R.A.R.@

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ՀԱՄԱՊԱՏԿԵՐ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱՆՈՒԹԵԱՆ, Զ. Խառոթ, Յ. Օշական,
Տպ. Համազգային, Պեյրուք, 1969

THE GREAT 4, — Mesrob, Komitas, Antranik, Toramanian (Herminé Dr.
D. Varjabedian), Beirut, 1969.

ԱՐԵՒԸ ՄԱՐ ԶԻ ՄՏՆԵՐ (վեպ), Գուսդի Պ. Միխայելյան, Պեյրուք, 1969
ՄԵՐ ՆԱԻԸ (վեպ), Հրանդ Գանգրունի, Պեյրուք, 1969

ՀԱՐՇԱԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻՔԱՆԱՆ	22	Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	8	ՏՈԼԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ	2	Լ. ՈՍԿԻ



Վարչաբաժնի հասցե

G. SASSOUNI
Rue Sélim Boustani,
Beyrouth-Liban